

**YEREVAN STATE UNIVERSITY  
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES**

**VANIK VIRABYAN**

**THE INTELLIGENCE ACTIVITY OF  
TIGRAN DEVOYANTS**

**YEREVAN  
YEREVAN STATE UNIVERSITY PRESS  
2018**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИНСТИТУТ АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ**

**ВАНИК ВИРАБЯН**

**РАЗВЕДЫВАТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ  
ТИГРАНА ДЕВОЯНЦА**

**ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ  
2018**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԴԵՎՈՅԱՆՑԻ  
ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2018

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

Վ 680

*Հրատարակության է երաշխավորել  
Երևանի պետական համալսարանի  
հայագիտական հետազոտությունների  
ինստիտուտի գիտական խորհուրդը*

Խմբագրական խորհուրդ՝ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ա. Հ. Սիմոնյան (նախագահ), պ.գ.թ. Մ. Ս. Հովհաննիսյան, պ.գ.դ. Վ. Ա. Պողոսյան, պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Գ. Ավետիսյան, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ս. Եղիազարյան, պ.գ.թ. Վ. Գ. Մխիթարյան, պ.գ.թ., դոցենտ Վ. Ս. Պետրոսյան, բ.գ.թ., դոցենտ Հ. Ս. Բայրամյան, բ.գ.թ., դոցենտ Լ. Ս. Սահակյան

Վիրաբյան Վ. Հ.

Վ 680 Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեությունը /Վ. Հ. Վիրաբյան, -Եր., ԵՊՀ հրատ., 2018, 152 էջ +2 ներդիր:

Մենագրությունում հանգամանալից հետազոտման են ենթարկվել 1915 թ. Վան-Մանազկերտի շրջանում ռուսական զորքերի անհիմն և կասկածելի նահանջի պատճառները, քննության է առնվել հայ հետախույզ Տիգրան Դևոյանցի դերակատարումը, միաժամանակ գնահատական է տրվել այդ կապակցությամբ վերջինիս նկատմամբ ՀՅԴ ընդհանուր 9-րդ ժողովի դատաքննական ատյանի կայացրած վճիռներին: Աշխատանքում, անդրադարձ կատարելով Տ. Դևոյանցին ներկայացված մեղադրանքի հիմնահարցին, լուսաբանվել են այն անհիմն կարծիքները, որոնք ցայսօր քննարկման առարկա են պատմագետների շրջանում: Վերլուծության ենթարկված հարցերն արդիական հնչեղություն ունեն:

Մենագրությունը նախատեսված է պատմաբանների, կովկասագետների, միջազգայնագետների, ինչպես նաև հայոց պատմությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակի համար:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2252-0

© ԵՊՀ հրատ., 2018

© Վիրաբյան Վանիկ, 2018

*Նվիրվում է Հայաստանի  
առաջին Հանրապետության  
100-ամյա տարեդարձին*

**ԱՌԱՋԱԲԱՆ**

Հետախուզությունը համայն մարդկության պատմաքաղաքական զարգացման ողջ ընթացքում եղել է պետությունների ռազմաքաղաքական գերակա շահերի կենտրոնում: Հետախույզը առանձնահատուկ կարևորության անձ է, որը կոչված է ամեն մի պետության բարձրագույն հրամանատարության համար հայթայթելու գործող կամ հնարավոր հակառակորդի մասին անհրաժեշտ տեղեկություններ, այնուհետև դրանք ժամանակին համապատասխան ռազմական և պետաքաղաքական գերատեսչություններին հաղորդելու առաքելությամբ՝ հակառակորդի դեմ անհրաժեշտ նախապատրաստություններ և հակաքայլեր ձեռնարկելու նպատակով: Ամերիկյան գրող Ռ. Ռուանը, այս կարևոր հանգամանքը նկատի ունենալով, փաստում է, որ պատերազմի ժամանակ հետախուզական բաժինը «ռազմական ինֆորմացիա յե հավաքում մի շարք աղբյուրներից, սակայն հիմնականում նա իր աշխատանքը կառուցում է հետախույզների և գաղտնի գործակալների խիզախության ու հնարամտության վրա: Վորքան էլ կարևոր է լավ կազմակերպումը հակառակորդի թիկունքում, գլխավոր դերը, այնուամենայնիվ, ընկնում է իրեն՝ հետախույզի վրա: *Ճարպիկ, գաղտնի գործակալի ձեռք բերած տեղեկությունները նրա հայրենիքի կառավարության կողմից կարող են գնահատվել տասը հազար անգամ ավելի թանկ, քան նրա քաշով մեկ*

*սկիհն*<sup>1</sup>: Ըստ Ռուանի՝ հետախույզները «չափավորում» են պետական պաշտոնյաների ջանքերը<sup>2</sup>: Հետախուզական և հակահետախուզական գործընթացների գլխավոր դեմքը հետախույզն է, իսկ հակահետախույզին և ընդհանրապես պետության հատուկ ծառայություններին առաջադրվող ռազմավարական նշանակության գլխավոր նպատակադրումը հակառակորդի հետախուզության քայքայիչ գործունեությունը կանխելն է և համարժեք ակտիվ գործողությունները պատշաճ մակարդակով իրականացնելը:

Որ տեսանկյունից էլ մոտենանք հիմնահարցին, ակնհայտ է, որ հետախուզությունը առաջին հնագույն մասնագիտություններից է: Այն գոյություն ունի ուղիղ այնքան, որքան մարդկությունը և նրա անմիջական ուղեկից պատերազմները և ռազմաքաղաքական, տնտեսական-մշակութային առճակատումները: Ինքնին հասկանալի է, որ միայն ռազմական խորամանկությամբ կամ ռազմավարական այլևայլ մանրամասներով կարելի է հակառակորդին հաղթել: Սակայն ի սկզբանե պարզ էր նաև, որ թշնամուն հաղթելու համար բավարար չեն միայն ապակողմնորոշելը և շեղելը առավել արդյունավետ հակագործողությունների ընտրության և կիրառման հնարավորությունից: Ակնհայտ է, որ վերջին հաշվով հաղթանակի հասնելու համար հրամայական անհրաժեշտություն է ճանաչել թշնամուն, իրազեկ լինել նրա մտադրությունների մասին:

Հետախույզները հայտնի կամ անհայտ հերոսներ են՝ ընդունված կամ չընդունված, մոռացված և շատ հաճախ միայն արխիվների թղթապանակներում «հիշվող և գործնականում անտեսված»: Պատմության ամենակուլ քայլընթացում «*հետախույզի*» մասնագիտությունը առաջացրել է հարգանք և մեծարում, ակնածանք և զգուշավորություն, խորհրդավորություն և ուշադրություն: Հետախույզները, հիրավի, պետության գաղափարին և էությանը, ազգի նպատակների իրագործմանը նվիրված անհատներ են, որոնք առաջնորդվում են բարձր գաղափարա-

---

<sup>1</sup> **Ռուան Ռ.**, Հետախուզություն յեվ հակահետախուզություն, Ռոստով-Ռոն, Ազով-Սևծովյան յերկրային հայկական հրատարակչութիւն «Բուշեվիկ», 1937, էջ 7: Ինչպես նշվում է այս հրատարակության ծանոթագրության մեջ, այս գրքի մասին «Правда»-ում դրական է արտահայտվել նույնիսկ Բ. Ստալինը:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 109:

քաղաքական զգացումներով, սրբազան նվիրումով: Ժամանակի ընթացքում, պետությունների զարգացմանը զուգընթաց, հետախույզի վտանգալից, անսովոր և դժվարին մասնագիտությունը պատշաճ հարգանքի արժանացավ հասարակության, զինվորական և պետական այրերի կողմից: Հետախույզների շարքում տեղ են գտել շատ հանրահայտ, պետական կառավարման աստիճանասանադուղքում հիրավի բարձր դիրք գրավող անձինք՝ պետական-հասարակական գործիչներ, հանրահայտ մտավորականներ, գրողներ ու նկարիչներ, մարզիկներ և գիտնականներ:

Հետախույզն այն անձն է, որ, հաճախ հայտնվելով ծայրահեղ բարդ ու խճճված իրավիճակներում, կարողանում է խուսափել ձախողումից իր մտավոր բարձր կարողությունների, ճկունության և համարձակության, հնարամտության և անելանելի թվացող իրավիճակներում իր վրա պատասխանատվություն վերցնելու, մասնագիտական բարձր պատրաստվածության շնորհիվ:

*Հետախույզները բոլոր ժամանակներում եղել են պետության անտես և հնարամտորեն քողարկված աչքը: Հետախույզները պետության ամենահավատարիմ և պատրաստված թաքուն զինվորներն են թշնամու մեջ: Վկայակոչելով հին Չինաստանի ռազմական արվեստի գիտակ Յզյան Լիին՝ հանրահայտ Սուն Ցըզին [մ. թ. ա. VI-V դդ.] իր երկում խորագիտորեն նկատում է. «...գորքն առանց հետախույզության նման է առանց աչքի ու ականջի մարդու»<sup>1</sup>: Իր ասածը առավել հիմնավորելու համար դիմում է մեկ այլ հեղինակի՝ Դու Սունին, որն այդ կապակցությամբ գրել է. «Չինանալով հակառակորդի դիրքը, գորքը ոչինչ չի կարող անել, իսկ հակառակորդի մասին կարելի է իմանալ ոչ այլ կերպ, քան հետախույզների միջոցով»<sup>2</sup>: Հենց դա էլ իրական հնարավորություն է տալիս հակառակորդ երկրի գորքերի տեղաշարժի ու թվաքանակի, դասավորության և պլանների մասին ձեռք բերել անհրաժեշտ տեղեկություն, որի շնորհիվ հնարավոր է առավելություն ունենալ թշնամու նկատմամբ՝ ապահովելով ապագա հնարավոր հաղթանակի նախա-*

---

<sup>1</sup> **Սուն Ցըզի**, Երկ ռազմական արվեստի մասին, Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2006, էջ 67:

<sup>2</sup> Նույն տեղում:

դրյալները: Այդ իսկ պատճառով Մուն Ցըզին գտնուում էր, որ հետախույզները «պետության համար թանկարժեք զարդեր են»<sup>1</sup>, քանզի նրանց շնորհիվ մշակվում և իրականացվում են արդյունավետ ռազմավարական ծրագրեր հակառակորդի նկատմամբ՝ կանխավ համոզվելով, որ կարող են վերջինիս պարտության մատնել և հաղթանակ տոնել. «Թագավորներն անտեղի չեն շարժվել, և եթե նրանք շարժվել են, ապա անպայման հաղթել են: Եթե նրանք հերոսություններ են կատարել, ապա անպայման դրանով տարբերվել են մյուս բոլորից: Ինչու՞: Որովհետև նրանք վաղօրոք տեղյակ են եղել հակառակորդի դրության մասին»<sup>2</sup>:

Միանգամայն ակնհայտ է, որ պետաքաղաքական զարգացման ցանկացած փուլում և հասարակարգում հատուկ ծառայությունները՝ հետախուզական և հակահետախուզական համակարգերը, պետական կառույցի անքակտելի բաղկացուցիչ մասն են եղել, առանց որոնց ոչ մի պետություն գործնականում չի կարող երկար գոյատևել: Այդ ծառայությունների գործունեությունը ըստ էության նպատակաուղղված է ազգային-պետական անվտանգության որոշակի հիմնախնդիրների լուծմանը, որոնց իրագործման գլխավոր դերակատարները հետախույզներն ու հակահետախույզներն են: Ընդ որում՝ հարկ է նշել, որ իրենց գործելակերպում վերջիններս սերտորեն շաղկապված են միմյանց և գործնականում չեն էլ կարող արդյունավետորեն գործել առանց մեկը մյուսի: Ի դեպ, հարկ է նաև հատուկ ընդգծել, որ, օրինակ, Հռոմեական Մեծ կայսրության մեծադղորդ հաղթարշավներում իրենց անգնահատելի և անուրանալի վաստակն են ունեցել տերության հատուկ ծառայություններում ընդգրկված անտեսանելի զինվորները՝ հետախույզները, որոնք ամեն գնով հայթայթել են անհրաժեշտ տեղեկությունը հակառակորդի կողմից ծրագրվող հնարավոր գործողությունների, ծրագրերի, գորքերի տեղաշարժերի, տեղաբաշխման, թվաքանակի և այլ կարևոր հարցերի վերաբերյալ:

Հատուկ ծառայությունների պատմությունը վկայում է, որ Մեծ Բրիտանիան գաղութային քաղաքականության իր զավթողական նկրտումներում կարևոր տեղ է հատկացրել հետախուզական կառույց-

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 36;

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 63:



ներին: Դրանց գործունեության արդյունավետ կազմակերպման համար հատկացվել են ահռելի ֆինանսական և մարդկային մեծ միջոցներ, որոնցից շատ մեծ խնամքով ու բժախնդրությամբ ընտրվել են արհեստավարժ կադրեր, որն էլ գործնականում ապահովել է բրիտանական իշխանությունների գաղութային և առհասարակ՝ այսպես կոչված «իմպերիական» թալանչիական ծրագրերի իրականացումը:

Հետախուզական գործի փառավոր ներկայացուցիչներ ենք ունեցել նաև հին և միջնադարյան Հայաստանում, Հայաստանի առաջին, երկրորդ և երրորդ հանրապետությունների օրոք:

Մինչև արցախյան և անկախության հանրահայտ գործընթացները Հայաստանում հայ հասարակությունը գործնականում ոչինչ չգիտեր այն քաջարի հայորդիների մասին, որոնք իրենց հետքն են թողել հայ և համաշխարհային հետախուզության պատմության մեջ, դրանով իսկ բարձր պահելով հայրենիքի պատիվն ու արժանապատվությունը:

Այսօր հրապարակ են գալիս գրքեր, նկարահանվում են ֆիլմեր, որոնցում վեր են հառնում այն հայ հետախույզների անչափ հետաքրքիր ու բազմաշերտ կերպարները, որոնք իրենց բանիմացության, խիզախության, պրոֆեսիոնալիզմի շնորհիվ մնայուն տեղ են գրավում համաշխարհային և հայկական հետախուզության տարեգրությունում:

Հարկ է ասել, որ հայ հետախույզների թվում ևս եղել են անձինք, որոնք հետախուզության բուն էությունը և խնդիրները հրաշալի են ըմբռնել: Խոսքը վերաբերում է Տիգրան Դևոյանցին, որը դիպուկ է նկատել. «Հետախուզական գործը խաղաղութեան կամ պատերազմի միջոցին կազմում է ամեն մեկ պետութեան *աչքերն եւ ականջները*»:

Հետախուզութեան միջոցով ուսումնասիրում է թշնամու կամ դրացի պետութեանց գորքերի դասաւորումը, գորաշարժի յատակագիծը, զենքերի սիստեմը, թնդանօթների, գնդացիորների, հրացանների, տանկերի, զրահաւոր գնացքների, օդային ոյժերի, նաւատորմի, ամրութիւնների յատակագիծը, տեսակը, որակը, ուժը եւ այլն, հաղորդակցութեան միջոցները, մատակարարութիւնը, ռազմական եւ մատակարարական պահեստները, ժողովուրդի տնտեսական եւ սանիտարական վիճակը, ժողովուրդի տրամադրութիւնները, հզօրութիւնների փոխարարբերութիւնը եւ վերաբերմունքը դէպի պետութիւնը, պահեստի ուժե-

րը, հրամանատարական կազմի նկարագիրն ու բնոյթագիծը, մի խոսքով՝ այն ամենը, ինչ-որ կապուած է պատերազմի հետ, շինուող երկաթուղային գծերը, խճուղիները, կամուրջները, նաւատորմը, օդային ուժերի տեսակը, արագութիւնը, զինատրումը, եւ այլն...

Հետախուզական բաժանմունքը ամէն մէկ պետութեան խաղաղ ժամանակ պատրաստում է պատերազմի համար. ուսումնասիրում է ամենապզտիկ մանրամասնութեամբ տուեալ պետութեան ջղային բոլոր գծերը, որպէսզի ապագայ պատերազմի պարագային դիրացնի իր պետութեան ռազմագիտական ծրագիրների գործադրումը: Այսպէս, գիտնալով երկաթուղային գծերի գլխաւոր կապերը, դէպօնէրը, կարելոր գործարանների տեղը, կամուրջների ճիշդ տեղը, աւելի դիրին կը լինի ոմբակոծել այդ կէդրոնները, պայթեցնել կամուրջները եւ ժամանակաւորապէս անդամալուծել հաղորդակցութիւնը թշնամու թիկունքում:

Ուրեմն, ամէն մէկ պետութիւն, խաղաղ ժամանակ, իր հետախուզական բաժանմունքի օգնութեամբ պատրաստում է պատերազմի համար<sup>1</sup>:

Հենց այդ կարևորագոյն հանգամանքներն էլ պայմանավորեցին, որ ձեռնամուխ լինենք ներկայացնելու առանձին հայ հետախույզների մոռացված դիմապատկերները և մասնավորապէս Տիգրան Դեղյանցի գրեթէ անտեսված և մոռացված, սակայն հիշարժան կերպարը: Սույն հիմնախնդրի վերաբերյալ կան մի շարք դիտարժան աշխատանքներ, որոնցում այս կամ այն կերպ հպանցիկ կամ մակերեսորեն անդրադարձ է կատարվել Տ. Դեղյանցի կերպարին և հետախուզական բազմաբեղուն գործունեությանը, նրա որպէս մարդու և հետախույզի կյանքի «ողիսականին», ինչը միայն մասամբ է լրացրել այն բացը, որ կա հայ պատմագիտության մեջ:

Նշենք, որ հեղինակների մեծ մասը, անդրադառնալով Առաջին աշխարհամարտի ռազմաքաղաքական իրադարձություններին և այդ համատեքստում մասնավորապէս ռուսական զորքի 1915 թ. հուլիսյան չարաբաստիկ Վան-Մանազկերտյան մեծ նահանջի մի շարք մանրամասներին, հավուր պատշաճի չեն վերաբերվել հայ հետախույզ Տիգրան

---

<sup>1</sup> Դեղյանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1943, թիւ 3 (236), մալիս-հունիս, էջ 91:

Դեռյանցի դերակատարության հարցի լուսաբանմանը: Հիմնախնդրի այդ կողմը անբավարար է հետազոտված, քանզի պատմաբանները ուշադրությունը սևեռել են ռուսական զորքերի նահանջի հետ կապված զուտ ռազմաքաղաքական անցուդարձի վրա՝ շրջանցելով թե՛ առհասարակ ռուսական հետախուզական մարմինների աշխատանքը և թե՛ մասնավորապես Տ. Դեռյանցի գործունեությունը: Այնուամենայնիվ, ընդհանուր բնույթի հարցեր քննարկած այդ աշխատությունների շարքում կարելի է առանձնացնել Հր. Սիմոնյանի, Աշ. Հարությունյանի, Ծ. Աղայանի, Մ. Արզումանյանի, Հ. Կարապետյանի, Հ. Հատիկյանի և այլոց մի շարք ուսումնասիրություններ<sup>1</sup>, որոնցում կան հետաքրքիր մանրամասներ և դիտարկումներ 1915 թ. ռազմաքաղաքական իրադարձությունների, ռուսական զորքերի կողմից Վանի գրավման և անշուշտ՝ մեծ նահանջի մասին: Դրանցում շատ հակիրճ և հպանցիկ անդրադարձ կա ռուսական զորքերի անսպասելի նահանջի խնդրում Տ. Դեռյանցի մեղավորության հարցի հետ կապված: Սակայն առանձին կարևոր մանրամասներ և փաստեր դուրս են մնացել նրանց հետազոտությունների տեսադաշտից:

Շահեկան են ռազմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Կորսունի, Ա. Զայոնչկովսկու, Ե. Վ. Մապովսկու<sup>2</sup> աշխատանքները, որոնք նվիրված են Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասյան

---

<sup>1</sup> Տե՛ս **Սիմոնյան Հր.**, Անդրանիկի ժամանակը. գիրք Ա., Եր., «Կախա», 1996, **նույնի**, Ազատագրական պայքարի քառուղիներում. Գիրք I, Եր., «Հայագիտակ» հրատ., 2003, գիրք IV, Եր., ԵՊՀ հրատ., 2010: **Արտյոնյան Ա.**, Кавказский фронт. 1914-1917, Ер., изд-во «Айастан», 1971: **Յարութինեան Ա. Յ.**, Կովկասեան ռազմաճակատը 1914-1917 թերին, Թեհրան, տպ. «Ալիք», 1977: **Հարությունյան Ա. Հ.**, Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից (1914-1918), Եր., «Հայաստան» հրատ., 1983: **Աղայան Օ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1976, **նույնի**, Անդրանիկ. Դարաշրջան. Դեպքեր. Դեմքեր, Եր., ՀԲՀ հրատ., 1994: **Արզումանյան Մ.**, Հայաստան, 1914-1917, Եր., 1969: **Կարապետյան Հ.**, Անդրանիկ. Պրակ 2, Եր., «Հայաստան» հրատ., 1992: **Հատիկյան Հ.**, Արևմտահայությունն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների թիրախում 1878-1923 թթ., Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2016:

<sup>2</sup> **Корсун Н. Г.**, Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны в 1915 году, М., Гос. Военное изд-во Наркомата Обороны СССР, 1940, **նույնի**, Первая мировая война на Кавказском фронте. Оперативно-стратегический очерк, М., Военное изд-во Мин-ва Вооруж. Сил Союза ССР, 1944: **Зайончковский А.**, Мировая война 1914-1918 гг., т. I, М., «Госвоениздат», 1938: **Масловский Е. В.**, Мировая война на Кавказском фронте в 1914-1917 гг.: Стратегический очерк, Париж, изд-во «Возрождение», 1933:

ռազմաճակատում տեղի ունեցած ռազմական գործողություններին: Դրանցում մասնավորապես հետաքրքիր դիտարկումներ կան Ալաշկերտի հովտում տեղի ունեցած օպերացիայի և մասնավորապես գեներալ Պ. Օզանովսկու զլխավորած Կովկասյան IV կորպուսի գործունեության մասին:

Հիմնախնդրի առանձին կողմեր՝ զլխավորապես ռուսական զորքերի նահանջի և կամավորական ջոկատների գործունեության առնչությամբ, արտացոլվել են Ռ. Մահակյանի, Ա. Ներսիսյանի, Ա. Ասրյանի, Խ. Ստեփանյանի, Հ. Գևորգյանի, Մ. Կարապետյանի, Ա. Նազարյանի և այլոց աշխատանքներում<sup>1</sup>, որոնցում, սակայն, ամենևին էլ նպատակ չի դրվել դիտարկել Տիգրան Դեոյանցի հետախուզական գործունեությունը, առավել ևս՝ այն տեղավորել ռուսական բանակի՝ Վան-Մանազկերտից նահանջի պատմության շրջանակներում:

Արժեքավոր և ինքնատիպ դիտարկումներ կան Ավ. Հարությունյանի մի շարք գիտական հոդվածներում, որոնցում հիմնավոր ներկայացվել են Վան-Վասպուրականում տեղի ունեցած իրադարձությունների ամբողջական համայնապատկերը, ռուսական զորքի նահանջի հետ կապված մի շարք մանրամասներ<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Մահակյան Ռ.**, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս –1917 թ. փետրվար), Եր., Պատմ. ինստ.-տ, 2015: **Ներսիսյան Ա.**, Կարո Մասունի, Եր., Իրանագիտական Կովկասյան Կենտրոնի հրատ., 2004: **Ասրյան Ա. Մ.**, Արամ Մանուկյան. Կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում). Երկրորդ, լրացված հրատ., Եր., «Լուսակն» հրատ., 2008: **Ստեփանյան Խ. Ռ.**, Ռուբեն Տեր-Մինասյան (Կյանքը և գործը), Եր., «ՎՄՎ-Պրինտ», 2012: **Գևորգյան Հ.**, Դրո, Եր., Հեղ. հրատ., 2014: **Կարապետյան Մ.**, Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914-1917 թթ.), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999: **Նազարյան Ա.**, Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թվականներ), Եր., «Ձանգակ-97» հրատ., 1999, **նույնի**, Հայ կամավորական շարժումը 1914-1916 թվականներին և Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, Եր., «Հայ Դատ» հիմնադրամ, 2011:

<sup>2</sup> Տե՛ս **Հարությունյան Ավ.**, Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթը «Լրաբեր հասարակական գիտությունների», 2002, № 2. էջ 46-58, **նույնի**, Վան-Վասպուրականի ազգաբնակչության մեծ գաղթի պատճառները, ընթացքը, հետևանքները և պատասխանատվության խնդիրը, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I. Վան քաղաքի առաջին հիշատակության 2865–ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (7-9 հոկտեմբերի, 2010 թ.) նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 170-196:

Հիմնախնդրի հետազոտման տեսանկյունից դիտարկվել են նաև տողերիս հեղինակի հրատարակած մի շարք գիտական հոդվածներ, որոնցում տրված են ինչպես Վան-Մանազկերտի նահանջի հետ կապված Տ. Դևոյանցի գործունեության<sup>1</sup>, այլև նրա կյանքի և գործունեության այլ էջեր<sup>2</sup>, որոնք, սակայն, առանձին պատմաքննական գնահատման կարիք ունեն և սույն աշխատության հետազոտական շրջանակներից դուրս են մնացել:

Ընդհանուր բնույթի մի շարք աշխատանքներ, այդ թվում առհասարակ հետախուզության պատմությանը նվիրված հանրագիտարանային և արխիվային հրապարակումներ, ժողովածուներ ևս հնարավորություն են տվել ամբողջացնելու հետազոտվող հիմնախնդրին վերաբերող որոշ էջեր<sup>3</sup>: Փաստաթղթերի և արխիվային նյութերի հրապարա-

---

<sup>1</sup> **Վիրաբյան Վ.**, Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեության շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2011, № 1-2, էջ 320-336:

<sup>2</sup> **Վիրաբյան Վ.**, Հայաստանի Առաջին Հանրապետության անվտանգության համակարգը և հետախուզական ծառայության կազմակերպումը (1918-1920 թթ.), «Բանբեր Երևանի համալսարանի», № 1, 2005, էջ 181-187, **նույնի**, Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության գործունեության պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», № 3, 2005, էջ 36-49, **նույնի**, Հայաստանի Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը, «Հայկական բանակ», 2006, № 1, էջ 83-90, **նույնի**, Էջեր Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեությունից, «Հայկական բանակ», 2007, № 1 (51), էջ 82-88, **նույնի**, Կ. Պոլսում հայկական հետախուզական խմբի ղեկավար Տիգրան Դևոյանցի զեկուցագրերը Թուրքիայում և Հայաստանի Հանրապետության շուրջ տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների մասին, «Պատմություն և մշակույթ. Հայագիտական հանդես». հ. Գ., Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 17-47, **նույնի**, Հետախուզական ծառայության կազմակերպումը և գործունեությունը ՀՀ-ում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, № 2. էջ 241-256 և այլն:

<sup>3</sup> Տե՛ս Հայոց պատմություն. հատոր III (XVII դարի երկրորդ կես -1918 թ.): գիրք երկրորդ (1901-1918 թթ., XIX դ. և XX դ. սկզբին), Եր., «Զանգակ» հրատ., 2015: Տե՛ս **Միրզոյան Մ.**, Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզության պատմությունից, «Դրօշակ», թիվ 2 (1574), ապրիլ, 2002, էջ 110-117: **Հարությունյան Ա. Ա.**, ՀՀ Դաշնակցության 1918-1920 թթ. պատմության վավերագրերը, «ՎԷՆ», համահայկական հանդես, 2014, Զ (ԺԲ) տարի, թիվ 1 (45), հունվար-մարտ, ՎԷՄ, 2014, թիվ 1[45], 2 [46], 3 [47], 4 [48]: Համահայկական խորհրդակցություններ (1918-1920 թթ.), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ. Ա. Վիրաբյան և ուրիշներ, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2004: **Վիրաբյան Վ.**, Հայաստանի Հանրապետության հետախուզական և հակահետախուզական ծառայությունը փաստաթղթերում (1918-1920 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», № 2, 2004, էջ 30 -36, **նույնի**, Հայկական հետախուզության փաստաթղթերը Թուրքիայում ռազմաքաղաքական իրադարձությունների մասին (1919 թ. օգոստոս-նոյեմբեր, ռուս.), «Պատ-

կումները, հուշագրային բնույթի գրականությունը ի դեմս Ա.-Դոյի, Լեո-  
յի, Կ. Սասունու, Ս. Վրացյանի, Վ. Փափագյանի և այլոց<sup>1</sup>, այդ թվում  
առաջին հերթին Տ. Դևոյանցի հուշերը<sup>2</sup>, ինչպես նաև անշուշտ, տողերիս  
հեղինակի մի շարք մենագրությունները և գիտական հոդվածաշարը  
գալիս են մասամբ լրացնելու Վան-Մանագլերտի նահանջի հետ կապ-  
ված Տ. Դևոյանցի գործունեության հետ կապված առկա հայտնի բացը<sup>3</sup>:

---

մարանասիրական հանդես», 2011, № 1, էջ 309-322: Разведка и контрразведка в лицах: Энциклопедический словарь российских спецслужб. Под ред. А. Диенко и др., Москва, изд-во «Русский мир», 2002: **Ганян А. В.**, Корпус офицеров Генерального штаба в годы гражданской войны 1917-1922 гг.: Справочные материалы, М., изд-во «Русский путь», 2009:

<sup>1</sup> Տե՛ս **Ա.-Դո**, Հայ-թուրքական ընդհարումը (1905-1906 թ.): Փաստական, վիճակագրական, տեղագրական լուսարանություններով, Երևան, տպ. Այվազեանց եւ Նազարեանց, 1907, **Նույնի**, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Եր., 1917, **Լեո**, Թիրքահայ, յեղափոխութեան գաղափարաբանությունը, Հատոր Բ, Փարիզ, տպ. Պահրի եղբարց, 1935: **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով. Դեպքեր. Դեմքեր. Ապրումներ. Գ հատոր, Պէրուք, տպ. «Մշակ», 1963: Անդրանիկի կեանքը, պատերազմները եւ յուշերը, Պէրուք, Ա. Հ., 1932: Զօրավար Ադրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրությունը 1914-1917, օրագրուած գօրավարին թիկնապահ զինուորէն, Պոսթն, 1924: **Թորաքեան Ս.**, Օրերուս հետ, Թեհրան, «Սասուն» հրատ., 1982: **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ դատը (Հայ և ռուս յարաբերություններու յոյսին տակ), Եր., «Արան» հրատ., 1991: **Փափագեան Վ.**, Իմ յուշերը, հատոր առաջին (1), Պոսթըն, 1950: **Նույնի**, Կ. Երկրորդ (2), Պէրուք, տպ. Համագգային ընկերութեան, 1952: **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918). Տաճկահայոց գաղթաշարժը եւ անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Բոստոն, 1927, **Նույնի**, Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէրուք, Հրատ. Տարօն-Տուրուբերանի Հայրենակցական Միութեան Կեդրոնական վարչութեան, տպ. «Սեւան», 1956-1957: **Մառիկյան Հ.**, Հիշողություններ. 1878-1924, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2015: **Ղորղանեան Գ.**, Հայերու մասնակցությունը համաշխարհային պատերազմին Կովկասեան ռազմաճակատին վրայ (նիւթեր պատմութեան համար), «Հայրենիք», Բոստոն, թիւ 11, սեպտեմբեր, 1927, էջ 67-84, թիւ 12, հոկտեմբեր, 1927, էջ 106-122: **Корганов Г.**, Участие армян в мировой войне на Кавказском фронте (1914-1918). С 19-ю схемами. Перевод с французского Ю. Л. Пирумяна, Э. Е. Долбакяна, М., МАКС Пресс, 2011:

<sup>2</sup> Տե՛ս **Դեյեանց Տիգրան**, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՍ» (Փարիզ), 1938, Զ տարի, թիւ 2, յունար-մայիս, էջ 48-54, թիւ 3, յունիս-սեպտեմբեր, էջ 58-72: **Տիգրան Դեյեանց**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, թիւ 1 (246), յունար-փետրուար, էջ 53-62, 1945, թիւ 2 (247), մարտ-ապրիլ, էջ 79-81, 1945, թիւ 3 (248), մայիս-յունիս, էջ 93-100, 1945, թիւ 4 (249), յուլիս-օգոստոս, էջ 81-89, 1945, № 5 (250), սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 93-100, 1946, թիւ 2 (253), մարտ-ապրիլ, էջ 103-110, 1947, թիւ 2 (259), մարտ-ապրիլ, էջ 107-109, 1947, թիւ 5 (262), սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 111 -112:

<sup>3</sup> Տե՛ս **Վիքրաբյան Վ.**, Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918-1920 թթ. (Հայոց քաղաքական պատմության նորագույն էջերից), Եր.,

Հետազոտական պրպտումները այսօր հնարավորություն են ըն-  
ձեռում նաև հրապարակավ ներկայացնելու հայ հետախույզի կյանքի ու  
գործունեության մի մոռացված էջ 1915 թ. Վան-Մանազկերտի նահանջի  
խուճապային օրերից և նրա հետախուզական գործունեության մի շարք  
դիտարժան դրվագներից, որոնք պետք է իրենց արժանի տեղը զբաղեց-  
նեն հանրագիտարաններում՝ դառնալով հայրենասիրական ոգով դաս-  
տիարակության և սեփական երկրի ու պետականության նվիրական  
գաղափարներին անսահման նվիրվածության դասական օրինակներ:

Այս գիրքը հայկական հետախուզության պատմության մեջ մեծ  
ավանդ ունեցած հայորդի հետախույզ *Տիգրան Թաղևոսի Ղևոյանցի*  
գործունեությունը համակողմանի ներկայացնելու փորձ է:

Յուրաքանչյուր ժողովրդի պատվի խնդիրն է անդրադառնալ  
հայտնի և անհայտ հերոսների գործունեության թաքուն էջերին:

---

«ՀՊՃՀ» հրատ., 1999, **նույնի**, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. ՀՀ կառավա-  
րության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները (Հայոց Քաղաքա-  
կան պատմության էջերից), Եր., «ՀՊՃՀ» հրատ., 1999, էջ 22-27, **նույնի**, Հայկական հետա-  
խուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Եր., «Ասողիկ»  
հրատ., 2003, **նույնի**, Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության հա-  
մակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Եր., «Լուսակն» հրատ., 2006,  
**նույնի**, Հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ, Եր., «Լուսակն» հրատ., 2009: Տե՛ս  
մանրամասն՝ **Վիրաբյան Վ. Հ.**, Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգու-  
թյան համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ. (Հետախուզություն, բա-  
նակ և ՆԳՆ), Եր., ԵՊՀ հրատ., 2015:

**ՏԻԳՐԱՆ ԴԵՎՈՅԱՆՑԻ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ  
1915 Թ. ՎԱՆ-ՄԱՆԱԶԿԵՐՏՅԱՆ ՆԱՀԱՆՋԻ ՇՈՒՐՉ**

**1. Տիգրան Դևոյանցի գործունեությունը Առաջին  
աշխարհամարտի նախօրեին**

Հայկական հետախուզության պատմության մեջ մեծ է Տիգրան Թադևոսի Դևոյանցի վաստակը<sup>1</sup>, որն այդ համակարգի կարկառուն դեմքերից է<sup>2</sup>:

Տիգրան Թադևոսի Դևոյանցը ծնվել է 1894 թ. Երևանում: Նրա ընտանիքը բազմանդամ է եղել. ունեցել է չորս եղբայր և երեք քույր: 1903 թ. ընդունվել է Երևանի ռուսական գիմնազիա: Ուսումնառության տարիներին մասնակցում է ցարական իշխանությունների կողմից հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման և հայկական դպրոցների փակման հետ կապված աշակերտական հուզումներին, որի պատճառով հեռացվում է դպրոցի երրորդ դասարանից և փախչում է Թիֆլիս: Նրա փոխարեն ձերբակալվում է ավագ եղբայրը՝ Հակոբը<sup>3</sup>, որը 5-6 ամսվա բանտարկությունից հետո ոստիկանապետին 5000 ռ. կաշառք տալով, ազատվում է բանտից:

---

<sup>1</sup> **Դևոյանց Տիգրան Թադևոսի** (<1890>, Երևան - 02. 09. 1965, Բեյլիա) - սովորել է Տոմսկի համալսարանի լեռնային-ճարտարագիտական ֆակուլտետում, մանկավարժ: Հայտնի է **Ղևո, Խարք** և այլ ծածկանուններով: Տե՛ս **Հովակիմյան Բ. Մ.**, Հայոց ծածկանունների բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2005, էջ 596. – Օգտագործ. աղբյուրները՝ «Հորիզոն» (Թիֆլիս), 1914, № 230, 233, «Армянский вестник» (Москва), 1916, № 33, стр. 24, «Кавказское слово» (Тифлис), 1914, № 28-30, 34-36, 1918, № 117:

<sup>2</sup> Տե՛ս **Hovannisian R. G.**, The republic of Armenia, vol. II, From Versailles to London, 1919-1920, Berkeley. Los Angeles, 1982, p. 68, 177, 489:

<sup>3</sup> Տ. Դևոյանցի ավագ եղբայրը՝ Հակոբը, հետագայում Սիմֆերոպոլում գնդակահարվեց բոլշևիկների կողմից: Տե՛ս **Դեյեանց Տ.**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1943, թիւ 6 (239), նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 48:



1904-1905 թթ., երբ Ռուսաստանում սաստկացան հակամիապետական տրամադրությունները, ցարական իշխանությունները հեղափոխական խմորումների և ազգային շարժումների դեմն առնելու նպատակադրումով Բաքվում, Թիֆլիսում, Նախիջևանում և այլ հայաշատ վայրերում կազմակերպում են հայ-թաթարական բախումներ: Ինչպես իր մարտական դասընկերը՝ Դրոն (Դրաստամատ Կանայան<sup>1</sup>), Դևոյանցը նույնպես հայտնվում է այն հայրենանվեր մարդկանց շարքում, որոնք փորձում էին սատար կանգնել հայ ազգաբնակչության իրավունքներին Անդրկովկասի հայաշատ քաղաքներում: Այդ նպատակով Տիգրան Դևոյանցը Թիֆլիսում կազմակերպում է մաուզերներով զինված մի խումբ, գործելով Ռոստոմի<sup>2</sup> հրահանգներով: Մարտական խումբը 1905 թ. նոյեմբերի 22-23-ին ակտիվորեն մասնակցել է Շեյթան Բազարի շրջանում տեղի ունեցած ընդհարումներին: Այդ մասին ինքը՝ Տ. Դևոյանցը, գրում է. «Երբ Թիֆլիսում տեղի էին ունենում բանուրական հակամիապետական ցույցեր, ես միշտ այնտեղ էի կարմիր դրոշակով...»

Թիֆլիսի կոտորածների միջոցին ես ունեի իմ ձեռքիս տակ 12 հոգիանոց մաուզերներով զինուած թռուցիկ մի խումբ Շեյթան-Բազարի շրջանին մեջ: Կռիւներից յետոյ, Ռոստոմի կարգադրութեամբ, ես իմ խմբով շրջում էի ամբողջ քաղաքը, ցրուած պարսկահպատակ թուրքե-

---

<sup>1</sup> **Դրո (Կանայան Դրաստամատ Մարտիրոսի**, 31.05.1884-8.03.1956) – Հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ: Առաջին աշխարհամարտի տարիներին Դրոն գլխավորել է Հայկական 2-րդ կամավորական գունդը: 1917 թ. դեկտեմբերին նշանակվել է Հայկական ազգային կորպուսի կոմիսար: 1918 թ. մայիսին «մրկածին» Դրոն ղեկավարել է Բաշ-Ապարանի հերոսամարտը: 1918 թ. դեկտեմբերին գլխավորել է Դիլիջան-Լոռու հայկական հաղթական զորախումբը: 1920 թ. նոյեմբերին նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար: Կարևոր դեր է խաղացել 1920 թ. դեկտեմբերի 2-ի ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Բ. Լեգրանի հետ Երևանի համաձայնագրի կնքման և Հայաստանի խաղաղ խորհրդայնացման գործում: 1923 թ. հեռացել է արտասահման: Երկրորդ աշխարհամարտից հետո հաստատվել է Լիբանանում և ԱՄՆ-ում: Տե՛ս Ով ով է. Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Եր., Հայկ, հանրագիտ. հրատ., 2005, էջ 355-356:

<sup>2</sup> **Ռոստոմ (Ջոռյան Ստեփան Գրիգորի**, (1867-1919) – ՀՅԴ հիմնադիրներից, հայտնի գործիչ, Առաջին աշխարհամարտի տարիներին հայկական կամավորական զորաջոկատների կազմակերպիչ:

րին ազատում էի եւ տանում յանձնում Պարսկական դեսպանատունը»<sup>1</sup>: Հայերին ճնշելու և կոտորելու թուրքերի բոլոր փորձերը Թիֆլիսում և շրջակայքում ձախողվեցին: Դեռյանցն այդ մասին հիշում է. «Այս անգամ հրաման արձակուեց հայերին, որ բոլոր դիրքերից կրակ բանան: Երեք գիշեր ու ցերեկ թրքական թաղերը խաչաձև անընդհատ կրակի տակ առնուեցին: Տեղ տեղ մաքրուեցին ամբողջ թաղերը, տեղ տեղ ռումբերով քարուքանդ արուեցին շատ ուժեղ թշնամու դիրքեր: Մի քանի օրուայ դադարի միջոցին Բորչալուի շրջանից Թիֆլիսի թրքական թաղը՝ Շէթան-Բազար եկան հազարաւոր զինուած թաթարներ, որոնք պատրաստում էին նոր յարձակման հայերի վրայ: Վրացի Սոցիալ-Դեմոկրատները, դիմելով կառավարութեան, զէնք ստացան, զինեցին իրենց անդամները եւ ուղարկեցին նրանց Շէթան-Բազար, ուր նրանք անցան հայերի եւ թաթարների ուժերի մէջտեղը, կարծելով թէ այդպիսով պիտի կարողանան հաշտարար դեր կատարել: Բայց յանկարծ այդ թաթարները ամէն կողմից համազարկի կապեցին վրացիներին, որոնք, թողնելով տասնեակ վիրաւոր եւ մեռեալներ, առանց նոյնիսկ կրակ բանալու, հրացանները մեծ մասամբ վար ձգեցին եւ փախան:

Վրացիների ետեւը գտնում էին մեր թռուցիկ խումբերը, որոնք վրացիների փախուստից յետոյ յարձակման անցան եւ, մի քանի ըրպէից յետոյ, ամբողջ հրապարակը մաքրեցին թուրքերից:

Այս անգամ հայերը շատ լաւ էին կազմակերպուած: Առհասարակ պէտք է ըսեմ, որ Բազուի եւ Նախիջեւանի կոտորածներից յետոյ, մանաւանդ Երեւանի հայութիւնը շատ լաւ զինուեց եւ կազմակերպուեց՝ պատրաստ սպասելով թաթարների յարձակման:

Թիֆլիսի կոտորածից յետոյ, ես անցայ Երեւան»<sup>2</sup>:

Հայերի և թուրքերի միջև մի քանի անգամ բռնկված հրացանաձգութեան հետևանքով զոհերի թիվը հասնում էր 42-ի, որոնց մեծ մասը թուրքեր էին, իսկ փոքր մասը՝ հայեր, վրացիներ և ռուսներ<sup>3</sup>: Այս աղետալի իրադարձություններին իր երկդիմի մոտեցումով միջամտում է Թիֆլիսի

---

<sup>1</sup> **Դեյեանց Տ.**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1943, թիւ 6 (239), նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 43:

<sup>2</sup> Նոյն տեղում:

<sup>3</sup> **Ա.Դ.**, Հայ-թուրքական ընդհարումը (1905-1906 թ.), էջ 393:

ուստիկանապետ Ցիսը, որը, սակայն, գործուն լծակներ չի օգտագործում՝ կանխելու հայ-թրքական ընդհարումը՝ հրավիրելով ընդամենը այսպես կոչված «հեղափոխական» կուսակցությունների անպտուղ ժողով: Ամեն դեպքում միայն հայկական մարտական խմբի վճռական միջամտության շնորհիվ է հաջողվում զսպել թուրք խուժանին, որին իր լուսման է ներդնում այդ պահին դեռևս տակավին պատանի Տիգրան Դևոյանը:

1905 թ. ռուսական հեղափոխության փոթորկալից օրերին, երբ ցարական իշխանությունները Անդրկովկասի հայաշատ վայրերում հրահրեցին արյունոտ ազգամիջյան ընդհարումներ, հայությունը ի դեմս հայդուկային խմբերի հայտնի առաջնորդների, դիմեց ակտիվ ինքնապաշտպանության՝ հայ բնակչությանը պատսպարելով ավազակաբարո թաթարական խուժանի ոսնձգություններից: Այդ գործի մեջ ներգրավվեցին նաև Երևանի ռուսական գիմնազիայի սաները, որոնք համակվել էին հայրենանվեր մղումներով՝ սատար կանգնելով թուրք-թաթարական հրոսակներից անպաշտպան հայությանը: Գիմնազիայում ուսանող Սեդրակ Ջալալյանի (Սեթո), Դրաստամատ Կանայանի (Դրո), Տիգրան Դևոյանցի, Մմբատ Եղիազարյանի և ուրիշների եռանդուն ջանքերով և նախաձեռնությամբ ստեղծվում է Հայ Երիտասարդաց Միությունը, որը Միսաք Թոռլաքյանի հավաստիացմամբ՝ Սեդրակ Ջալալյանի և Նիկոլ Դումանի (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան)<sup>1</sup> զլխավորությամբ այնուհետև դարձավ Հայ Երիտասարդաց Դաշնակցության կամ նշանավոր «Փոթորիկ» կամ «Բորեաս» մարտական խումբը, որը ստեղծվել էր 1903 թվականին<sup>2</sup>: ՀՅԴ «Մրգստանի» կոմիտեի որոշմամբ խումբն ընդունվում

---

<sup>1</sup> **Նիկոլ Դուման (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան)** (12.01.1867 - 23.09.1914) – Հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ, ՀՅԴ անդամ: Մասնակցել է 1894-1896 թթ. Սալմաստի գավառի Դերիկի վանքի կռիվներին, 1897 թ. Խանասորի արշավանքին: 1905-1906 թթ. հայ-թաթարական բախումների ժամանակ ակտիվ մասնակցություն է ունեցել Բաքվի և Երևանի հայության ինքնապաշտպանության գործին: Տե՛ս **Գևորգյան Հ.**, Նիկոլ Դուման (Կյանքն ու գործը) , Եր., ԵՊՀ հրատ., 2013:

<sup>2</sup> Ըստ **Հր. Միմոնյանի** հայթայթած տվյալների՝ մարտական խումբը «Բորեաս» է անվանվել Ալազյազից փչող բորյազ քամու նմանությամբ, որ փչում էր անսպասելի՝ ճանապարհին ավերածություններ գործելով: Տե՛ս **Միմոնյան Հր.**, Ազատագրական պայքարի քառուղիներում, գիրք I, Եր., «Հայագիտակ», 2003, էջ 644:

է Դաշնակցության մեջ որպէս նրա մարտական խմբերից մեկը՝ «Բորեաս» անունով<sup>1</sup>:

Անդրադառնալով նրանց մարտական գործունեությանը Վ. Փափազյանը (Կոմս<sup>2</sup>) շատ պատկերավոր նկատել է. «Ասոնք էին, որ հայթաթարական կոիվներու ատեն, իբրև թռուցիկ խումբ, մեկ-մեկ հերոս դարձան իրենց յանդգութեամբ և քաջագործություններով»<sup>3</sup>: Այն իր ահաբեկչական գործողություններով սարսափի էր մատնում Կովկասի և ռուսական այդ վայրերի մեջ հայահալած տարրերին<sup>4</sup>: «Բորեաս» մարտական խմբի անդամները ակտիվորեն մտան ազգային-ազատագրական պայքարի հորձանուտի մեջ՝ այդ օրերին արժանի հակահարված տալով սանձարձակ և ելուզակ թաթարական խմբերին թե՛ Երևանում, թե՛ Նախիջևանում և այլուր: Խումբը իր մարտական մկրտությունը ստանում է Նախիջևանում, ուր նրա յոթ անդամները, ինքնազլուխ մեկնելով այնտեղ, կոիվներին զուգընթաց, ինքնապաշտպանությանն անպատրաստ գյուղերում կազմակերպեցին մարտախմբեր և վերադարձան միայն տասնհինգ օր անց<sup>5</sup>:

«Բորեաս» մարտական խումբը ակտիվորեն մասնակցում է Երևանի նահանգի ինքնապաշտպանությանը: Ինչպէս փաստում է Հ. Գևորգյանը, ՀՅ Դաշնակցության Երևանի «Մրգատանի» կենտրոնական կոմիտեն «Բորեաս» մարտական խմբի անդամներին Հայոց ազատամարտին զինվորագրելու նպատակադրությամբ տրամադրում է «Մոսին» հրացաններ, «Մաուզեր» տեսակի ատրճանակներ և ցարական ոստիկանությունից գաղտնի կազմակերպում է մարզումներ, զենքի գործածության

---

<sup>1</sup> Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, թիւ 7 (91), մայիս, 1930, էջ 115, № 10 (368), հոկտեմբեր, 1956, էջ 19-20: **Գեորգեան Վ.**, Ամէնուն տարեգիրքը. Ա տարի, 1954, էջ 102:

<sup>2</sup> **Փափազյան Վահան Մեսրոպի, Կոմս** (1876 -1973) - Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ, Օսմանյան խորհրդարանի պատգամավոր: 1919-1920 թթ. հայկական պատվիրակության կազմում մասնակցել է Փարիզի խաղաղության վեհաժողովին:

<sup>3</sup> **Փափազեան Վ.**, Իմ յուշերը, Հատոր առաջին (1), Պոսթըն, 1950, էջ 400-401:

<sup>4</sup> Տե՛ս **Թորաքեան Մ.**, Օրերուս հետ, Թեհրան, «Մասուն» հրատ., 1982, էջ 556, **նույնի**, Օրերուս հետ, Գ հրատ., Պէրոյթ, տպ. Համազգայինի Վահե Մեթեան, 2001, էջ 593:

<sup>5</sup> Տե՛ս **Դերիկյան Տ.**, Նիկոլ Դուման. Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան, Եր., ՀՀ ՊՆ տեղեկատվ. վարչություն, 2007, էջ 30:

դասեր, զինավարժություններ և այլն<sup>1</sup>: Այդ օրերի ոգու և տրամադրվածության մասին է փաստում ապագա հետախույզ Տիգրան Դևոյանցը. «Այդ կռիւների միջոցին ես մեր Դոկտորսկայա փողոցի շրջանի թաղապետն էի եւ ձեռքիս տակ ունէի 82 կռուղներ: Թուրքերը, տեսնելով Երեւանի մէջ հայերի ցոյց տուած ուժը, այդ դասից հետոյ այլէս չհամարձակուեցին իրենց գլուխը բարձրացնել հայերի դէմ: Մէջտեղ եկան ազդեցիկ մոլլաները եւ հայ հոգեւորականների հետ «հաշտութիւն» կնքեցին...»<sup>2</sup>:

Ինքնապաշտպանությանը մասնակից երիտասարդությանը անհրաժեշտ ռազմական գիտելիքներ տալու, զինվորական մարտարվեստի նրբություններին հաղորդակից դարձնելու նպատակով նշանավոր հայդուկապետ Նիկոլ Դումանը Երևանում հիմնում է ռազմագիտական դպրոց, որում առաջին հերթին ընդգրկվեցին «Բորեաս» մարտական խմբի անդամները, որոնց ընտրությունը անձամբ կատարել էր Նիկոլ Դումանը. «Սեթոյի հավաստմամբ, բացի իրենից, Դումանը զինվորական դպրոցում ուսանելու համար ընտրում է ևս 12 հոգու, որոնց մեջ էին Դրոն, Տիգրան Դևոյանը, Մկրտիչ Աղամալյանը (Սահրադ), Վաղարշակ Գասպարյանը, Արտաշես Մելքոնյանը, Սմբատ և Խոսրով Եղիազարյանները, Խոսրով Տեր-Սահակյանը, որոնք առանց բացառության իրենց լավագույնս են դրսևորում ոչ միայն Անդրկովկասում ընթացող հայթորքական կռիվների ժամանակ և այլն»<sup>3</sup>: Այս դեպքերի ընթացքում Գալուստ Ալոյանը Սեդրակ Ջալալյանին և նրա ընկերներին, այդ թվում Տիգրան Դևոյանցին ընդունում է ՀՅ Դաշնակցության շարքերը՝ «Բորեաս» մարտական խումբ անունով: Որպեսզի մեկնեին «Էրզրի», «Բորեաս» մարտական խմբի անդամները պետք է անդամագրվեին ՀՅ դաշնակցությանը, զինվորագրվեին նրա ազդարարած սրբազան պայքարի կոչին՝ դառնալով հայրենիքին նվիրված մարտիկ:

Իր ժամանակին «Բորեաս» մարտական խմբի գործողությունները, հանդունգն և խիզախ պայքարը ըստ արժանվույն են գնահատել կուսակցական-ազգային գործիչները: ՀՅԴ հայտնի գործիչ Վահան Փա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Գևորգյան Հ.**, Սեդրակ Ջալալյանի (Սեթո) գործը և հուշերը, էջ 8:

<sup>2</sup> **Դեյեանց Տիգրան**, Կեանքիս դրուագներից, էջ 44:

<sup>3</sup> Տե՛ս **Գևորգյան Հ.**, Սեդրակ Ջալալյանի (Սեթո) գործը և հուշերը, էջ 20:

փազյանը (Կոմս) գրում է. «...Գիմնագիստ «Բորեաս»-ականները յանդգնությամբ եւ կատաղությամբ իրենք զիրենք գերազանցեցին: Տասնոց մավզերներով զինուած խումբերով գրոհ կուտային թրքական թաղեր, սարսափ եւ աւեր կը սփռէին ամէն կողմ: Մեր հարուածը շշմեցուցիչ էր: Թաթար խաները եւ մուղկանները սարսափած՝ արդէն փորձեր կը կատարէին հաշտութիւն միջնորդելու: «Մենք մեղաւոր չենք, մեր տգէտ ժողովուրդը խաբուեցաւ շէյթանէն (ռուսներէն), հին դրացիներ ենք, դադարեցնենք եղբայրասպան եւ աննպատակ այս սպանողը, այսպէս սկսան խոսիլ, երբ հարուածը կերան»<sup>1</sup>: «Բորեաս» խմբի անդամները շատերի համար դարձան օրինակ եւ նվիրումի մարդիկ: Երևանի զինվորական մարմնի հանձնարարությամբ նրանց ահաբեկչական գործողությունները ոչ միայն Կովկասում, այլև Ռուսաստանյան կայսրության տարբեր վայրերում ակնածանք առաջացրին մարտական խմբի անդամների նկատմամբ՝ վստահություն ներշնչելով, որ կարելի է սեփական ուժերին ապավինել եւ արժանի հակահարված տալ դարերով սեփական իրավունքները ոտնահարած թշնամուն: Հենց այս ամենն է նկատի ունեցել Մ. Թողլաքյանը, երբ գրել է. «Փոթորիկ» («Բորեասը» - Վ. Վ.) իր ահաբեկչական գործունեությամբ սարսափի մատնեց Կովկասի, եւ թէ ռուսական այլ վայրերու մէջ հայահալած տարրերը»<sup>2</sup>:

Տիգրան Դևոյանց մարդու, «Բորեաս» մարտական խմբի անդամի, ՀՅԴ նվիրյալի եւ հետախույզի կյանքն ընթացավ աննկարագրելի բարդ ու սրընթաց ելևէջումների ուղիով:

Երբ 1906 թ. վերաբացվեց Թիֆլիսի առևտրական դպրոցը, և ուսումնառությունը կիսատ թողած Տ. Դևոյանցը փորձեց այն ավարտել, սակայն դպրոցական վարչության բացասական վերաբերմունքի պատճառով, վերցնելով անձնական գործը, մեկնում է Երևան, որտեղ նույն տարում ընդունվում է տեղի զիմնագիայի 8-րդ դասարան և հաջողությամբ հանձնելով ավարտական քննությունները՝ ավարտում այն: Չորս տարվա ուսման ընթացքում Երևանի զիմնագիայում նրա դասընկերը Դրոն էր: Նրանք համատեղ ջանքերով ստեղծում են աշակերտական մարտա-

---

<sup>1</sup> Փափագեան Վ., Իմ յուշերը, Հատոր երկրորդ, էջ 432:

<sup>2</sup> Թողլաքեան Մ., Օրերուս հետ, Թեհրան, «Մասուն» հրատ., 1982, էջ 556:

կան խումբ, որին անդամակցում էին Դրոն (Դրաստամատ Կանայան), Ս. Ջալալյանը, Ղարիբյանը, Խոսրովը և ուրիշներ՝ թվով 9-10 հոգի<sup>1</sup>:

Մի շարք փաստական տվյալների համադրումից կարելի է ենթադրել, որ Երևանի գիմնազիայում ավարտական քննությունների ավարտից՝ 1906 թ. մայիսից հետո՝ որոշ ժամանակ անց, նա ընդունվում է Տոմսկի համալսարանի լեռնային ճարտարագիտության բաժինը, իսկ ուսման ծախսերը հոգում է նրա ընտանիքը: Այդուհանդերձ, Դևոյանցը, մասնավոր դասեր տալով, փորձում է օգնել իր ընտանիքին՝ հոգալով չորս եղբայրների և երեք քույրերի կարիքները: Տոմսկի համալսարանում ուսանելու տարիներին Դևոյանցը գործուն մասնակցություն է ունենում հեղափոխական շարժումներին՝ կապեր հաստատելով ՀՅ Դաշնակցության, Սոցիալիստ-հեղափոխական կուսակցության, հրեական Բունդի, լեհ հեղափոխականների հետ, աջակցում նաև Սիբիրից մի շարք հայ հեղափոխականների, այդ թվում ՀՅԴ անդամների փախուստի կազմակերպմանը:

Ռուսական պատմության մեջ հայտնի ռեակցիայի տխրահռչակ ժամանակաշրջանում (1907-1912 թթ.) հետադիմականությունը հարձակման է անցնում հեղափոխականների դեմ և կազմակերպում մեկը մյուսից անարդար դատավարություններ: Բանտարկվում է նաև Ս. Դևոյանցը, սակայն որոշ ժամանակ անց հոր երաշխավորությամբ ազատ է արձակվում ու մեկնում Երևան, որտեղ ապրում է մեկուկես տարի՝ գիմնազիայի քննությունների համար նախապատրաստելով աշակերտներին:

Լիժնյան դատավարության ընթացքում (Լիժնի՝ ցարական քննիչ, որը հայտնի է 1907-1912 թթ. ՀՅ Դաշնակցության նկատմամբ կազմակերպած անօրինական դատավարությամբ) Տոմսկի համալսարանի ուսանող Ս. Դևոյանցը կրկին ձերբակալվում է: Նրա բանտային ընկերն է դառնում Բաֆֆու «Խենթի» հերոսի նախատիպ Մամսոնը (Տեր-Պողոսյան, ըստ Բաֆֆու՝ Վարդան-Խենթ<sup>2</sup>), որին Դևոյանցը դասեր է տալիս՝

---

<sup>1</sup> Տե՛ս **Դեիոյեանց Ս.**, Դրաստամատ Կանաեան (Դրոն), «Հայրենիք», 1957, № 9 (379), էջ 11: Տե՛ս նաև **Գևորգյան Հ.**, Մեքաստացի Մուրադ, էջ 224:

<sup>2</sup> Ըստ Բաֆֆու՝ Վարդան-Խենթի նախատիպը եղել է **Մամսոն Տեր-Պողոսյանը** (1846- (ըստ Ս. Հայազնի (Ս. Մ. Պետրոսյանց) 05.05.1851) -1911): Թուրքական քսան հազարանոց

ձեռք բերելով ուսուցչի բարի համբավ: 1910 թ. վերջինս փախչում է բանտից, այդ գործում նրան օգնում է նաև հայ նշանավոր ահաբեկիչ, ազգային ազատամարտի նվիրյալ Յապոնը (Հովհաննես Պարոնյան)<sup>1</sup>: Դեռ-յանցի փախուստին, իր իսկ վկայությամբ, զգալիորեն աջակցում է Երևանի ՀՅ Դաշնակցության Կենտրոնական կոմիտեն: Դեռյանցը շուրջ մեկ ամիս հյուրընկալվում է Դրոյի մոտ (Սուրեն Էֆենդի): Դրոյի գործուն աջակցությամբ էլ Դեռյանցը ուղևորվում է դեպի Թավրիզ (Դրոն Դեռյանցին Թավրիզ տեղափոխող կառապանին հրահանգ է տալիս աչքի լույսի պես պահպանել վերջինին), որտեղ կար մեծ թվով հայություն<sup>2</sup>: Բայագետից Թավրիզ տանող ճանապարհին նա մի շարք ծածկանուններ է փոխում՝ Հակոբ Հակոբյան, Աշոտ Հովսեփյան և այլն: Թավրիզում այդ նույն ժամանակ ապաստանել էին ստոլիպինյան վարչակարգից և հատկապես լիժինյան հայատյաց հալածանքներից փախած հայ զինվո-

---

բանակը պաշարել էր Բայագետի բերդը, որտեղ ամրացել էր փոքրաթիվ՝ մոտ երկու հազարանոց ռուսական կայագործ: 23 օր շարունակ կապն արտաքին աշխարհի հետ կտրված է եղել: Պաշարվածներից մի հանդուզն և քաջ հայ երիտասարդ՝ Վարդան անունով, հանձն է առնում բերդապահի նամակը հասցնել ռազմաճակատի հրամանատար գեներալ Արշակ Տեր-Ղուկասովին: Գեներալ-լեյտենանտ Ա. Տեր-Ղուկասովի միջնորդությամբ Բայագետի պաշտպանության ժամանակ գործած սխրանքի համար ռուսական իշխանությունները նրան շնորհել են սպայի կոչում, Սուրբ Գեորգիի ոսկե խաչ և նշանակել ցմահ թոշակ: Հատկանշական է, որ Ս. Տեր-Պողոսյանը ետպատերազմյան տարիներին շարունակելով ծառայությունը ռուսական բանակում, կատարել է հետախուզական առաջադրանքներ, թարգմանչի պարտականություններ և այլ գործեր, բարձրացել սպայական աստիճանակարգով և արժանացել գնդապետի կոչման: // Տե՛ս «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», նույնբեր-դեկտեմբեր, 1985, թիվ 6, էջ 19: Տե՛ս նաև **Հայագն Տ. (Պետրոսյանց Տ. Մ.)**, Խնթերը. Մի տոհմի պատմության հետքերը, Եր., Հեղ. հրատ., 2008, էջ 14, 26-27:

<sup>1</sup> Այլ կերպ՝ **Պարոնյան Հովհաննես - Մարգիսջանյան Համբարձում (Յապոնացի Մաքս)**: ՀՅԴ նվիրյալներից է: 1903 թ. հայ եկեղեցու կալվածքները բռնագրավող ցարական ոստիկանների և կոզակների դեմ կազմակերպում է զինված դիմադրություն, իսկ արդեն 1905-1906 թթ. հայ-թաթարական ազգամիջյան կռիվների ժամանակ ահաբեկչական գործողությունների հեղինակ է դառնում և Շուշիում իրագործում ցարական մի շարք պաշտոնյաների, այդ թվում՝ քաղաքի գլխավոր ոստիկանապետ Մախարովի, պրիստավ Շումակիչի և այլոց ահաբեկումները: 1918-1920 թթ. նա դառնում է Ջանգեզուրում խորհրդային իշխանության դեմ զինված հակամարտության կազմակերպիչներից մեկը: Սակայն Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Յապոնը ձերբակալվում է և 1920 թ. հոկտեմբերին գնդակահարվում Գորիսի բանտում:

<sup>2</sup> Տե՛ս **Դեղեանց Տիգրան**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1944, № 1 (240), յունուար-փետրուար, էջ 77-82:



րական գործիչներ և զինյալ կամավորներ, այդ թվում՝ ՀՅԴ անդամներ Սարգիս Օհանջանյանը, Ստեփան Տեր-Մկրտչյանը (Մուրեն) և ուրիշներ, որոնք եռանդուն մասնակցություն են ցուցաբերում Թավրիզի, Մալմաստի, Ուրմիայի և Խոյի կազմակերպչական-կուսակցական աշխատանքներին<sup>1</sup>: Թավրիզում նրան դիմավորում է Սարգիս Կուկունյանի նախկին զինակիցը՝ Նորքեցի Ծերուկը՝ Բալաջանովը (Ստեփան Ստեփանյան), որը, փախչելով Սախալինի տաժանակիր բանտից, հաստատվել էր Թավրիզում: Այստեղ Տ. Դևոյանցը ռուսաց լեզու, երկրաչափություն և հանրահաշիվ էր դասավանդում Հայոց կեդրոնական դպրոցի բարձր դասարաններում: Ապրելով Նիկոլ Դումանի մոտ՝ նա մասնակցում է նրա խմբի աշխատանքներին՝ միաժամանակ լինելով մանկավարժական խորհրդի քարտուղար: Բաքվից Քրիստափոր (Խրիստափոր) Վերմիշևից առաջարկ ստանալով՝ Դևոյանցը թղթակցում է «Բագու» և «Կավկասկի տելեգրաֆ» թերթերին, որը շարունակվում է շուրջ 9 տարի՝ մինչև այդ թերթերի փակվելը: Իր հեղինակած նոթերը նա ստորագրում էր «Տիգր Դեվո», «Օմեգա» և «Աշոտ» կեղծանուններով, իսկ «Ալֆա» մականվամբ թղթակցում էր ռուս սոցիալիստ-հեղափոխականների հայտնի «Զնամյա տրուդա» և Թավրիզի «Առավոտ» թերթերին: Նա ակտիվորեն մասնակցելով նաև Թավրիզի ՀՅԴ տեղական խմբերի աշխատանքներին:

Շուտով Թավրիզում ևս դժվարություններ են առաջանում, և քանի որ առկա էր ձեռքակալման վտանգը (Պարսկաստանը հեղափոխական կոնվների մեջ էր, գահընկեց էր արվել Մահմեդ Ալի շահը, Թեհրանի ուղղությամբ շարժվում էր հայազգի հայտնի ռազմաքաղաքական և հասարակական գործիչ Եփրեմ խանը (Դավթյան Եփրեմ Դավթի՝ ծնված 1886 թ. Շամխորի շրջանի Բարսում հայկական հայտնի գյուղում), որը Թեհրանի դեմ գործող գորքերի զինվորական ընդհանուր հրամանատարն էր, և որին համարում էին Պարսկաստանի Նապոլեոն: Այդ իրադարձությունները փոթորկում էին Պարսկաստանի հասարակական-քաղաքական կյանքը, որում հայերը վճռական դեր էին կատարում), Դևոյանցը, ձգտելով խուսափել ձեռքակալման վտանգից, Նիկոլ Դումանի (նա գործում էր Թավրիզի շրջանում՝ Կարա-Բաբա անունով), Իշխա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Միմոնյան Հր.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք IV, էջ 184:

նի և այլոց հետ Դիլմանի վրայով անցնում է Վանա լճի շրջան, որտեղ նրանց ընկերակցում է Դրոն, և բոլորը միասին այցելում են Ախթամարի վանք: Այնուհետև պայմանավորվում են մեկնել Բայազետ և Էրզրումի վրայով անցնել Կ. Պոլիս<sup>1</sup>: Դետյանցին հաջողվում է ձեռք բերել Դիլմանի տաճկական հյուպատոսի վկայական իր համար՝ Հակոբ Հակոբյան անունով՝ Թավրիզից Դիլման-Վան ուղևորվելու համար: Իրականում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված համաձայնությամբ Դիլմանում հյուպատոսի պաշտոն չկար, այն չէր նախատեսված, և մինչև թուրքական իշխանությունները գլխի են ընկնում խաբեությունը, արդեն ուշ է լինում: Այդ ընթացքում որոշ քաշքշուկներից հետո Դետյանցին հաջողվում է ձեռք բերել Իմամ Կուլի Շահ Զադեի աջակցությունը, որը ռուսահպատակ Զիրբայիլ Բուդաղյանին ունեցած պարտքի դիմաց պատրաստականություն է հայտնում օգնել նրան լքելու երկիրը: Դետյանցը ընկերակցում է նաև երկու զինվորների և Սարգիս Օհանջանյանին, սակայն վերջինս մեկնելու պահին նախընտրում է մնալ Թավրիզում<sup>2</sup>:

Առաջին աշխարհամարտի նախօրյակն էր: Դեպի Կ. Պոլիս ճանապարհի մի մասը նրան ուղեկցում է Դրոն, որին քրդերը մեծ պատվով են վերաբերվում: Կ. Պոլսի ճանապարհին՝ Սամսունում, Տ. Դետյանցը հանդիպում է Խաժակին (Չազալյան Գարեգին, ծնված 1867 թ., 1915 թ. Մեծ եղեռնի զոհ), որին նույնպես հաջողվել էր ձեռքազատվել Լիժինյան դատավարության կապանքներից և բանտային կյանքի շրթաններից և հայտնվել Սև ծովի առափնյա Օրդու քաղաքում (այստեղ մեծ թվով հայություն կար՝ մի մասը լուսավորչական, մյուսը՝ բողոքական դավանանքի): Վերջինս Տ. Դետյանցին առաջարկում է այդ քաղաքի ազգային վարժարանների տեսուչի պաշտոնը՝ ավելի քան 20-25 դասատուների և 800-ի չափ աշակերտության նկատմամբ վերահսկողության իրավունքով: Տ. Դետյանցը միջնակարգ դպրոցի տեսուչի պաշտոնը ստանձնելու համար հանձնում է համապատասխան քննություն և ստանում «մաթեմատիկայի մասնագետ» տիտղոս<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Դետյանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1944, թիւ 1 (240), յունուար-փետրուար, էջ 90:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 86-88:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, մարտ-ապրիլ, 1944, թիւ 2 (241), էջ 88-90:

1913 թ. գարնանը Տ. Դևոյանցը «Աշոտ Հովսեփյան» կեղծանունով գտնվում էր Կ. Պոլսում, իսկ սեպտեմբերին արդեն Օրդու քաղաքում էր, ուր ստանձնում է ազգային երկու դպրոցների տնօրինությունը: Այդ ժամանակամիջոցում նա շարունակում էր աշխատակցել մի շարք ռուսական թերթերի. նրա թղթակցություններում կային բավականաչափ ուշագրավ տվյալներ թուրքական զորքերի տեղաշարժերի մասին:

Մակայն սկսվում է Առաջին աշխարհամարտը, և փորձելով խուսափել զորակոչից (1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո համապատասխան օրենքի համաձայն հայերին ևս սկսում են զորակոչի ենթարկել, մինչդեռ նախկինում վերջիններս զինվորական տուրք էին վճարում դրա փոխարեն): Եվ քանզի Դևոյանցը արդեն թրքահպատակի անձնագիր ուներ՝ Ղահրաման Աբրահամյան անունով, նա հարցումով դիմում է Բաթումի և խնդրում իրեն ուղարկել պարսկահպատակի անձնագիր, որը շուտով ստանալով՝ դրանով ներկայանում է Կ. Պոլսի ռուսական փոխհյուպատոս Մաքսիմովին, որը նրան աջակցում է բոլոր հարցերում: Նա ուղևորվում է Բաթումի: Երբ ռուսական զորքերը գրավում են Էրզրումը (1915 թ. դեկտեմբերի 28 - 1916 թ. փետրվարի 18) Մաքսիմովը Կովկասյան բանակի սպայակոյտում էր: Տ. Դևոյանցը մտերմանում է նրա հետ, և երբ նա 1917 թ. փետրվարյան օրերին ձերբակալվում է բանակի զինվորների և բանվորների խորհրդի կողմից, Տ. Դևոյանցի միջնորդությամբ նրան ազատում են կալանքից<sup>1</sup>:

Տ. Դևոյանցը Բաթումիի ճանապարհին շարունակում է տարաբնույթ նյութեր հայթայթել հայկական շարդերի ու թուրքական զորահավաքի, ինչպես նաև տարածաշրջանի իրադարձությունների մասին՝ ռուսական բանակի հետախուզական մարմիններին ներկայացնելու համար: Այդ մասին նա ունի հետաքրքիր դիտարկում. «...Ճանապարհին շփման մեջ մտայ տաճիկների հետ, որոնք Պոլսէն կը մեկնէին Մամսոն, Օրդու, Տրապիզոն, Բիզէ եւ անոնցմէ կարողացայ շատ հարուստ նիւթեր քաղել թրքական զորահաւաքի մասին. Այդ նիւթերը կը հաւաքէի թղթակցութիւններու համար, առանց գիտնալու, որ ստով շատ մեծ ծառայութիւն պիտի մատուցանեմ ռուսական բանակին: Հետո կարողացայ

---

<sup>1</sup> Տե՛ս **Դեյեանց Տ.**, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 2, յունւար-մայիս, էջ 48:

տանել եւ իմ տետրակները – նօթագրութիւններս Մակու-Թավրիզ-Վան-Բայազէտ-Էրզրում-Տրապիզոն-Պոլիս ճամբորդութեանս մասին: Այդ նօթագրութիւններս աշխարհագրական, տնտեսական, ցեղերու փոխարարեքութեանց եւ այլ խնդիրներու մասին, հետագային ինձ շատ օգնեցին թէ՛ որպէս թղթակցի եւ թէ՛ իբրեւ հետախոյզի»<sup>1</sup>: Բաթումիում նրան սպասում էին, քանզի այդ մասին Մաքսիմովը տեղեկացրել էր Բաթումիի զինվորական իշխանություններին<sup>2</sup>: Լիժինյան դատարանի կողմից դատապարտված էր և դեռևս արդարացված չէր, նրան ներում շնորհելու միջնորդությամբ է հանդես գալիս Պետական Դումայի անդամ Միքայել Պապաջանյանը: Այդուհետ Տ. Դևոյանցը արդեն կարող էր անարգել վերադառնալ Ռուսաստան:

Այդ ամենից հետո Տ. Դևոյանցը նորից փորձում է մտնել Թիֆլիսի զինվորական դպրոց<sup>3</sup>, սակայն այդ մտադրությունը իրագործել չի հաջողվում: Դա 1914 թ. հոկտեմբերին էր՝ Կ. Պոլսից վերադառնալուց որոշ ժամանակ անց: Հանգամանքների բերումով նա կրկին հանդիպում է իր նախկին դասընկերոջը՝ Դրոյին, և մտնում Դրոյի կամավորական խմբի հեծելազորի մեջ: Դրոն Տ. Դևոյանցին իր հետ տանում է Իգդիր, նրան է նվիրում մի ճերմակ ձի՝ Չենյակի<sup>4</sup> հեծելազորի հարյուրյակում ծառայելու համար, և պատվիրում գրել այդ գորամասի կռիվների պատմությունը<sup>5</sup>: Իգդիրում շուրջ 20-25 օր Դևոյանցը հյուրընկալվում է Դրոյի մոտ: Այստեղ էր գտնվում նաև Ռուսաստանից փախած Վահան Մինախոբյանը: Տ. Դևոյանցը պաշտոնապես կցված էր այդ ժամանակ Իգդիրում հաստատված Չորրորդ կորպուսի սպայակույտին, բայց աշխատում էր հայկական «շտաբում»: Այդ ժամանակից սկսած՝ նա լիովին նվիրվում է հետախուզական գործունեության:

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 49:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> **Նանուսյան Հարություն** - Առաջին աշխարհամարտի տարիներին հեծելազորի հարյուրյակի պետ էր: Չենյակը գոհվել է 1917 թ.: Տե՛ս «Աշխատավոր». Թիֆլիս, 3. VI. 1919, թիւ 108:

<sup>5</sup> Տե՛ս **Դեյեանց Տ.**, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 2, յունւար-մայիս, էջ 49: **նույնի**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1943, թիւ 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 52:

## 2. Վան-Մանազկերտի 1915 թ. հուլիսյան նահանջը և Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեությունը

Առաջին աշխարհամարտը նոր էջ է բացում Տ. Դևոյանցի կենսագրությունում. նա ներքաշվում է հետախուզական բուռն գործընթացների մեջ: Երբ կազմավորվում է Պ. Օգանովսկու<sup>1</sup> գլխավորությամբ գործող զորամասը, որի սպայակազմը հաստատվում է Իգդիրում, Ազգային բյուրոն ընտրում է մի «կարգադրիչ մարմին», որը պետք է զբաղվեր կազմավորական ջոկատների կազմակերպման և ուղղորդման գործերով: Այդ մարմնի կարգադրությամբ Իգդիրում ստեղծվում է «Հայկական շտաբ», որտեղ Տ. Դևոյանցը ռուսական զինվորական իշխանությունների կամ ավելի ճիշտ՝ ռուսական չորրորդ կորպուսի սպայակույտի հետ հարաբերությունների սպահովման պատասխանատուն էր, իսկ Մահակ Մատինյանը՝ տնտեսական մասի վարիչը: Դևոյանցն այդ մասին գրում է. «Վարելով հայկական «շտաբի» գործերը՝ ես առիթ էի ունենում միաժամանակ շփուելու ամեն օր հարիւրաւոր հայ գաղթականների եւ փախստականների հետ, որոնք շատ յաճախ շատ կարելոր տեղեկութիւններ էին տալիս թշնամու ուժերի դասաւորութեան եւ շարժումների մասին: Այդ լուրերը եւ յանձնում էի ռուսական Չորրորդ կորպուսի

---

<sup>1</sup> Գեներալ **Օգանովսկի Պյոտր Իվանովիչ (Օհանով, Օհանյան Պետրոս Հովհաննէսի,** 26 օգոստոսի 1851(այլ աղբյուրների վկայությամբ՝ 1866) -1917): Ազնվական, ռազմական գրող: 1915 թ. հունվարի 24-ից դարձել է 4-րդ Կովկասյան կորպուսի հրամանատար, 1915 թ. դեկտեմբերի 19-ից ընդգրկվել է Պետրոգրադի Ռազմական օկրուգի սպայական պահեստագործի աստիճանակարգում, իսկ 1916 թ. սեպտեմբերի 16-ից ստանձնում է Հյուսիսային ռազմաճակատի 1-ին բանակի 3-րդ բանակային կորպուսի հրամանատարությունը: Տե՛ս *Маршалы, генералы и адмиралы армянского происхождения в Санкт-Петербурге. Биографический справочник, Санкт-Петербург, Изд-во «Роза ветров», 2013, с. 181-182:* Տե՛ս **Հայազն Տ. (Պետրոսյանց Տ. Մ.)**, 1000 հայազգի գեներալներ, ծովակալներ. Կենսագրական հանրագիտարան, 2009, էջ 321: **Հայազն Տ, Պետրոսյան Հ.**, 200 հայ զորավարներ, Երևան, Հեղ. հրատ., 2011, էջ 104:

սպայակոյտին եւ պատճենները՝ Հ. Յ. Դեան Բիւրոյին ու Հայոց Ազգային Խորհուրդին»<sup>1</sup>: Դեռանցը կարևոր էր համարում ռուսական Կովկասյան բանակի 4-րդ բանակային կորպուսի հայկական շտաբի գործունեությունը՝ որպէս բազմաթիվ հարցերի լուծման կարևոր կենտրոնատեղի. «Կը լուսաբանէին ազգային, զինուորական, տնտեսական, աշխարհագրական, հետախուզական եւ այլ բազմազան հարցեր: Իգդիրի հայկական այդ շտաբն էր, որ յաջողոց ստեղծել Ալաշկերտ-Բայազետ շրջանի հայկական վարչական մարմինը, նախագահութեամբ Սիրական Տիգրանեանի»<sup>2</sup>:

Տ. Դեռանցը թուրքական ուժերի մասին Իգդիրի հայկական շտաբի միջոցով ձեռք բերած արժեքավոր տեղեկությունները հաղորդում էր Պ. Օզանովսկու գլխավորած կորպուսի հետախուզական բաժնի պետ կապիտան Վլադիմիր Օզովին՝ հայերի և հայկական հարցի նկատմամբ շատ լավ տրամադրված մի անձնավորություն, որի ջանքերով ստեղծվեց 50 հոգու համար սպաներ պատրաստելու դպրոց<sup>3</sup>, իսկ Քանաքեռում հիմնվել էր սպաների պատրաստման դպրոց հայ կամավորական խմբերի համար: Այստեղ Օզովը<sup>4</sup> նաև դասախոսում էր: Վ. Օզովի մասին

---

<sup>1</sup> **Դեռանց Տ.**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1943. թիւ 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 53:

<sup>2</sup> **Դեռանց Տ.**, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 2, յունւար-մայիս, էջ 51:

<sup>3</sup> Տե՛ս **Վրացեան Ա.**, Հին թղթեր նոր պատմութեան համար, էջ 87:

<sup>4</sup> **Վլադիմիր Անտոնի [Անսա] Օզով (Օզովս Կոլդեմար-Օսկար Ի.**, կեղծանունը՝ «Զուլյա», Բալթիական գէներալ – 05.10.1884-05.06 (այլ տվյալների համաձայն՝ 12.07) 1949 թթ.) – 1914 թ. ավարտել է Նիկոլայան 1-ին աստիճանի ռազմական ակադեմիան: Ծառայել է Կովկասի ռազմական օկրուգի հետախուզական բաժնում, այնուհետև լիազորվել է ձևավորելու հայկական ազգային զորամիավորումները, մասնակցել է Վան-Դիլմանի ռազմական օպերացիային, սակայն 1915 թ. նոյեմբերից տեղափոխվել է գերմանական ճակատ՝ որպէս լատիշական 2–րդ հրաձգային բրիգադի շտաբի պետ, իսկ 1917 թ. ընտրվել է լատիշական հրաձիգների Գործադիր կոմիտեի և Միացյալ լատիշական գնդերի խորհրդի նախագահ, 1919 թ. Հյուսիսկովկասյան բանակի կազմակերպիչներից մեկն է դառնում, իսկ հոկտեմբերից գլխավորում լատվիական բանակի շտաբը և օպերատիվ բաժինը: 1920 թ. դառնում է լիտվական բանակի հրահանգիչ, մասնակցում լեհերի դեմ պատերազմին (որպէս ԽՍՀՄ-ի հետ մերձեցման կողմնակից), 1922 թ. դասավանդում է Լատվիայի ժողովրդական տնտեսության ինստիտուտում որպէս պրոֆեսոր, 1934 թ.՝ Լատվիայում դիկտատուրայի հաստատումից հետո՝ 1935 թ. վտարվում է երկրից, ապրում Ֆրանսիայում, իսկ այնուհետև բանվոր-գյուղացիական Կարմիր բանակի գլխավոր շտաբի հետախուզական վարչության առաջադրանքով հաճախ մեկնում է Լոնդոն, մասնակցել է նաև Իսպանիայի քաղաքացիական պատերազմին (1936-1939 թթ.), իսկ արդեն 1940 թ. հայտնվել է

դրական կարծիք է հայտնել Տ. Դեոյանցը. «Դ. Կորպուսի սպայակոյտի հետախուզական բաժնի պետն էր սպայակոյտի գլխապետ Վլադիմիր Անտոնի Օզոլը, ազգությամբ լատիշ, շատ ազատամիտ, դեպի հայերը լաւ տրամադրւած անձ մը: Անոր ջանքերի շնորհիւ Քանաքեռի մէջ հիմնեցաւ սպաներ պատրաստող դպրոց մը հայ կամաւորական խումբերու համար: Ինքն էր գլխաւոր դասախոսը: Օզոլ շատ օգտակար եղաւ կամաւորական շարժման եւ գաղթականութեան, բայց դժբախտաբար, Վանի գրաւելէ յետոյ փոխադրուեցաւ արեւմտեան ճակատը աւելի վար պաշտոնով, որովհետեւ «համարձակած» էր ռուս սպաներու ճաշկերոյթի մը միջոցին առաջարկել խմել «հայ ազատատենչ ժողովրդի եւ անկախ Հայաստանի կենացը»<sup>1</sup>: Վ. Օզոլը, Քանաքեռում աշխատելով իբրև «ինստրուկտոր»<sup>2</sup> (հրահանգիչ)՝ աջակցել է հայկական դրուժինաների կազմակերպման և համակարգման գործին, օժանդակել կամավորականներին տարբեր հարցերում՝ այդ թվում հետախուզության հմտություններ ուսուցանելով, օգնել գաղթականներին և Ս. Վրացյանի վկայությամբ՝ «լուրջ լատիշ սպա էր»<sup>3</sup>: Վ. Օզոլը Տ. Դեոյանցի դիպուկ բնութագրմամբ նաև «շատ հմուտ հետախոյզ էր»<sup>4</sup>: Նա ընդգրկվել է Խեչոյի հետախուզական-առաջապահ հեծելավաշտում՝ ակտիվ հետախուզելով դեպի Վան տանող ճանապարհը և հարակից շրջանները, ինչը գործնականում էապես նպաստեց, որ Արարատյան գունդը առանց հակառակորդի հետ որևիցէ լուրջ ընդհարման և լուրջ ռազմական միջադեպերի

---

Ֆրանսիայում, որտեղ գլխավորել է սովետական ռազմական հետախուզության գործակալական ցանցը, կապեր հաստատել ֆրանսիական դիմադրության շարժման հետախուզության հետ: Վ. Օզոլը 1944 թ. նոյեմբերին՝ Փարիզի ազատագրումից հետո, ձերբակալվել է ֆրանսիական հակահետախուզության կողմից և 1945 թ. մայիսին տարվել Մոսկվա, մեղադրվել բրիտանական հետախուզության հետ համագործակցելու համար, սակայն 1945 թ. արդարացվել է: Կյանքի վերջում՝ 1945 թ. հուլիսից ապրել է Լատվիայում և դասավանդել Ռիգայի համալսարանում և մանկավարժական համալսարանում: Տե՛ս Разведка и контрразведка в лицах: Энциклопедический словарь российских спецслужб, с. 365: **Գանի Ա. Բ.**, նշվ. աշխ., էջ 297, 481:

<sup>1</sup> **Դեոյանց Տ.**, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 2, յունար-մայիս, էջ 51:

<sup>2</sup> Տե՛ս **Վրացեան Ս.**, Հին թղթեր նոր պատմութեան համար, էջ 125-126:

<sup>3</sup> **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով. Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ, Գ հատոր, Պէրուր, տպ. «Մշակ», 1963, էջ 67:

<sup>4</sup> **Դեոյանց Տ.**, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 2, յունար-մայիս, էջ 52:

մտնի Վան<sup>1</sup>: Հաճախելով սպայական դասընթացներին՝ Դևոյանցը գիտելիքներ էր ձեռք բերում հետախուզական գործի կազմակերպման մասին: Միաժամանակ, այստեղ ձեռք բերված տեղեկությունները, պայմանավորվածության համաձայն, ուղարկվում էին Ռոստոմին, որը Կամավորական խմբերի կարգադրիչ մարմնի անդամ էր<sup>2</sup>:

Տ. Դևոյանցը ծավալել էր բազմաբնույթ գործունեություն: Նրա համար հետախուզական տեղեկատվության աղբյուրներ էին իր իսկ ստեղծած գործակալական ցանցը, որոնցից շատերը հայոց ազատամարտի գաղափարին նվիրված մարդիկ էին և լավ գիտեին Արևմտահայաստանը, նրա քաղաքները և գյուղերը, սովորույթները և կենցաղը: Դևոյանցի համար անհրաժեշտ տեղեկատվության կարևոր աղբյուրներ էին գերի ընկածները, դասալիքները, բազմահազար գաղթականությունը, այդ թվում՝ քրդերը, որոնց միջավայրը նա լավ գիտեր: Այս ամենի շնորհիվ Դևոյանցը ձեռք էր բերում «շատ արժեքավոր տեղեկություններ թրքական ուժերու մասին»<sup>3</sup>: Բոլոր տեղեկությունները անընդմեջ փոխանցվում էին Օգանովսկու գլխավորած IV Կովկասյան կորպուսի հետախուզական բաժանմունքին: Դևոյանցի տեղեկատվության իսկությունը ստուգելու համար փաստերը համադրվում էին, ճշտվում էին տարբեր ձևերով: Այնուհետև դրանք հաշվի էին առնվում տարբեր բանակային ստորաբաժանումների կողմից իրականացվող գործողությունների ծրագրերը մշակելիս:

Դևոյանցն ամենուր էր, և նրա հավաքած տեղեկությունը խիստ կարևորվում էր: Դևոյանցի և իր ընկերների գործունեությունը և հերոսական նվիրվածությունը հայրենիքի գաղափարին բարձր էին գնահատվում Կովկասյան ռազմաճակատի բարձրագույն սպայակույտի՝ գորահրամանատարների և գեներալների, շարքային զինվորների կողմից: Այդ փաստի մասին է վկայում Ե. Մապովսկու պնդումը, որ «ռուսական բանակի Գլխավոր շտաբը հակառակորդի մասին առավել կարևոր և կենսականորեն անհրաժեշտ հետախուզական բնույթի տեղեկություն-

---

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Ֆ.Պ – 402, գ. 1, ց. 22, թ. 46:

<sup>2</sup> Տե՛ս **Դեյեանց Տ.**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1943, թիւ 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 52-53:

<sup>3</sup> **Դեյեանց Տ.**, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 2, յունար-մայիս, էջ 51-52:



ները ստանում էր հենց Թուրքիայում բնակվող հայերից»<sup>1</sup>: Այդ մասին հիշատակում է նաև Վ. Ահարոնյանը՝ նշելով, որ Կովկասյան ռազմաճակատի հրամանատար գեներալ Ն. Յուդենիչը հայ գործակալների միջոցով լավատեղյակ էր տիրող կացությանը<sup>2</sup>:

Տ. Դևոյանը իրադարձությունների կիզակետում էր: Նրա ձեռքբերած հետախուզական տեղեկությունները կոչված էին նպաստելու գեներալ Պ. Օգանովսկու գլխավորած IV կովկասյան կորպուսի գործունեության արդյունավետությանը, թիկունքային խնդիրների լուծմանը, ինչպես նաև ավազակաբարո քրդական աշիրեթական խմբերի սանձարձակ գործողությունների կանխմանը: Հնարավորության դեպքում Տ. Դևոյանը ամենևին էլ չէր բացառում նաև նրանց հետ ընդհանուր լեզու գտնելու կամ ծայրահեղ դեպքում փորձելու հասնելու նրանց չեզոքությանը հայ-թուրքական առճակատման մեջ: Տ. Դևոյանցն այդ կապակցությամբ գրում է. «Մէկ օր ալ Օգանովսկին կանչեց զիս եւ խնդրեց հաւաքել մանրամասն տեղեկութիւններ Դամբաղի շրջանի քրդական ուժերու մասին եւ տալ իրեն այդ շրջանի քարտեզը: Հաւաքեցի Իգդիրի շրջանը ապրող նալբանդները, որոնք միշտ կերթային Արարատի գիւղերը քիւրդերու ձիերը նալելու, եւ անոնց հարցուփորձ ընելով՝ գծեցի Դոմբաղի շրջանի քարտեզը՝ տալով մանրամասն տեղեկութիւններ քիւրդ ցեղերու, պետերու, անոնց փոխարաբերութեանց մասին եւ թէ ինչպէս դիւրութեամբ կարելի է չեզոքացնելով ցեղապետները, գրաւել այդ շրջանը: Հետեւանքը եղաւ այն, որ 1000 զինուորով եւ մեկնեցայ այդ շրջանը եւ փաղաքշելով, կարելի եղաւ բերել տալ ցեղապետները, եւ ամենքը ձերբակալելէ վերջը՝ մնացած խուժանը կռուով քշել Թուրքիոյ ներսերը: Այդ գործողութիւնը յաջող գլուխ բերելուս համար ես ստացայ սպայի առաջին աստիճանը, թէեւ կը շարունակէի աշխատիլ հայկական շտաբի մէջ»<sup>3</sup>: Բացի այդ, ըստ Դևոյանցի, խիստ անհրաժեշտություն

---

<sup>1</sup> **Масловский Е. В.**, Мировая война на Кавказском фронте в 1914-1917 гг.: Стратегический очерк, Париж, Возрождение, 1933, с. 86:

<sup>2</sup> Տե՛ս **Ահարոնյան Վ.**, Կովկասեան ռազմադաշտերը եւ հայերը, «Հայրենիք», 1955, թիւ 10 (356), հոկտեմբեր, էջ 26:

<sup>3</sup> **Դեյլեանց Տ.**, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 2, յունար-մայիս, էջ 52:

առաջացավ աջակցություն ցուցաբերելու իրեն ենթակա հետախույզներին «Թիւրքիա ուղարկելու եւ վերադարձի միջոցին»<sup>1</sup>:

Միառժամանակ անց Տ. Դևոյանցը հայտնվում է Կովկասյան ռազմաճակատի ընդհանուր սպայակույտի հետախուզական բաժանմունքի պետ, գնդապետ Դ. Պ. Դրացենկոյի<sup>2</sup> ուշադրության կենտրոնում, որը սկզբում հայ հետախույզի մասին հարցում է անում Օգոլին, որից հետո դիմում է Ռոստոմին՝ խնդրագրով Տ. Դևոյանցին Բզդիբի հայկական շտաբից դուրս բերելու և իր տրամադրության տակ դնելու՝ հետախուզական հատուկ աշխատանքների համար, մասնավորապես Վան-Մանազկերտի շրջանում գործելու նպատակով, որպեսզի ապահովվի կապը Մուշի և Բիթլիսի միջև: Դևոյանցն այդ մասին գրում է. «Հայ Ազգային Խորհուրդի, Հ.Յ. Դեան եւ ռուսական սպայակույտի կողմից յատկացուած 1.000 ըուրլի ամսականով ինձ յանձնարարուեց տեղափոխուել նոր գրաւուած Մանազկերտ՝ գօր. Աբացիեի բանակի շրջանի մէջ հետախուզութիւնը կազմակերպելու համար...

Ձօր Աբացիելը ծագումով մահմեդական էր, հայատեաց եւ թրքասեր, իր տրամադրութիւններն էլ անդրադառնում էին իր շրջանի զօրքերի վրայ»<sup>3</sup>:

Ամեն դեպքում, չնայած այդ ամենին, Դևոյանցը անդադար շարժման մեջ էր, և իր գործընկերներ Տիգրանի և Խեչոյի հետ դժվարությամբ հայթայթում էր անհրաժեշտ տեղեկություն, վերջիններիս հետ ապահո-

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 54:

<sup>2</sup> **Դրացենկո Դանիլ Պավելի** (08.12.1876 -1945) - Կովկասյան ռազմաճակատի ընդհանուր սպայակույտի (Գլխավոր շտաբի) հետախուզական բաժանմունքի պետ, գնդապետ: Այդ պաշտոնում նա մնաց մինչև 1916 թվականը: 1916 թ. ապրիլից հանդիսացել է 39-րդ հետևակային դիվիզիայի շտաբի պետ, 1917 թ. ապրիլի 5-ից՝ Բաքվի 153-րդ հետևակային գնդի հրամանատար: Մինչև 1918 թ. գտնվել է Անդրկովկասում: 1918-1920 թթ. ծառայության է անցել Ռուսաստանի հարավում գործող զինված ուժերի՝ Ա. Դենիկինի Կամավորական բանակում, 1920 թ. դարձել է գեներալ-լեյտենանտ: Մահացել է տարագրության մեջ: Տե՛ս **Դևոյանց Տ.**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1944, թիւ 2 (241), մարտ-ապրիլ, էջ 94: Տե՛ս **Դանիլ Ա. Բ.**, նշվ. աշխ., էջ 213, 458, 587:

<sup>3</sup> **Դևոյանց Տ.**, Հետախույզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 2, յունար-մայիս, էջ 54:

վում կապը Մուշում և Մասունում գտնվող Ռուբեն Տեր-Մինասյանի<sup>1</sup> և Վահան Փափազյանի հետ:

Դրանից հետո Դրացենկոյի պահանջով Տ. Դևոյանցը և Ռոստոմը մեկնում են Կարս, որտեղ գտնվում էր բանակի ողջ սպայակազմը:

Հայկական ջարդերի նախօրեին ևս Դևոյանցը, մշտապես կապի մեջ գտնելով Ռուբենի և Վ. Փափազյանի հետ, զբաղվում էր հետախուզական բնույթի անհրաժեշտ տեղեկություններ հավաքելով և նրանց տեղյակ պահում պատերազմական անցուղարձին և ռուսական զորքերի տեղաշարժերին: Այդ է փաստում Վ. Փափազյանը իր հուշերում՝ հայտնելով Մուշ-Մասունում և Տարոնում իրավիճակի և ժողովրդի մեջ իշխող տրամադրությունների մասին: Ժողովուրդն անհամբեր սպասում էր ռուսական զորքերի մոտենալուն՝ դա համարելով իր համար փրկության եզր և հնարավորություն խուսափելու պատուհասած արհավիրքից՝ ջարդերից և թուրքական զազանություններից: Այս առումով փոքրիկ, բայց ուշագրավ գրառման ենք հանդիպում Վ. Փափազյանի մոտ. «...մարտի վերջին օրերուն էր:...Տարօն ռուսական բանակէն սուրհանդակներ էին եկած...»

Դևոյեանը կը գրեր, թէ ռուսական բանակը Պուլանըղ է և շուտով Ս. Կարապետ պիտի հասներ, կը յորդորէր քիչ մըն ալ դիմանալ: Կը խնդրէր մանրամասն և ստոյգ տեղեկութիւններ մէր շրջաններու թրքական կանոնաւոր և անկանոն ուժերու մասին»<sup>2</sup>:

Դա լավ են զգացել ժամանակակիցները, որոնք ներկայացնում են այն հույսերի և սպասելիքների մթնոլորտը, որ իշխում էր այդ ժամանակաշրջանում, այն ապրումները և տրամադրությունները, որոնցով ապրում էր Վանի և Վասպուրականի հայությունը: Դա շատ պերճախոս

---

<sup>1</sup> Ռուբեն (Տեր-Մինասյան Ռուբեն Կարապետի, 07.05.1882 թ. [ն.տ. 19.05.1882 թ.] - 27.11.1951 թ.) - Հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Մասնակցել է հայդուկային շարժմանը: Իրականում նրան չի հաջողվել կազմակերպել Մասունի հայության ինքնապաշտպանությունը: Եղել է ՀՀ խորհրդարանի անդամ, 1920 թ. մայիսից՝ ՀՀ Ներքին գործերի և ռազմական նախարար: Ակտիվորեն մասնակցել է 1920 թ. մայիսյան ապստամբության ճնշումը: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո հեռացել է արտասահման:

<sup>2</sup> Փափազեան Վ., Համաշխարհային պատերազմը եւ Տարօնի աշխարհը: 1914-1915 թթ., էջ 76:

է նկարագրում Կ. Մասունին<sup>1</sup>. «Այդ օրերու յուշագրողներէն կ'իմանանք, թէ ամէն օր բերնէ բերան ռուս բանակի յառաջխաղացքի մասին կը խոսէին և կը յուսադրուէին: Այդպէս էր Հայոց Առաջնորդարանը, այդպէս էր Կ. Կոմիտէն, այդպէս էին շրջանի բոլոր վարիչները:

Ճիշդ այդ օրերուն, Մարտի վերջերը կամ Ապրիլի 3-4-ին, Մուշ կը հասնին երկու գաղտնի սուրհանդակներ, քրտախոս Տիգրանը և Խէչօն, որոնք Մանազկերտէն Տ. Դեւոյեանի մէկ գրութիւնը կը հասցնեն Մուշ, Վ. Փափագեանին: Յոյսի և սպասումի աւետարբեր սուրհանդակներ կը դառնան այդ երկու անձնագոհ տղայքը<sup>2</sup>: Կ. Մասունին այնուհետև վկայում է, որ Դեւոյանցի գրությունը ոգևորություն առաջ բերեց, ռուսական զորքերի մոտալուտ գալստյան մասին լուրերը սպասված էին. «Տիգրան Դեւոյեանի այս նամակը յուսալու և սպասելու մտայնութիւնը աւելի կը զօրացնէր: Նամակի մէջ ըսուած էր, թէ ռուսական զորքերը «շուտով պիտի հասնին Մք. Կարապետ»: Այս լուրը կը հաղորդուի Մասուն բարձրացած գործիչներուն»: Ժողովուրդը կըլսէ և իր ընկճուած վիճակէն ոգևորուած դուրս կու գայ:

Յոյսի և սպասման ոգևորութիւն մըն էր այս խանդավառութիւնը: Կորովի յարձակողականով մը պատեհութենէն օգտուելու մտածումը կը մնար անվճռականութեան աստիճանին վրայ: Յուսադրութիւնը շօշափելի իրողութիւններու կը կրթնէր: Խնուսի և կռուի ճակատներուն մօտ գտնուած գիւղերէն տեղեկութիւններ կը հասնէին Մուշ, իրենք թնդանօթներու ձայնը կ'առնեն առաւօտեան արշալոյսներուն»<sup>3</sup>:

Դա անչափ կարևոր էր, քանզի Վանում հերոսամարտի բռնված հայությունը ակնկալում էր հաղթական ելք թուրքերի հետ գոյակովում: Հայ մարդը սրտատրոփ ակնկալում էր, որ ռուսական զորքերը աճա-

---

<sup>1</sup> **Մասունի Կարո (Կարապետի) Ղազարի** (15.07.1888 –11.08.1977) – Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ հայտնի գործիչ, պատմաբան: Առաջին աշխարհամարտի տարիներին հայկական կամավորական շարժման կազմակերպման ակտիվ մասնակից: 1919 թ. ընտրվել է ՀՀ խորհրդարանի անդամ, այնուհետև՝ նշանակվել Ալեքսանդրապոլի նահանգապետ, ակտիվորեն մասնակցել բոլշևիկների մայիսյան ապստամբության ճնշմանը: 1921 թ. մասնակցել է փետրվարյան հակաբոլշևիկյան խռովությանը, եղել «Հայրենիքի փրկության կոմիտեի» անդամ՝ զբաղեցնելով Ներքին գործերի նախարարի պաշտոնը:

<sup>2</sup> **Մասունի Կ.**, Պատմություն Տարօնի աշխարհի, էջ 781:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 781-782:

պարեհին ժամանակին տեղ հասնել, ինչը շատ կարևոր էր եղեռնից մազապուրծ հայության բեկորների կյանքի ապահովության տեսանկյունից: Վ. Փափազյանը նաև բազմանշանակ ավելացնում է, որ այդ մասին տեղեկությունը արագորեն ընկավ ժողովրդի ականջը. «...բարձրացավ ժողովրդի ընկձուած ոգին, երբ ռուսական բանակը Մանազկերտէն Պուլանընի կը յառաջանար, իսկ ձախ թեր Վասպուրականէն կը յառաջանար Ախլաթ և Դատովան»<sup>1</sup>: Արձագանքը շատ համապատասխան էր օրվա տրամադրություններին: Կ. Մասունին իրավիճակի խորքային ըմբռնումով փաստում է. «Տիգրան Դեոյեանի նամակին Մուշի պատասխանատու գործիչները կը պատասխանեն և պետք եղած տեղեկութիւնները կը հաղորդեն, աւելցնելով, որ շրջանը ծայրայեղորէն վտանգուած է և ջարդի ենթակայ է, եթէ շուտով ռուսական բանակը և կամաւորական գունդերը չհասնին: Այդ նամակին մէջ կը յայտնէին, թէ ճակատագրական կռուի մը պարագային, շրջանը հազիւ ութ օր կրնայ դիմանալ. զէնքի և ռազմամթերքի պակասութեան պատճառաւ»<sup>2</sup>:

Առհասարակ հայությունը այդ պահին կանգնած էր աղետալի վիճակի առջև. ջարդերի ալիքը անցնում էր մի գավառից մյուսը, ավելացրած դրան քրդական ավազակախմբերի ջարդարար գործողությունները, ինչի մասին տեղեկությունները ևս Դեոյանցի մշտական ուշադրության կենտրոնում էին: Դեոյանցը հավաքում էր նաև հայկական ջարդերի մեջ մեղսակից քրդերի, նրանց ցեղապետերի մասին հետախուզական բնույթի տեղեկություններ. «Այդ հայերին կոտորող քիւրդ պարագլուխների մի մասը, թուով մոտ 800 հոգի, ռուսական շարժման հետեւանքով, ստիպուած էր ապաստան գտնել Մանազկերտի մօտ գտնուող Ադա գիւղի մէջ: Երբ լսեցինք Մուշ քաղաքի եւ Մշոյ դաշտի կոտորածների լուրը, գնդապետ Կարլեցկու (առաջապահ բանակի սպայակոյտի պետը) հրամանով Օխձեան գիւղի մօտ այդ 800 հոգին ստացան իրենց արժանի պատիժը»<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Փափազեան Վ., Համաշխարհային պատերազմը եւ Տարօնի աշխարհը: 1914-1915 թթ., էջ 77:

<sup>2</sup> Մասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 782:

<sup>3</sup> Դեոյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1944, թիւ 3 (242), մայիս-յունիս, էջ 92:

Դեռյանցի մեկ այլ տեղեկության համաձայն Մուշի և Բիթլիսի կոտորածներից հետո Մանազկերտին մոտ գտնվող Ադա գյուղում հավաքված 372 քուրդ բեկերի, որոնք կոտորել էին Վանա լճի հյուսիսում գտնվող բնակավայրերի հայությանը, իրեն հաջողվում է ձերբակալել: Դեռյանցը հրաման է կորզում գեներալ Վորոպանովից և գնդապետ Վ. Վ. Կոչերժևսկուց<sup>1</sup> 100 կազակներով և 300 հետևակ զինվորներով շրջափակելու այդ գյուղում գտնվող քրդերին: Ըստ Դեռյանցի, նախօրոք կազմված ցուցակներով ինքը բռնում է բոլոր քրդերին, նրանց տանում Եփրատի մոտ գտնվող Օխչիան գյուղը, ուր 20 ընտրովի հայ երիտասարդներ տասն օրվա ընթացքում քանդել էին մեկ հսկայական փոս: Այնուհետև այդ քուրդ բեկերին, որոնք հայկական ջարդերի ակտիվ կազմակերպիչներն էին, սպանում են և թաղում այդ փոսում<sup>2</sup>: Մա Տ. Դեռյանցի գործունեության ամենադիտարժան պահերից է:

Դատելով կցկտուր փաստերից Տիգրան Դեռյանցի անձը որոշակի առումով ամենուր արժևորվում էր, քանզի նրանից ակնկալում էին բարենպաստ լուրեր ռուսական զորքերի տեղաշարժերի մասին դեպի Արևմտահայաստանի խորքերը: Դա հույս էր ներշնչում թուրքական յաթաղանից փրկվելու և մի խաղաղ տեղ հանգրվանելու: Դեռյանցը հայտնվել էր իրադարձությունների հորձանուտում, և կարծես թե գերազնահատվում էին նրա կարողությունները:

Ակնկալիքները շատ էին: Հույսով էին լեցուն Տարոնում գտնվող հայ մարդիկ, ազգային մեծերը, կուսակցական առաջնորդները: Ահա թե ինչ են գրում Սարգիս և Միսակ Բդեյանները. «Չխուրի կողմն ռուսերը սկսած են յառաջանալ եւ թուրքերը փախուստ կուտան անոնց առջեւէն: Փոխանակ օգտուելու այս առիթէն եւ ամբողջ բազմութեամբ դեպի արեւելք շարժելու, պաշտպանուած հարիւրեակ մը զինուած խումբերով, Վահան Փափազեան բաւականացած է երեք անգամ հինգ-տասը հոգա-

---

<sup>1</sup> **Կոչերժևսկի Վլադիմիր Վլադիմիրի** – (01.01.1883 թ. - 31.08.1944 թ.) – Ցարական բանակի սպա: Առաջին աշխարհամարտի տարիներին ծառայել է Կովկասյան ռազմաճակատում, իսկ այնուհետև՝ Ռուսաստանի Հարավի զինված ուժերում՝ գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակում (22.11.1918 թ. -1920 թ. ): 1917 թ. օգոստոսի 15-ին ստացել է գնդապետի կոչում: Մահացել է տարագրության մեջ: Տե՛ս **Ганни А. В.**, նշվ. աշխ., էջ 353, 554:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, Ֆ. Պ – 1457, ց. 2, գ. 28, թ. 13-13 հալ.:

նոց սուրհանդակներ դրկելով, որոնք գացին ու այլևս չվերադարձան, ճամբան բաց գտնելով եւ ազատելով:

Երբ այդ թշուառ փախստականները կ'աղաչէին որ այս առիթէն օգտուէին եւ անցնէին-երթային, Փափազեան կը մերժէր անոնց խնդրանքը՝ առարկելով, թէ մինչեւ որ Ռուբէնէն լուր չառնէր, *մինչեւ որ Տիգրան Դեւոյեանէն լուր չառնէր, չէր կրնար այդպիսի քայլի մը հաւանութիւն տալ, միանգամայն յայտնելով, թէ քանի որ Ռուսերը կը յառաջանան, բնականաբար կուզան մինչեւ հոս, Քան լեռն ալ, եւ իրենք ալ կը միանան անոնց, եւ այդպէս ալ կը գրէ Ռուբէնին՝ յուսադրելով զայն*<sup>1</sup>:

Դեպի Վան առաջացած ռուսական զորքերի մարտական գործողութիւնները վճռորոշ դեր խաղացին Վանի հերոս բնակչության ոգու բարձրացման և ֆիզիկական վերահաս ոչնչացումից փրկման գործում, որը, շրջապատված Ջևդետի արյունոտուշտ հրոսակախմբերով, կյանքի ու մահի կռիվ մղեց և հաղթեց:

Հատկանշական է, որ 1915 թ. մայիսի կեսերին Մանազկերտում եղած ժամանակ Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանը, նշելով, որ սպաների մեծագույն մասի մեջ տիրում էր հայատյաց տրամադրություն, ավելացնում է. «Էտպիսի կասկածների հիմքը հայատեաց օֆիցերները աշխատում են հաստատել ամէն մի պատահական դէպքով»: Մակայն միաժամանակ Թումանյանը փաստել է, որ հակառակ դրան, կան մի քանի հայ սպաներ, որոնք դրանց հակապատկերն են, ընդգծելով Տիգրան Դեւոյանցի անունը. «Բարեբախտաբար էստեղ կան մի քանի հայ օֆիցերներ ևս, որոնք իրանց ազգասիրական տրամադրութեամբ մի «противоядие»-էն (հակաթոյն – Վ. Վ.) ստեղծում»<sup>2</sup>:

Ռուսական զորքերի կողմից Վանի գրավումից հետո չի հաջողվում կարգավորել հարաբերությունները քուրդ ցեղապետերի հետ. լուրջ խնդիրներ են առաջանում, քանզի ռուսական իշխանությունները, վերականգնել էին Վան-Մանազկերտի շրջանի քուրդ սեփականատերերի իրավունքները հողի նկատմամբ, ինչը կամա թե ակամա ոտնահարել էր հայերի շահերը, և առաջ էր բերել մեծ դժգոհություն ու ընդվզում հա-

---

<sup>1</sup> **Բդէեան Սարգիս եւ Միսակ**, Հարգատ պատմութիւն Տարօնոյ, խմբագրեց Ադան Տարօնեցի, Գահիրէ, Հրատ. Հայ Ազգային հիմնադրամի, թիւ 26, տպ. «Մշակ», 1962, էջ 547:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 654, ց. 4, գ. 16, թ. 16:

յության շրջանում: Այստեղ օգնության է գալիս հայ սպա Տ. Դեոյանցը, որը փորձում է իրավիճակը շտկել և այդ նպատակով դիմում է ռուս բարձրաստիճան սպաներ Վ. Կոբլիցկուն և Դ. Դրացեկոյին: Հենց այդ դիմումը առիթ է պատճառ է դառնում, որ 1915 թ. հունիսի 4-ին Գևորգ Ե կաթողիկոսը պաշտոնապես դիմի Կովկասի փոխարքային՝ ներկայացնելով Մանազկերտի շրջանում կատարվող դեպքերը<sup>1</sup>:

Որոշ ժամանակ անց Տ. Դեոյանցը ուղևորվում է Մանազկերտ, որը նոր էին գրավել ռուսական զորքերը (Բուլանուխ – Մանազկերտի ազատագրմանը նախորդել էր Վանի գրավումը, ինչը հույսեր էր առաջ բերել, որ շուտով կազատագրվի նաև Տարոնը), և ռուսական հրամանատարության ու հայ ազգային մարմինների համաձայնությամբ սկսում է զբաղվել Մուշի և Բիթլիսի միջև կապի հաստատմամբ՝ փորձելով նաև տեղեկություններ հայթայթել Էրզրումի ռազմաճակատի վերաբերյալ (1915 թ. ամռանը)<sup>2</sup>: Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ նրան էր հանձնարարվել Էրզրումի հետախուզությունը:

Պետք է նշենք, որ Էրզրումը գրավելուց հետո նա տեղափոխվում է այնտեղ, իսկ Երզնկան գրավելուց հետո Երզնկա՝ տեղի հետախուզությունը կազմակերպելու համար: Այդ ընթացքում Դեոյանցին հաջողվում է Խնուսի, Մուշի և Բիթլիսի շրջաններ ուղարկել 10-15 հետախույզներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մանազկերտի (Վանա լճի) շրջանում գտնվում էին Հալեպից, Տիգրանակերտից, Խարբերդից, Մալաթիայից, Մուշից ու այլ հայաբնակ վայրերից տարագրված տասնյակ հազարավոր հայ փախստականներ, և դա խիստ կարևորել էր մշտական կապի ապահովումը Ռուբեն Տեր-Մինասյանի և Վ. Փափազյանի (Կոմս) հետ՝ Մուշ-Մասուն տարածքի նկատմամբ վերահսկողության ապահովման նկատառումներից ելնելով<sup>3</sup>: Այդ խնդրի իրագործման համար Դեոյանցին է տրամադրվում նաև հինգ կամավոր: Ստացված արդյունք-

---

<sup>1</sup> Տե՛ս ՀԱՍ, Ֆ.Պ – 818, ց. 1, գ. 533, թ. 25: Տե՛ս նաև **Սահակյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 243:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական արխիվ (Բոստոն), թղթածրար, ՄՎ. 78/8:

<sup>3</sup> Տե՛ս **Դեյեանց Տ.**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1944, թիվ 3 (242), մայիսյունիս, էջ 54:



ների մասին զեկուցագրերը ներկայացվում էին գնդապետ Դ. Դրացենկոյին, Ազգային բյուրոյին և ՀՅԴ բյուրոյին<sup>1</sup>:

Որպես հայ հետախույզի՝ Տ. Դևոյանցի կենսագրության մեջ հատուկ տեղ է զբաղեցնում հենց 1915 թ. ապրիլ-մայիսի ժամանակահատվածը, երբ նա իր հինգ զինակիցներով հայտնվում է Մանազկերտում՝ Մուշի և Բիթլիսի միջև կապ հաստատելու հեռահար նպատակով: Այնուհետև Կովկասյան բանակի հրամանատարության կողմից Դևոյանցը գործուղվում է Էրզրում՝ հետախուզության, իսկ Երզնկան գրավելուց հետո հիմնավորվում է այնտեղ՝ զինվորական հետախուզության գծով պաշտոն գրավելով, որին նա հասել էր «անշուշտ Ազգային Բիւրոյի և Դաշնակցութեան վերին մարմնի յանձնարարութիւններու շնորհիւ, որ դէպի Պիթլիս, Մուշ և Սասուն ըլլալիք յառաջխաղացման ընթացքին՝ օգտակար հանդիսանար երկրի կռուողներուն»<sup>2</sup>: Տ. Դևոյանցի վրա դրվում էր մեծ պատասխանատվություն պահանջող առաջադրանք. «Դեռոյեան բացի իր պաշտոնական պարտաւորութիւններէն, Ազգային Բիւրոյին եւ Դաշնակցութեան Բիւրոյէն յանձնարարութիւններ ունէր կապուիլ Մշոյ եւ Սասնոյ ուժերուն. Գիտակ պահել զանոնք կատարուած շարժումներուն եւ անոնցմէ ստացած տեղեկութիւնները հաղորդել յիշեալ մարմիններուն»<sup>3</sup>:

Մակայն իրավիճակի կտրուկ փոփոխությամբ պարտադրված, որը պայմանավորված էր ռուսական զորքերի հարձակողական գործողությունների կասեցմամբ, շրջանում գործող ՀՅԴ ղեկավար-քաղաքական շրջանները որոշում են տեղում զբաղվել գործի քննությամբ՝ պարզելու համար ռուսական բանակի այդ նոր ընթացքի դրդապատճառները: Վան-Մանազկերտի շրջանից ռուսական զորքերի հայտնի անակնկալ և անբացատրելի «Մեծ նահանջի» հետ կապված, Ռոստոմի և Արամի (Արամ Մանուկյան) առաջարկությամբ հունիսի 15-ին շտապ Մանազկերտ է գործուղվում Կ. Սասունին՝ Բասենում գործող իր ՀՅԴ հինգ կուսակցական ընկերների հետ (Մինաս Մակարյան, Տիգրան Ավետիսյան,

---

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> **Սասունի Կ.**, Պատմություն Տարօնի աշխարհի, էջ 782:

<sup>3</sup> **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), էջ 77:

Մանդրո), չնայած սկզբնական պահին ինքը՝ Ռոստոմն էր ցանկություն հայտնել, որ անձամբ առանձին գար Մանազկերտ՝ քննելու Տ. Դևոյանցի գործունեությունը: Հանձնաժողովի պարտականությունների մեջ էր մտնում քննել Տիգրան Դևոյանցի<sup>1</sup> գործը, որի դեմ բողոքները հասել էին Ռոստոմին:

Այդ ամենը պատճառաբանվում էր, որ տվյալ պահին լինելով գոր. Օգանովսկու գլխավորած 4-րդ կորպուսի հետախուզական բաժնի վարիչ, Տ. Դևոյանցը իբր թե սխալ զեկուցումներ էր ներկայացրել ռուսական հրամանատարությանը և ամեն ջանք չէր գործադրել, որպեսզի ռուսական զորքերը շարժվեին դեպի Մշո դաշտ՝ իրենց գործողությունները համաձայնեցնելով դեպի Դատվան և Բիթլիս առաջացող հայկական կամավորական զորքերի հետ Մանազկերտում: Մանազկերտ մեկնած հանձնախումբը դժգոհ է մնում Դևոյանցի գործի ընթացքից և իր կազմած տեղեկագիրն ուղարկում Վան՝ Ռոստոմին և Արամին: Դևոյանցի ամբաստանության գլխավոր հետինակը 4-րդ Կովկասյան կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Օգանովսկին էր, որը 1915 թ. տեղափոխվում է ռուս-ավստրիական ռազմաճակատ:

Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ հիմնովին սխալ են Կ. Սասունու մեղադրանքները Տ. Դևոյանցի հասցեին, թե իբր վերջինիս հանձնարարված էր «ամեն ջանք թափել», որպեսզի «ռուսական բանակը տրամադրուէր յառաջ խաղալու»<sup>2</sup>, որը, սակայն, չի հաջողեցրել: Իբր թե Տ. Դևոյանցը չափազանցրել էր թուրքական հարձակողական ուժերի թիվը՝ 70000 զինվոր, այն իբր եղել է 30000-ի մոտ, և իբր դա է պատճառ դարձել ռուսական զորքերի ընդհանուր նահանջի ամբողջ ճակատով. «Թրքական յարձակողականը երեւոյթապէս շատ ուժեղ էր եւ նպատակ ունէր անցնիլ Եփրատը, գրաւել Սիփանը եւ Ալագազի փեշէրը, մինչէւ

---

<sup>1</sup> Դևոյանցը իր հուշերում նշում է, որ իրեն մինչև 1919-1920 թթ. ոչինչ հայտնի չէր Մանազկերտ եկած Կ. Սասունուց և մյուսներից կազմված հանձնախմբի մասին, որ եկել էր քննելու իր գործելակերպը և այդ մասին մանրամասն զեկուցում ներկայացնելու Վանի ղեկավար ընկերներին: Տե՛ս **Դեյլեանց Տ.**, Հետախույզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 2, յունւար-մայիս, էջ 59: **Սասունի Կ.**, Յուշեր եւ վկայութիւններ, էջ 175: **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), էջ 77, **Սասունի Կ.**, Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 782:

<sup>2</sup> Տե՛ս **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), էջ 77, **Սասունի Կ.**, Յուշեր եւ վկայութիւններ, էջ 175:

Զիլան, ու կտրել ռուսական բանակի թիկունքը: Տ. Դեռեյան, որ գոր. Օգանովսքու կեդրոնական սպայակոյտին կից հետախուզական բաժինը կը վարէր, իր գեկուցման մէջ թրքական յարձակողական բանակի ուժը ներկայացուցած էր մօտ 70,000 հոգի: Այդ տուեալները ցոյց կուտային, որ Բուլանոլի-Մանազկերտի ռուսական բանակը չպիտի կրնար դիմադրել այդպիսի խոշոր ուժի մը եւ հետեւաբար հարկադրուած էր ընդհանուր նահանջ մը ընել ամբողջ ճակատի վրայ»<sup>1</sup>:

Կարծում ենք, սա անհիմն և անլուրջ մոտեցում էր՝ գեներալ Պ. Օգանովսկու կողմից նման նահանջի հրաման տալու համար, որն իբր իր հաշվարկները կառուցել էր Տ. Դեռեյանից ստացված տեղեկատվության վրա, քանզի, անկախ ամեն ինչից, նա պարտավոր էր այն ստուգել, և ոչ միայն ինքը, այլև ռուսական բանակի տարբեր հետախուզական ստորաբաժանումներից ստացած փաստերը պետք է համադրվեին և ճշգրտվեին: Հենց գորավար Օգանովսկին էլ այդ տեղեկությունները, որոնք հաստատվում են տարբեր հեղինակների կողմից, ընդունում է որպէս հիմք նահանջի համար, որի մասին կարգադրությունը միայն իրենով չէր պայմանավորված, այլ առաջին հերթին ռուսական բարձրագույն հրամանատարության վճիռն էր:

Սակայն հենց այս մոտեցումը մերժողական վերաբերմունքի արժանացավ հայդուկապետերի կողմից, որոնք ռազմական գործողությունների ծալքերի և ռուսական ռազմավարության մուտք խորխորատների մէջ չէին կարող խորամուխ լինել: Ըստ երևույթին դա էր պատճառը, որ երբ գորավար Անդրանիկի<sup>2</sup> հետ Թիֆլիսում ունեցած տեսակցության ժամանակ գեներալ Օգանովսկու որդին մի թուղթ էր ներկայացրել մեծ հայդուկապետին՝ պահանջելով, որ Անդրանիկը հաստատեր, թե «ընդհանուր մեծ նահանջը տեղի ունեցաւ անոր համար, որ

---

<sup>1</sup> Տե՛ս **Մառուխ Գ.**, Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 88:

<sup>2</sup> **Անդրանիկ (Օգանյան Անդրանիկ Թորոսի.** 25.02.1865- 31.08.1927) - Հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ, հայդուկապետ: Հայ ժողովրդական և Բուլղարիայի ժողովրդական հերոս: Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում Հայկական 1-ին կամավորական խմբի հրամանատար: 1918 թ. հունվարին նշանակվել է Հայկական բանակային կորպուսի դիվիզիայի հրամանատար: Նույն ամսում շնորհվել է ռուսական բանակի գեներալ-մայորի կոչում:

թրքական 11 տիվիժիաներ բերուած էին», վերջինս զայրացած մերժել էր. «Հրամանատար Անդրանիկ մերժեց զայն՝ ըսելով, թէ այդ նահանջը կեղծիք մըն էր և նպատակուած էր Հայը ջնջելու»<sup>1</sup>: Անդրանիկը հակասական խառնվածք ուներ, և նրա քայլերն էլ հաճախ անկանխատեսելի և անսպասելի էին, սակայն անկեղծ և հախումն: Մյուս հայդուկապետերի նման ստիպված բռնելով նահանջի դառը ճանապարհը՝ նա խորապես համոզված էր, որ ընդհանուր նահանջի գաղտնիքները բոլորովին պարզ չեն: Այդուհանդերձ մի հարցում նա համոզված էր, որ դրա մեջ դիտավորություն կար. «Անդրանիկ մինչև ետքը կը պնդեր, որ ռուս վերին հրամանատարութիւնը դիտամբ ըրավ աստիկա, որպէսզի թուրքերը լաւ մը յաջողէին իմենց կոտորածին մէջ՝ Հայաստանը ըլլար առանց Հայերու»<sup>2</sup>:

Փաստերն ինչքան էլ որ անցանկալի էին և անընդունելի հայերի համար, դրանք այլ բանի մասին էին վկայում: Ա. Հարությունյանը ուղղակի փաստում է. «Թուրքերը... պլանավորում էին մտա 11 դիվիզիաներից բաղկացած հզոր խմբավորումով Աբդուլ Քերիմ փաշայի հրամանատարությամբ ձեռքէլ ռուսական պաշտպանությունը Կով, Կարմունջ, Նազիկ գյու բնագծից (Վանա լճի արևմտյան կողմից, Մուշից հյուսիս) և հիմնական ուղղություն վերցնելով դեպի Ալաշկերտի հովիտը, գրավել Մանազկերտը, Ալաշկերտը, Կաղզվանը, Իգդիր-Երևան-Դիլիջան-Ղազախ-Թիֆլիս կամ Ելիզավետպոլ»:<sup>3</sup> Եվ դա այն պարագայում, երբ «ռուսական բանակի 4-րդ կովկասյան կորպուսը, որը բաղկացած էր Դ. Կ. Աբացիևի<sup>3</sup>, Ա. Նիկոլանի, Ի. Տրուխինի և Ֆ. Չեռնոգուբովի գործակալներից, Վանից մինչև Դայար (մոտ 400 կմ) շատ նոսրացած մարտակարգեր ուներ: Մեկ կորպուսով դժվար էր 400 կմ պաշտպա-

---

<sup>1</sup> Զօրավար Անդրանիկի կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը 1914-1917, էջ 48:

<sup>2</sup> Անդրանիկի կեանքը, պատերազմները եւ յուշերը, էջ 229:

<sup>3</sup> **Աբացիև Դմիտրի Կոնստանտինի** (1857 - 1936) – Գեներալ-լեյտենանտ, Երևանյան ջոկատի հրամանատար: Աբացիևը հանդիսացել է Կովկասյան 2-րդ կազակային դիվիզիայի, իսկ այնուհետև՝ 1916-1917 թթ. Կովկասյան 6-րդ կորպուսի գորահրամանատարը: 1918-1919 թթ. հյուսիսկովկասյան լեռնցիների ներկայացուցիչն էր Սպիտակ բանակի շտաբում: Հայտնի էր իր հակահայ հայացքներով: Տե՛ս **Սահակյան Ռ.**, Ռուսական բանակի հայկական և քրդական ջոկատները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին// «Բանբեր Հայաստանի արխիվների», 2010, թիվ 1(115), էջ 34:

նություն ստեղծել...մասնագետները կասկածում էին դրա հուսալիության վրա և հավատացած էին, որ թուրքերը ուժեղ բռունցք կազմելու դեպքում կարող էին այդ պաշտպանությունը ճեղքել ցանկացած տեղում»<sup>1</sup>:

Այդ կարծիքին է նաև Ա. Զայոնչկովսկին, որը սահմանների այդպիսի ձգվածությունը կարևոր գործոն է համարում. «Մակայն այստեղ գործող ռուսների ուժերը չափազանց աննշան էին այդպիսի ընդարձակ տարածությունը պահելու համար, ընդ որում կորպուսի զորքերի մատակարարումը լեռնային ճանապարհներով, դեռևս մի շարք չյուրացված լեռնանցքներով անցնելով շատ դժվարին էր: Այդ պատճառով, երբ հուլիսին թուրքերն անցան հարձակման, 4-րդ Կովկասյան կորպուսի դիմադրությունը շուտով կոտրվեց»<sup>2</sup>:

Ըստ ռազմագետ և Առաջին աշխարհամարտի Կովկասյան ռազմաճակատի գործողությունների տարեգիր, ռազմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գեներալ-լեյտենանտ Ն. Գ. Կորսունի՝ Մանազկերտի ուղղությամբ գործող թուրքական զորքերի թվաքանակը, իր իսկ 4-րդ կորպուսի հրամանատար Պ. Օգանովսկու կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, հաշվում էր շուրջ 70.000 մարտիկ, այսինքն՝ թուրքերն ունեին եռակի գերակշռություն: Կովկասյան 4-րդ կորպուսի շուրջ ստեղծվել էր սպառնալից վիճակ ողջ ճակատով: 70.000 թվաքանակ ունեցող զորքի մասին է պնդում նաև Դ. Գ. Մարտիրոսյանը<sup>3</sup>:

Ըստ էության ստացվում էր, որ Էնվերը ռազմուժի այսպիսի կենտրոնացում կատարելով, համառորեն չէր հրաժարվում իր հետամտած 1914 թ. ռազմավարական ծրագրերի իրագործումից, այսինքն՝ անմիջական շրջափակման մեջ առնել Սարիղամիշի ռուսական ռազմական խմբավորումը և ոչնչացնել այն: Եվ եթե Էնվերը դեռ 1914 թ. դեկտեմբերին իր ռազմավարական ծրագրի գլխավոր և առաջնահերթ նպատակն

---

<sup>1</sup> **Չարությունյան Ա. Հ.**, Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից (1914-1918), էջ 269:

<sup>2</sup> **Зайончковский А.**, նշվ. աշխ., էջ 337:

<sup>3</sup> Տե՛ս **Мартirosян Д. Г.**, Российско-турецкий фронт Первой мировой войны, Автореферат на соиск. кандид. ист.наук, Саратов, 2006, с. 95-96: Տե՛ս **Մահալյան Ռ.**, Արևմտյան Հայաստանի ռազմարադարական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. Հունիս – 1917 թ. փետրվար), էջ 83:

էր համարել Օլթիով դուրս գալ ռուսական զորքերի սարիղամիշյան խմբավորման աջ թև և թիկունք, ապա 1915 թ. հունիս-հուլիսին հակառակ պատկերն էր իշխում: Վերջինս թուրքական զորքերի առաջ խնդիր դրեց Մանազկերտ-Ալաշկերտ-Կաղզվան ուղղության թևերից հուժկու հարվածներ հասցնել ռուսներին և դուրս գալ Կարս-Սարիղամիշ խմբավորմանը դեմ հանդիման և այն շրջափակել՝ այդպիսով ձգտելով ձախողել ռուսական հրամանատարության մտահղացումը՝ գրավել Էրզրումը:

Այսպիսով, ըստ Ն. Կորսունի, թուրքերը Արդուլ Քերիմ փաշայի հրամանատարությամբ կազմավորում են խոշոր խմբավորում, որը դեռ հուլիսի 4-ի դրությամբ ուներ մոտ 89 զումարտակ զորք, որի առջև ռազմավարական խնդիր դրվեց դուրս գալ դեպի Ալաշկերտի հովիտ: Համալրումների մի մասը կատարվել էր Միջագետքից բերված զորամասերի հաշվին, որոնք ուղարկվել էին Մուշի շրջան: Դրանց թիվը հետագայում Երևան-Մուշ ուղղությամբ հասավ 90 զումարտակի կամ 10 հետևակային դիվիզիայի, ինչը տպավորիչ ուժ էր: Ն. Գ. Կորսունը գրում է, որ անհանգստացած Վան-Մանազկերտի շրջանում ռուսական զորքերի գործողություններից՝ թուրքերը սկսել էին գաղտնի կենտրոնացնել իրենց ուժերը ռուսների աջ թևում, և հուլիսի սկզբին նրանց հաջողվեց ապահովել 4-րդ կորպուսին հակազդելու համար անհրաժեշտ քանակի զորքեր՝ ակնկալելով նաև այլ համալրումներ<sup>1</sup>: Արդյունքում, Կովկասյան բանակի զորամասերը հուլիսի սկզբին Քոփ-Կարմունջ ամրացված շրջանում հանդիպեցին թուրքական նշանակալից ուժերի դիմադրությանը: Դատելով առկա օպերատիվ-ռազմական տվյալներից՝ արդեն հուլիսի 9-ին Մուշի ուղղությամբ գործող թուրքական զորքերը անսպասելի հարձակման անցան ողջ ճակատով,<sup>2</sup> ճեղքելով ռուսների պաշտպանությունը Քոփի մոտ և սրընթաց շարժվելով Մանազկերտ<sup>3</sup>, ինչը

---

<sup>1</sup> **Корсун Н. Г.**, Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны в 1915 году, с. 105: **Корсун Н. Г.**, Первая мировая война на Кавказском фронте. Оперативно-стратегический очерк, с. 42-43:

<sup>2</sup> Տե՛ս **Корсун Н. Г.**, Первая мировая война на Кавказском фронте. Оперативно-стратегический очерк, стр. 42:

<sup>3</sup> Տե՛ս **Հարությունյան Ա. Հ.**, Առաջին համաշխարհային պատերազմի ռազմաղիվանագիտական պատմությունից (1914-1918), էջ 269:

հանկարծակիի բերեց ռուսներին և որոշակի առումով խուճապի մատնեց, առավել ևս որ գորքերի օպերատիվ ղեկավարումը շատ հարցերում կաղում էր:

Պ. Օգանովսկին, ենթադրելով, որ չի կարող կամ ի վիճակի չի լինելու լուրջ դիմադրություն ցույց տալ թուրքական քանակապես գերազանցող ուժերին, որոշում է նահանջի հրաման տալ: Դա էր նրա հիմնավորումը, որին փորձել է հակադրվել Թ. Նազարբեկովը, բայց ի վերջո ենթարկվել է հրամանին<sup>1</sup>: Այս փաստն է արձանագրվում նաև Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության 6-րդ հատորում. «Թուրքական գորքերի թվական զգալի գերազանցության պատճառով չորրորդ կորպուսն ստիպված էր նահանջել դեպի Ալաշկերտի հովիտը:

Վանի ազատագրումից հետո հայկական կամավորական ջոկատները գեներալ Տրուխինի գորաբանակի կազմում համառ մարտեր մղեցին Վանա լճի հարավային մասում և պարտության մատնելով հակառակորդին, շարժվեցին Մուշի և Բաղեշի (Բիթլիսի) ուղղությամբ:

Մարտերի թեժ պահին՝ հուլիսի 16-ին, տակտիկական նկատառումներով Կովկասյան բանակի շտաբից տացվեց հրաման՝ նահանջել թողնելով գրավված տերիտորիաները և Վանը: Ընդհանուր ջարդից կենդանի մնացած արևմտահայերը կանգնեցին նոր վտանգի առջև: Նրանց օգնության եկան հայ կամավորական ջոկատները, որոնք կազմակերպեցին հայերի գաղթը և նրանց ուղեկցեցին մինչև ռուս-թուրքական սահմանը»<sup>2</sup>:

Ռուսական գորքերը, ի դեմս Պ. Օգանովսկու գլխավորած կորպուսի, գործնականում անպատրաստ գտնվեցին, այդ թվում համալրումների, զենքի ու զինամթերքի առաքումների, թիկունքի ապահովության և այլ հարցերում: Այդ նույն տվյալների համաձայն՝ հենց ինքը՝ Պ. Օգանովսկին, բարձրագույն հրամանատարությանը տեղեկացրել էր արկերի պակասի, որոշակի հոգնածության ու ոգու անկման մասին: Կորսունը

---

<sup>1</sup> Տե՛ս **Սահակյան Ռ.**, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս –1917 թ. փետրվար), էջ 83:

<sup>2</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Հայաստանը 1870-1917 թվականներին, Եր., ՀՄՍՀ ԳԱ, 1981, էջ 542, 550:

նան պնդում էր կորպուսի հրամանատարի կողմից նահանջի սխալ ուղի ընտրելու մասին<sup>1</sup>:

Եվ դեռ ավելին: Նազարբեկովի և Գ. Ռ. Շարպանտյեի ջոկատները, հաշվի չառնելով կորպուսի հարվածային խմբավորման ճակատում ստեղծված իրավիճակը, չձգտելով նրա հետ կապ հաստատել, հուլիսի 11-ին ինքնակամ ետ են քաշվում դեպի Վանա լճի հյուսիսային ափը, և արդյունքում՝ այդ բանակային խմբավորման ձախ թևը մերկացնում<sup>2</sup>: Ըստ Ն. Կորսունի՝ հուլիսի 11-ին 4-րդ կորպուսի հրամանատար գեներալ Օզանովսկին, բանակի հրամանատարությանը ներկայացրած գեկույցում տեղեկացնելով զորքի վիճակը, ուղղակի հաստատագրում էր. «Տասնչորսորյա մարտը խիստ հոգնեցրել է կորպուսի զորքերը: Հակառակորդը մարտի մեջ է մտցնում նորանոր ուժեր: Հակառակորդի ճնշման տակ գեներալ Ամասիյսկու ջոկատը այսօր թողել է Քոփի դիրքը, որի հետևանքով չնայած Մանազկերտից Վորոպանովի զորաջոկատի հարձակման անցնելուն և Նուրբեդդինի [Մանազկերտից 2-3 կմ հեռու – Վ. Վ.] մոտ Աֆրոսիմովի հեծյալ ջոկատի կողմից սպառնալիքին, հարկ եղավ մնացած ջոկատները ետ քաշել ...կորպուսի պարենամթերքը միանգամայն դժվարին կացության մեջ է:

Երկօրյա ճակատամարտի արդյունքում թուրքերը ռուսների համար աննկատ կենտրոնացրել են նշանակալից ուժեր Արևելյան Եփրատի աջ ափին և կենտրոնում, Կովկասյան 4-րդ կորպուսի զորամասերը ետ են շարժվել այդ գետի ձախ ափը: Թուրքերի աջ թևը Քոփի շրջանում հաջող մանևրումով Օզանովսկուն ստիպել է սկսել նահանջը դեպի Մանազկերտ»<sup>3</sup>: Զգալիորեն գերակշռող թուրքական ուժերի ճնշման տակ Քոփի շրջանում պաշտպանության անցած ռուսական զորամասերը հարկադրված ետ են քաշվում դեպի Մանազկերտից արևմուտք ընկած շրջանը, իսկ հարավային մասում գործող ուժերը նահանջում են դեպի Ադիլջևաս՝ կորցնելով կապը հուլիսի 12-ին Մանազկերտի մատույցներում մարտերի մեջ գտնվող Կովկասյան 4-րդ կորպուսի գլխավոր

---

<sup>1</sup> Տե՛ս **Корсун Н. Г.**, Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны в 1915 году, с. 105:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 95:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 96:



խմբավորման հետ: Ստացվում է, որ Օգանովսկու գլխավորած Կովկասյան 4-րդ կորպուսի համար ճակատագրական է դառնում Քոփի շրջանում զբաղեցված դիրքերը զիջելը, որի պաշտպանությունը գեներալ Ամասիյսկին չի հաջողեցրել լիարժեք իրագործել, որն էլ գործնականում հանգեցնում է գորքերի ետքաշմանը: Իսկ արդեն հուլիսի 20-ի վիճակով ռուսական զորքերը, շարունակելով նահանջել դեպի Ալաշկերտի հովիտ, կարծում են, որ դեռ իրենց կհաջողվի Ագրիդաղի գագաթի նախալեռնային մասում կասեցնել թուրքական առաջխաղացումը<sup>1</sup>:

Հենց իր՝ Օգանովսկու բերած այս փաստերը անուղղակիորեն վկայում են, թե ինչքան խախուտ են եղել Դևոյանցին ներկայացված մեղադրանքների իրական հիմքերը: Դրանք ուղղակի սեփական սխալների և սայթաքումների քողարկման արդյունք էին: Եվ առհասարակ, ռուսական բանակի նահանջի դրդապատճառները այլ տեղ և առանձին անձերի մեջ որոնելու այս քայլերը ընդամենը սեփական դիրքորոշումն արդարացնելու նպատակով կեղծ որոնումներ էին, որոնց հարկավոր էր որոշակի առումով «հիմնավորված» տեսք տալ և խեղաթյուրված, աղճատված դրոշմանստվածքով ներկայացնել պատմության դատին:

Եվ դեռ ավելին, հենվելով Օգանովսկուց ստացած տեղեկությունների համադրման արդյունքների վրա, Ն. Կորսունը եզրահանգում է, որ այդ պահին կորպուսի զորաջոկատները մանրատված են եղել բազմաթիվ մասերի, հեծելագործ ունեցել է լուրջ խնդիրներ, որոնք պարզելու և կուտակված բարդություններին լուծում գտնելու համար բանակի շտաբից Մանազկերտ է գործուղվել գեներալ Պ. Ա. Տոմիլովը<sup>2</sup>, որը տեղում վիճակը գտել է սպառնալից, համոզվել, որ կորպուսը լուրջ օգնության կարիք ունի՝ օգտակար համարելով դեպի Ալաշկերտի հովիտ տեղա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Корсун Н. Г.**, Первая мировая война на Кавказском фронте. Оперативно-стратегический очерк, с. 42-43, 93:

<sup>2</sup> **Տոմիլով Պյոտր Անդրեյի** (20.10. 1870 թ. – 23.07. 1948 թ.) – գեներալ-լեյտենանտ, Կովկասյան բանակի շտաբի պետ: Առաջին աշխարհամարտի տարիներին մասնակցել է Կովկասյան ռազմաճակատի ռազմական գործողություններին Արևմտյան Հայաստանում: 1918-1920 թթ. ծառայել է Կամավորական բանակում, մահացել է տարագրության մեջ: Տե՛ս **Ганин А. В.**, նշվ. աշխ., էջ 358, 434, 776:

շարժել հետևակի թարմ ուժեր<sup>1</sup>: Մակայն անհարկի հապաղման, տեղ գտած թերությունների վերացման խնդրում ավելորդ դանդաղկոտության, ինչպես նաև ռազմավարական բնույթի սայթաքումների արդյունքում, ինչպես գտնում է Ն. Կորսունը, թուրքերը, ճեղքելով Օզանովսկու ղեկավարած կորպուսի գլխավոր ուժերի ռազմագիծը, երկու թևերից շրջափակելով և շրջանցելով այն, հասան օպերատիվ և մարտավարական հաջողության ռուսների նկատմամբ, իսկ կորպուսը մնաց առանց քիչ թե շատ իրական ռեզերվների: Բացի այդ, թուրքերի օպերացիան Մանազկերտի ուղղությամբ հեշտացավ Վանա լճի հյուսիսային ափին գործող ռուսական զորամասերի անգործության պատճառով, ինչպես նաև գեներալներ Շերպանսյեի և Նազարբեկովի անվճռականության և, ինչպես պնդում է Կորսունը, զինվորական պարտքի բացակայության հետևանքով<sup>2</sup>: Եվ վերջապես Օզանովսկին մեղադրվում է, որ բացի կորպուսի մասնատումից՝ նա Մանազկերտի «Մեծ նահանջի» սկզբնական փուլում կարևոր դիրքերում նշանակում է այնպիսի ապաշնորհ հրամանատարների, ինչպիսին էր գեներալ Դ. Կ. Աբացիևը: Թույլ էր կապը Վանա լճի հյուսիսային ափին գործող ջոկատների միջև, որոնք աչքաթող էին արել թիկունքը: Ավելացրած դրան՝ նաև այն էական հանգամանքը, որ հրամանատարության շրջանում ղեկավարման խնդրում որոշակի անորոշություն էր տիրում<sup>3</sup>:

Մի հանգամանք էլ կար, որը տարբեր պատճառներով իրողություն չդարձավ: Դա այն էր, որ, ըստ ռուսական հրամանատարության պլանի Շարպանսյեի և Նազարբեկովի զորաջոկատների հեռացումից հետո Վանի ուղղությունը՝ Վանա լճի հյուսիսային ափից սկսած իբր թե պետք է ապահովվեր 4 հայկական դրուժինաների, սահմանային գումարտակի և գեներալներ Ի. Տրուխինի ու Ա. Նիկոլանի<sup>4</sup> հեծելազորային զորաջո-

---

<sup>1</sup> Տե՛ս **Корсун Н. Г.**, Первая мировая война на Кавказском фронте. Оперативно-стратегический очерк, с. 96-97:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 100:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 102:

<sup>4</sup> **Նիկոլան Ալեքսեյ Միխայիլի** (1858 - 1926) – Ռուսական բանակի գեներալ, Բալթիկ ջոկատի (Անդրկասպյան կազակային բրիգադի) հրամանատար, Վան քաղաքի կայազորի պետ (1915 թ. մայիս-հուլիս): Տե՛ս **Մահալյան Ռ.**, Ռուսական բանակի հայկա-

կատների կողմից<sup>1</sup>: Այդ ռազմավարությունը ևս ձախողվեց, մանավանդ շատ հարցեր մեծ հապաղումներով էր վճռվում, որի հետևանքով հայության համար աղետաբեր գաղթն իրողություն դարձավ, քանզի ռուսներին չհաջողվեց կասեցնել թուրքերի հարձակումը, որի հետևանքով թուրքերը մինչև հուլիսի 22-ը արագ գրավեցին Մանազկերտը, Պատնուսը, Մինջանը, Ղարաքիլիսան, Ալաշկերտը և հասան Կաղզվանի հարավային մատույցները:

Գործնականում ռուսներին հաջողվեց թուրքական զորքերի հարձակումը կասեցնել միայն հուլիսի 23-ին: Թուրքերի գլխավոր նպատակն էր գրավել Կովկասյան 1-ին կորպուսի զբաղեցրած հաղորդակցության սահմանագիծը, սակայն նրանց այդ դավադիր փորձը հետագայում ձախողվեց: Իսկ մինչ այդ դեպքերը զարգացան թուրքերի օգտին, և դրան նպաստեցին Կովկասյան 4-րդ կորպուսի հրամանատարության ոչ կամային և ինչ-որ տեղ նաև անվճռական գործողությունները, էլ չենք խոսում արդեն վերը նշված միջոցների բացակայության, զորամասերի հետ կայուն կապի գրեթե բացակայության կամ անարդյունավետության մասին, որոնց հետևանքով Վանում գտնվող ռուսական զորքերը և բնակչությունը հարկադրված եղան բռնել նահանջի և գաղթի ճանապարհը: Եվ այստեղ տրամաբանական հարց է առաջանում. Տ. Դևոյանցի ի՞նչ մեղավորության մասին կարող է խոսք լինել, ինչպես մասնավորապես կարծում են հայդուկապետերը և ֆիդայական-խմբապետական մտածելակերպ ունեցող հայ կուսակցական-քաղաքական որոշ առաջնորդներ:

Ըստ Ն. Կորսունի՝ կորպուսի մասին խստորեն արտահայտվել է Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը, որն անհանգստացած Կովկասյան բանակային 4-րդ կորպուսի շուրջ ծավալված իրադարձություններից, մատնանշելով Պ. Օգանովսկուն, գտնում էր, որ զորքերը ոչ թե մարտերում են ուժասպառ եղել, այլ աննպատակ, փութկոտ առաջխաղացումների, թշնամուն շրջանցելու ժամանակ արագ մարտանցումների, ինչպես նաև վատ մատակարարման

---

կան և քրդական ջոկատները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին// «Բանբեր Հայաստանի արխիվների», 2010, № 1 (115), էջ 36:

<sup>1</sup> См. u **Корсун Н. Г.**, Первая мировая война на Кавказском фронте..., с. 105:

և թերսնվածության հետևանքով: Կարևոր դեր են խաղացել նաև գորա-  
ջոկատների ցրվածությունը և բնական արգելապատնեշներով կտրվա-  
ծությունը մեկը մյուսից: Այնուհետև Վորոնցով-Դաշկովը կորպուսի  
հրամանատարին կշտամբել էր այն բանում, որ նա, ձեռքի տակ ունենա-  
լով 15 գունդ հեծելագորային զորամասեր, որևիցե կերպ բավարար հե-  
տախուզություն և կապ չի ապահովել: Ըստ Կորսունի՝ Վորոնցով-Դաշ-  
կովը նաև գտել էր, որ կորպուսի «տակտիկական կազմակերպումը»  
միանգամայն խախտված է եղել, զորամասերը խառնիխառն վիճակում  
են եղել, և այս բոլորը վատթարացրել են ստեղծված իրավիճակը բա-  
նակի ձախ թնում: Ըստ այդմ Վորոնցով-Դաշկովի անունից գլխավոր  
շտաբի պետը հրահանգել էր առանց ավստոսանքի իրենց զբաղեցրած  
պաշտոններին չհամապասխանող և պատահաբար զինվորական աս-  
տիճանասանդուղքում հայտնված բոլոր պետերին ներկայացնել ի ցույց,  
այնուհետև անհապաղ պաշտոնագրկել՝ գտնելով, որ նրանք շատ դեպ-  
քերում հաշվի չեն առել մարդկային կորուստները և բավարար հոգա-  
տարություն չեն ցուցաբերել զինվորների նկատմամբ:

Դրան ի պատասխան՝ Օգանովսկին հուլիսի 25-ին հայտնել էր, որ  
զորքերի աննպատակ և փութկոտ երթերը իրականացվել են «բարձրա-  
գույն հրամանատարության» ցուցումներով՝ արձանագրելով, որ որոշ  
զորաջոկատներ անցել են 800 կմ և ավելի մեծ ուղի, և որ հետախուզու-  
թյան առումով արել են այն ամենը, ինչ կարողացել են: Փորձելով արդա-  
րացուցիչ հանգամանքներ գտնել՝ Պ. Օգանովսկին նշված զեկուցագրում  
նաև հայտնել էր, որ իրենց համար նպաստավոր իրադրությունը  
խարխլվել է թուրքական զորքը ավելի քան 6 դիվիզիաներով համալրվե-  
լու, ինչպես նաև ռազմամթերքի պակասության և հատկապես հրետա-  
նային արկերի սակավության պատճառով: Ինչ վերաբերում էր պաշտոն-  
ներին չհամապատասխանող պետերի անհապաղ հեռացմանը, Պ. Օգա-  
նովսկին հայտնում էր, որ ինքը ժամանակին այդ մասին տեղեկացրել է  
ղեկավարությանը, և եթե կորպուսին տրված առաջադրանքը վատ է  
կատարված, ապա դրանում առաջին հերթին ինքն իրեն է մեղավոր  
համարում<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, 121-122:

Այսինքն, ստացվում է, որ ճիշտ կազմակերպվածության և ճկուն ղեկավարության պարագայում գուցե հնարավոր էր խուսափել մի շարք սայթաքումներից ու սխալներից և արդյունավետորեն հակազդել Աբդուլ Քերիմի հարձակմանը: Առավել ևս, որ դրանում մեղքի իր բաժինն ուներ նաև Պ. Օգանովսկին, ինչը նա անձամբ ընդունում էր: Օգանովսկին նույնպես առանձնապես չէր փայլում կազմակերպչական-կամային բարձր հատկանիշներով. նա ձեռք էր բերել «բարի ծերուկի» համբավ: Հավելենք նաև, որ հետախուզական գործը անբավարար էր կազմակերպված, և տեղին չէր դրանում միայն Տ. Դեոյանցին մեղավոր ճանաչել: Այս ամենը հանգեցրեց ռուսական զորքերի անհաջողությունների և Վան-Մանազկերտի շրջանում:

Այս առումով հետաքրքիր է Ն. Կորսունի եզրահանգումը Կովկասյան 4-րդ կորպուսի խաղացած դերի մասին Ալաշկերտի օպերացիայում. «Ողջ գործողության ընթացքում առանձնապես դրսևորվեց հեծելագորային գեներալներ Շարպանտյեի և Վիվյենի բացասական դերը: Կորպուսի հրամանատար գեներալ Օգանովսկին, որի վրա էր դրված այդ օպերացիայի ողջ ծանրությունը..., և գործելով լեռնային պայմաններում, չցուցաբերեց ղեկավարին համապատասխան հաստատակամություն: Նա միանգամայն հանդուրժողաբար էր վերաբերվում ավագ պետերին և չհեռացրեց նրանց հրամանատարությունից, նույնիսկ երբ նրանք շեղվում էին իրենց առջև դրված խնդիրներից և չէին ցուցաբերում զինվորական պարտք և խիզախություն, որոնք պետք է հատուկ լինեին յուրաքանչյուր հրամանատարի և զինվորի»<sup>1</sup>: Այդ անկազմակերպվածությունը իր կնիքը թողեց նաև տեղի հայ ազգաբնակչության տարհանման գործում, որը մասամբ խուճապային բնույթ ուներ, որին մեծապես նպաստում էր նաև այն հանգամանքը, որ բնակչությունը ժամանակին չէր տեղեկացվում դեպքերի ընթացքի մասին: Որոշ զորամասերի պետեր (գեներալ Շարպանտյե, Վորոպանով, Աբացիև) նահանջի հրամաններ էին տալիս՝ առանց կորպուսի հրամանատարի գիտության, որը ռազմական օրենքների խախտում էր և պետք է խստորեն պատժվեր: Այդ ամենի հետևանքով տիրում էր թափփոփված իրավիճակ:

---

<sup>1</sup> Տե՛ս **Корсун Н. Г.**, Алашкертская и Хамаданская операции, стр. 167:

Ի տարբերություն հայդուկապետերի արտահայտած ծայրահեղական մոտեցումների, որոնք տեղ են գտել հուշագրային գրականության մեջ, ռուսական զորքի վիճակը և թուրքական ուժերին դիմադրելու անկարողունակության հարցը մեկ այլ կողմից անհամեմատ ավելի իրատեսորեն է գնահատում Աշ. Հարությունյանը. «Սակայն ռուսների ուժերը իրականում նշանակալից չէին այդ ընդարձակ տարածությունն իրենց ձեռքը պահելու համար, ընդ որում դժվարանում էր զորքի մատակարարումը լեռնային վատ ճանապարհների պատճառով: Դրա համար էլ թուրքերի հակահարձակման անցնելուց հետո 4-րդ կորպուսի դիմադրությունը շուտով կտրվում է»<sup>1</sup>: Դա թուլացրեց Կովկասյան բանակի զորքերի դիրքերը, քանի որ անհրաժեշտ զորաշարժերի և մանրամասների համար բավարար քանակի զորուժ չգտնվեց: Չմոռանանք նաև այն կարևոր հանգամանքը, որ ռուսական բանակը չունեւ բավարար քանակի ձկուր և հմուտ, փորձառու հրամանատարներ, որոնք կարող էին լեռնային դժվարին պայմաններում մարտեր վարել:

Եվ վերջապես, Կովկասյան 4-րդ կորպուսի նահանջի գլխավոր պատճառը համարվող հետախուզության կազմակերպման հարցը, որում մեղադրվում էր նաև Տ. Դևոյանցը: Աշ. Հարությունյանի կարծիքով, այն վատ էր աշխատել: Իմանալով, որ կորպուսի շտաբի տվյալներով թուրքերը մտադրություն ունեն Միջագետքից և Դարդանելի շրջանից բերված թարմ զորքեր նետել կորպուսի ձախ թևը, 4-րդ կորպուսի շտաբը Աբդուլ Քերիմ փաշայի խմբավորման ցանկացած տեղաշարժը ընդունում էր որպես նոր և թարմ դիվիզիաների կամ կորպուսի տեղ<sup>2</sup>:

Հենց այս իրողությունների հետ էլ շաղկապվում է Մանազկերտի խմբի հետախուզության սպա Դևոյանցի անունը, որն իբր միտումնավոր կամ չիմացությամբ հակառակորդի մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ է հաղորդել կորպուսի շտաբ: Սակայն Աշ. Հարությունյանը փաստեր է բերում, որ դեռևս հունիսի 15-ին Դևոյանցը զեկուցագիր է ներկայացրել, որում հայտնել է, որ Քուփի ուղղությամբ թուրքերն ունեն 3-4 հազար ասկյար, 4 հրանոթ, որ Բիթլիս է ժամանել ոչ կանոնավոր զորուժից կազմված այնթաբյան դիվիզիան: Աշ.

<sup>1</sup> **Арутюнян А.**, Кавказский фронт 1914-1917 гг., с. 179:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, 197:

Հարությունյանը, հենվելով իր հայթայթած արխիվային փաստերի վրա, գտնում է, որ հուլիսի 17-ի և 24-ի զեկուցումների գրառումներում ևս ինքը չի հայտնաբերել ոչ հավաստի տվյալներ: Աշ. Հարությունյանը կարծում է, որ հենց ինքը՝ Դևոյանցը, ժամանակին հայկական մամուլի էջերում համոզիչ կերպով հերքել է իրեն հասցեագրված մեղադրանքները՝ ապացուցելով իրեն վերագրվող մեղադրանքի անհերթությունը: Նա Դևոյանցի մասին այս արժեքավոր գնահատականում, կարծիք է հայտնում, որ ինքը՝ Պ. Օգանովսկին, բանակի հրամանատարին ներկայացրած զեկուցում գրել է, որ ռուսների համար նպաստավոր իրավիճակը բացառապես խախտվել է թուրքերի կողմից թարմ ուժերի համալրման, ինչպես նաև ռուսների պաշարների պակասության և հատկապես հրետանային համակազմի անբավարարության հետևանքով<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, ռուսական բանակի նահանջի պատճառները և դրանք պայմանավորող գործոններն ավելի խորքային են, և որևիցե իմաստ չունի դրանք որոնել Ս. Դևոյանցի գործողություններում: Եվ դա այն պարագայում, երբ հայ կամավորական զորաջոկատների պետերը, անհանգստացած աղետաբեր նահանջի փաստից, իրենք էլ առանձնապես մեծ եռանդ չեն դրսևորել և ի հակառակ զորքերի ետքաշման մասին ռուսական բանակի հրամանատարության ընդունած որոշման՝ չեն փորձել գործել ինքնուրույն՝ թեկուզ ռուսական հրամանատարության հրամանները չկատարելու, մնալու և թեկուզև իրենց անձնագոհության գնով տեր կանգնելու Վան-Վասպուրականի հայ ազգաբնակչության ճակատագրին, կյանքին և գույքին:

Այնպես որ, գեներալ Օգանովսկին իզուր է ողջ մեղքը բարդում ռուսական բանակի հետախուզական կառույցի աստիճանակարգում ամենին էլ ոչ բարձր դիրք գրավող Ս. Դևոյանցի վրա. նա, ուղղակի կատարելով վերադասի հրամանը, նահանջի հրաման է տվել, ուստի ողջ պատասխանատվությունը կրում են ռուսական բանակի հրամանատարությունը, բարձրաստիճան ռուս զիվորականությունը, որը իր բաժին մեղսակցությունն ուներ ռուսական բանակում տիրող բարձիթողի վիճակի, ռեզերվային զորուժի անբավարար քանակի և այլ թերությունների ու սայթաքումների համար: Այդ օրերի և զորավար Օգանովսկու մոտ տի-

---

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

րող խուճապի մասին է տեղեկացնում Ս. Վրացյանը. «Զօր. Օգանովսկին հաստատել էր Նովո-Նիկոլաեկա գիւղում, ուր եւ գտայ նրան գլուխը կորցրած դրութեան մէջ:

Այստեղ էր եւ Տիգրան Դեվոյեանը, որ այն ժամանակ զբաղւած էր հետախուզական գործով: Նախ քան հրամանատարին դիմելը, ես խորհրդակցութիւն ունեցայ Դեվոյեանի հետ, եւ միասին կազմեցինք այն կէտերը, որոնց կարգադրութիւնը պէտք էր խնդրել զօր. Օգանովսկուց: Ճիշդ այդ օրերին Դեւոյեանը Մշից տեղեկութիւններ էր ստացել: Բերել էին սղերդցի երկու եղբայրներ՝ Տիգրան ու Խէչօ –երկու սքանչելի քրդախօս երիտասարդներ, որոնք մահը աչքի առնելով՝ ճեղքել էին թրքական ռազմագիծը եւ տեղ հասցրել իրենց վստահւած նամակը – մի երկար, հմայելի ձեռով ծալւած թուղթ, որի մէջ տեղեկութիւններ էին ամփոփած թիւրքական զօրամասերի ու հայ ժողովրդի դրութեան մասին եւ շուտափոյոթ օգնութիւն էր խնդրում: Տիգրանն ու Խէչօն դեռ Դեվոյեանի մօտն էին եւ պատրաստուում էին նամակի պատասխանը տանելու»<sup>1</sup>:

Պատմաբաններն էլ իրենց գնահատումներն ունեն, որոնք զերծ չեն որոշակի կողմնակալությունից: Ծ. Աղայանը, ընդգծելով, որ նահանջը կատարվել է թուրքական բանակի՝ այդ հատվածում կենտրոնացված ուժերի մասին խիստ չափազանցված և չստուգված հաղորդումների հիման վրա, դրանում անհիմն կերպով մեղադրում է ռուսական բանակի հետախուզության աշխատակից, «դաշնակցական» Տիգրան Դեւոյանցին: Սակայն դրանից հետո Ծ. Աղայանն ինքն իրեն հակասելով, կարծում է, որ ապակողմնորոշող տեղեկությունները ստուգելու փոխարեն գեներալ Պ. Օգանովսկին առանց ձեռքի տակ եղած փաստերը ստուգելու և ճշգրտելու, նահանջի հրաման է արձակել և անհետացել՝ կորպուսի շտաբը տեղափոխելով Կաղզվան-Ալաշկերտի լեռնանցքում գտնվող Նովոնիկոլաեկա գյուղը: Այդ ընթացքում՝ 3 օր շարունակ գեներալ Օգանովսկուն փնտրել են և չեն գտել, իսկ նրա գլխավորած IV կորպուսի 64 հազար զինվորները, իրենց 7 գեներալներով հանդերձ, խուճապահար, մեկը մյուսից անտեղյակ նահանջել են<sup>2</sup>, որին հետևել է հայ բնակչու-

<sup>1</sup> Վրացեան Ս., Վ. Փափագեանի յուշերի առթիւ, «ՎԷՄ», 1936, թիւ 1, 82:

<sup>2</sup> Տե՛ս Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 418: Արզումանյան Ս., Հայաստան, 1914-1917, էջ 242-243:



թյան անկազմակերպ և մահաբեր նահանջը: Այնուհետև Ծ. Աղայանը կարծում է, որ այդ նահանջի մեջ ավելի շատ մեղավոր է ռուսական բանակը և ոչ թե Դեոյանցը, որն այդ մեխանիզմի մի փոքրիկ մասնիկն էր. «Ինչ վերաբերում է ռուսական բանակի նահանջին, ապա դա ցարական զինվորական հրամանատարության այդ ժամանակ հանդես բերած անճարակության ու անհեռատեսության, հայտնի չափով նաև նրա դանդաղկոտության հետևանքն էր: Ռազմաճակատի այդ հատվածում գլխավոր հրամանատարությունն անհրաժեշտ քանակությամբ զորք չէր կենտրոնացրել: Ավելին, նահանջելու հրաման տալու պահին նա ապակողմնորոշող տեղեկությունների վրա էր հենվել»<sup>1</sup>:

Փաստերի համադրումը վկայում է, որ հենց ինքը՝ ռուսական բանակի գլխավոր շտաբն էլ այդ նահանջն արդարացնելու համար տարածել է զանազան ապակողմնորոշող տեղեկատվություն: Այս առումով հետաքրքիր է Լեոյի դիտարկումը. «Գրեթե միաժամանակ սկսվեց մի անհասկանալի խուճապային նահանջ Վանից եւ Մանազկերտից մինչև ռուսական սահմանները: Այդ շարժումն այդպես էլ մնաց առեղծվածային, ոչ ոք չէր տեսնում իրական, ճշմարիտ ու լուրջ հիմքեր, եւ այդ պատճառով ամենքի համար այդ շարժումը շատ կասկածելի էր, ինչ-որ հետին մտքով կատարված: Ոչ մի ուշադրություն զորահրամանատարների կողմից դեպի այդ ուժասպառ բազմությունը, որ գնում էր իր տանջանքի ճանապարհը՝ աջ ու ձախ դիակներ փռելով: Նրան օգնող չկար, նրան նույնիսկ չէին թողնում զորքից առաջ ընկնել...»

Երկու շաբաթ հազիվ անցած այդ նահանջից՝ ռուսական զորքերը նորից սկսեցին առաջ շարժվել դեպի Վան եւ Մանազկերտ՝ համարյա ոչ մի դիմադրության չհանդիպելով: Էլ ինչի՞՞ էր այս հետ ու առաջ քայլելը: Նահանջի ժամանակ լուրեր էին տարածել, թե թուրքական թարմ դիվիզիաներ են գալիս դեպի Վանա լճի հյուսիսային ափը՝ ռուսական բանակի նահանջի ճանապարհը կտրելու համար: Բայց այդ առասպելական դիվիզիաները չերեւացին եւ ոչ մի տեղ: Եվ համատարած կարծիք էր ստեղծվում հայերի մեջ, թե այս ամբողջ նահանջը դիտավորյալ էր, առանց ստիպողական պատճառի, հայերին այդ օրը գցելու համար...զոհ են բերում ամեն տեսակ իրական թե կարծեցյալ, մեծ թե փոքր ռազմա-

---

<sup>1</sup> Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 418:

գիտական նկատառման, որ Ռուսաստանի համար մենք դատարկ տեղ ենք»<sup>1</sup>: Այդ կարծիքին է նաև գեներալ Թովմաս Նազարբեկյանը. «Ոչ մի կերպ ես չեմ կարողանում հանգստանալ գեներալ Ա. Նիկոլսևի աննպատակ և արագ նահանջից, որն առաջ բերեց մեծ դժբախտություն բազմաչարչար հայ ժողովրդի համար»<sup>2</sup>:

Միաժամանակ դժվար է և գուցե սխալ պնդել, թե ռուսական կառավարությունը և գլխավոր հրամանատարությունը կանխամտածված են կազմակերպել իրենց զորքերի նահանջը, և ինչպես կարծում էին հայության ու մասնավորապես հայդուկապետերի շրջանում, թուրքերին ու քրդերին հնարավորություն տալով կոտորելու հայերին և գրավելու նրանց պատկանող տարածքները: Ռազմավարական առումով Օգանովսկու կորպուսին ձեռնտու չէր ռուսական բանակի չնախատեսված և անցանկալի ետքաշումը արդեն դժվարությամբ թուրքերից նվաճված դիրքերից ու տարածքներից, քանզի դրանով շոշափելի սպառնալիք էր ստեղծում հիմնական Վարս-Սարիղամիշյան խմբավորման համար: Միաժամանակ վտանգվում էին ռուսական պետության ռազմաքաղաքական շահերը Իրանում: Ռուսաստանի կենսական շահերից չէր բխում Ալաշկերտի հովիտը զիջել թուրքերին: Անշուշտ, ցարական կառավարությունը բոլոր նվաճված կամ Ռուսաստանին բռնակցված տարածքներում վարում էր գաղութային քաղաքականություն, որի հիմքում չէր կարող ընկած լինել հայերի ֆիզիկական ոչնչացման խնդիրը, ինչը նա բազմիցս կարող էր և ի վիճակի էր անելու: Ռուսաստանի համար առավել նպակատահարմար էր իրեն հավատարիմ հայկական ռեսուրսների խելամիտ օգտագործումը իր զավթողական պլանները կյանքի կոչելու համար:

Այլ բան է, որ այդ իրավիճակում հայկական կամավորական զորաջոկատները, կուրորեն ենթարկվելով ռազմաճակատի ռուսական հրամանատարության հրամանին, աներկբա ենթարկվեցին դրան՝ հրաժարվելով իրենց որդեգրած կազմակարգված պայքարի մարտավարությունից և բռնեցին նահանջի ճանապարհը, չնայած և՛ Արամը, և՛ Արարատյան IV Կամավորական զորագնդի հրամանատար Վարդանը (Վարդան

---

<sup>1</sup> **Լեռ**, Անցյալից: Հուշագրություն, Եր., «Շեմ» հրատ., 2009, էջ 310-312:

<sup>2</sup> ՀԱԱ, Ֆ.Պ – 45, ց. 1, գ. 22, թ. 43:

Մեհրաբյանը)<sup>1</sup>, և՛ ռուսական գործերի 4-րդ բանակային կորպուսի շտաբի պետ Վլ. Օգոլը, գեներալ-մայոր Ֆ. Գ. Չեռնոզուբովը<sup>2</sup> և ուրիշներ, այս կամ այն կերպ տեղեկացված լինելով ռուսական բանակի տեղաշարժերի մասին, ժամանակին զգաստացնող ակնարկներ էին արել այդ մասին՝ հայտնելով ռուսական բանակի հնարավոր անակնկալ նահանջի մասին<sup>3</sup>:

Ըստ էության ինքնին պարզ և հասկանալի է դառնում, որ ինչքան էլ փորձում են առանց որևիցե լուրջ հիմնավորման ռուսական բանակի մեծ նահանջի հարցում մեղավոր դարձնել Տ. Դեռյանցի անձը, նա չէր կարող մի ամբողջ բանակի ընթացքը փոխել, ինչպես կարծում են հայդուկապետերը, հայ կուսակցական-քաղաքական առաջնորդները՝ Անդրանիկը, Կ. Մասունին, Վ. Փափազյանը և ուրիշներ՝ սքողելով սեփական մեղքերն ու անվճռականությունը, անհեռատես «նահանջները», քաղաքական անիմաստ մանևրումները, որոնք, մեր կարծիքով, պակաս կարևոր դեր չեն խաղացել 1915 թ. հուլիսյան նահանջի խուճապային ընթացքի, անկազմակերպվածության և ունեցած անտեղի կորուստների խնդրում: Հենց այդ մասին խոսուն վկայություն կա Արարատյան IV կա-

---

<sup>1</sup> Վարդան (Խանասորի Վարդան, Մեհրաբյան Սարգիս, ?- 1943) - Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ: 1896 թ. մասնակցել է Շատախի ինքնապաշտպանական մարտերին: 1897 թ. գլխավորել է Խանասորի նշանավոր գործողությունը, որն ուղղված էր քրդական մագրիկ ցեղի դեմ: Մասնակցել է 1905-1906 թթ. հայթաթարական ընդհարումներին և ղեկավարել է հայերի ինքնապաշտպանական մարտերը: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Թուրքիայից վերադարձել է Կովկաս և նշանակվել 5-րդ կամավորական խմբի հրամանատար: 1915 թ. ապրիլի 1-ից՝ Վարդանը Արարատյան գնդի հրամանատարն էր: Վանի 1915 թ. հուլիսյան նահանջից հետո կրկին ձեռնամուխ է եղել կամավորական խմբի կազմավորմանը, սակայն, տեղեկանալով կամավորական ստորաբաժանումների լուծարման մասին, հեռացել է քաղաքական ակտիվ գործունեությունից:

<sup>2</sup> Չեռնոզուբով Ֆյոդոր Գրիգորիի (14.09.1863 -14.11.1919) - Ցարական բանակի գեներալ, ռազմական հետախույզ: Պատերազմի սկզբում Կովկասյան 4-րդ հեծելազորային դիվիզիայի պետ, 1916-ից մինչև 1917 թ.՝ հեծելազորային բանակային 7-րդ, ապա 5-րդ կորպուսների հրամանատար (1917 թ. վիճակով): Տե՛ս Գանին Ա. Ե., նշվ. աշխ., էջ 375, 425: Մահակյան Ռ., Ռուսական բանակի հայկական և քրդական ջոկատները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2010, № 1 (115), էջ 35:

<sup>3</sup> Տե՛ս ՆԱԱ, Ֆ.Պ - 402, ց. 2, գ. 11, գիրք 4, թ. 9: Ֆ.Պ - 1120, ց. 1, գ. 76, թ. 21-23: Ֆ.Պ - 1457, ց. 2, գ. 11, թ. 177: Ահարունեան Վարդգես, Անդրանիկ: Մարդը եւ ռազմիկը, էջ 31-32: Տե՛ս նաև Վևորյան Հ., Յապոն (Հովհաննես Պարոնյան), էջ 352-355:

մավորական գորագնդի հրամանատար Վարդանի մոտ, ում մասին իրենց հուշերում անդրադառնում են նաև Ա․Դոն, Հ. Սառիկյանը և ուրիշներ: Ըստ Սառիկյանի՝ Վարդանը մասնավորապես գրում է հետևյալը. «Դեռ Իգդիրում էինք, որ մի երեկո մտավ ինձ մոտ գեներալ Օզանովսկու շտաբի պետ ազգությամբ լատիշ Վլադիմիր Անտոնովիչ Օզոլը՝ մի վերին աստիճանի համակրելի ու բարձրագույն կրթության տեր մարդ և անձնական բարեկամ և ինձ ասաց. – Գիտե՛ս Վարդան, *մեր գորքերն առաջ են գնում, նրանք, անշուշտ կգրավեն Վանը, Բայց և նկատի ունեցիր, որ նրանք այնտեղ երկար չեն մնալու, նահանջելու են, ուրեմն տեղական ազգաբնակչության պաշտպանության հոգսը Ձեզ վրա է մնալու...*

*Ուստի դուք պատրաստվեցեք մեծ թվով մարդիկ, զենք ու ռազմամթերք ունենալու...աշխատեցեք որքան կարելի է Ձեզ ապահովել թնդանդթներով ու ռազմամթերքով...որպեսզի կարողանաք մեր նահանջից հետո դիմանալ Վանում: Օզոլի այս խոսքերի միտքը հետո միայն հասկանալի դարձավ<sup>1</sup>:*

Մակայն սա դեռ բոլորը չէ: Վարդանը շուտով կողմնակի ճանապարհներով տեղեկանում է գեներալ Նիկոլանի կողմից նախապատրաստվող ռուսական զորքերի ետքաշման և դեպի Կովկաս հեռանալու մտադրության մասին. «Գնում եմ մոտը և հարցնում նահանջի մասին: Ասում է, այո, ուզում եմ նահանջել և չեմ ուզում, որ ժողովուրդը իմանա, որ նա էլ միանա և խանգարի մեր նահանջի ճանապարհը»<sup>2</sup>: Այստեղ մենք գործ ունենք ռուսական երկդիմի քաղաքականության հետ, որի պայմաններում հայկական շահերը ստորադասվել են մեծապետական Ռուսաստանի գերակա շահերին, և զանազան մանևրումները աղետալի հետևանքներ են ունեցել հայ ազգաբնակչության համար: Գեներալ Նիկոլանը ընդամենը ռուսական ռազմական մեքենայի մի պտուտակն էր, հետևաբար նա կատարում էր այն, ինչ պարտադրվում էր բարձրագույն հրամանատարության և քաղաքական ղեկավարության կողմից: Հ. Սառիկյանը, պատմելով Վարդանի հետ իր ունեցած գրույցի մասին, փաս-

---

<sup>1</sup> Տե՛ս **Սառիկյան Հ.** Հիշողություններ. 1878-1924, էջ 332-333: Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 402, ց. 2, գ. 11, թ. 3: Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 1357, ց. 2, գ. 11, թ. 177:

<sup>2</sup> **ՀԱԱ**, Ֆ.Պ – 402, ց. 2, գ. 11, թ. 3:

տում է նրա այցի մասին գեներալ Նիկոլանին՝ պարզելու ռուսական զորքի անակնկալ նահանջի հանգամանքները. «Վերջապես Վանում ենք: Մեր կամավորական խմբերը բավական նվազել, ուժահատ էին յեղել: Ամենից ուժեղ մնում էր միայն Դրոյիներ: Մի օր էլ լսում եմ, վոր ռուսական զորամասերը Վանա լճի ափերը թողնում են, շուտով հերթը Վանին էլ է հասնելու: Բայց այդ ամենի մասին հայ կամավորական խմբերին վոչինչ չի ասվում: Շտապեցի զորամասի հրամանատար գեն. Նիկոլանի մոտ.

- Ճիշտ է՞, Ձերդ գերազանցություն, վոր ռուսական մասերը նահանջում են:

- Այո, - պատասխանեց նա, -մեր ունեցած տեղեկություններով (*խսկ այդ տեղեկություններն իբր թե տվել էր Դևոյանը*) տաճկական յերկու կորպուս է գալիս մեզ վրա: Մենք այդ ուժին դիմադրել անկարող ենք:

- Իսկ քաղաքի ու շրջակայքի հայ ազգաբնակչության վիճակն ի՞նչ է լինելու, հայ կամավորներն ինչ են անելու:

- Չգիտեմ, դժվարանում եմ պատասխանել, բայց հրաման է նահանջել:

- Այդ դեպքում մեզ թնդանոթներ, ռազմամթերք և դաշտային հեռախոսը տվեք, մենք կմնանք և ժողովրդին կպաշտպանենք:

- Վոչինչ չեմ կարող տալ, ամենայն սառնությամբ պատասխանեց Նիկոլանը...

- Մեզ համար պարզ էր,-վերջացրեց Վարդանը,- վոր հայերի նկատմամբ մի անօրինակ սրիկայություն էր կատարվում: *Տաճկական կորպուսների լուրը մտացածին էր, Դևոյանը նման տեղեկություններ չէր տվել: Նույն խաղի գոհ դարձավ Ալաշկերտի հայությունը 1914 թ. ձմեռը*<sup>1</sup>: Գեներալ-մայոր Թ. Նազարբեկյանը ևս խոստովանում է, որ այդ «նահանջը, որն իր մեջ չուներ ոչ մի հիմնավորում, հարկ է համարել

---

<sup>1</sup> **Սառիկյան Հ.**, Հիշողություններ. 1878-1924, էջ 333-334: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. Կ - 1457, ց. 2, գ. 11, թթ. 178-179:

հանցագործություն»<sup>1</sup>: Չզլանանք նշել, որ այս բոլոր գնահատումները արվել են հայկական մեկնակետից, և հետևաբար չեն արտացոլում բոլոր շահերը, դրդապատճառները և իրականության խորքային ծալքերը, որոնց դեռ ստորև անդրադարձ կկատարվի: Այդուհանդերձ, եղածն էլ ինչ-որ տեղ բավարար է՝ ըմբռնելու համար Դեոյանցի ներկայացված մեղադրանքների միակողմանիությունն ու մերկապարանոց լինելը, փաստագուրկ հիմքը:

Հենց այս բոլոր փաստերն ակնհայտ են դարձնում ողջ մեղքը Տ. Դեոյանցի վրա բարդելու անհիմնությունը և սնանկությունը: Ռուսական գորքերի հնարավոր նահանջն ամենայն հավանականությամբ ամեննին էլ անակնկալ չպետք է լիներ հայկական կամավորական գորաջուկատների պետերի համար: Նրանք այդ ամենին տեղեկանալուց հետո պետք է գենքի ու զինամթերքի պահեստավորման պատրաստություններ տեսնեին (չնայած, ինչպես փաստերն են վկայում, ռուսական հրամանատարությունն ամեննին էլ պատրաստակամություն չդրսևորեց հայկական կամավորական խմբերին օժանդակել գենքի և ռազմամթերքի ձեռքբերման խնդրում կամ էլ թույլատրել կամավորներին մնալ Վանում՝ արժանանալով գեներալ Նիկոլանի և բարձրագույն հրամանատարության մերժողական պատասխանին)<sup>2</sup>, լուծեին գորուծի խնդիրներ ու ռուսական բանակի նահանջի պարագայում մտածեին դիմակայելու մասին և գործնական քայլեր ձեռնարկեին, այլ ոչ թե փորձեին չիրականացված հնարավորությունների ողջ պատասխանատվությունը գցել ռուսական բանակում ոչ բարձր դիրք գրաված Տ. Դեոյանցի վրա, ինչն ինքնին անլուրջ զբաղմունք է: Չէ՞ որ գեներալ Թ. Նազարբեկյանը Ա. Եկարյանի և պրոֆ. Մ. Մինասյանի հետ ունեցած գործնական զրույցում նշել է, որ մեծ հույսեր չկապեն ռուսական բանակի հետ, հենց այդ պահից սկսած մտածեն «վաղվա օրվա և նոր ինքնապաշտպանության մասին»<sup>3</sup>:

---

<sup>1</sup> **Հարությունյան Ավ.**, Վան-Վասպուրականի ազգաբնակչության մեծ գաղթը, պատճառները, ընթացքը, հետևանքները և պատասխանատվության խնդիրը, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I, էջ 191:

<sup>2</sup> Տե՛ս **ՀԱԱ**, Ֆ.Պ – 1021, ց. 5, գ. 280, թ. 6-7:

<sup>3</sup> Տե՛ս **Հարությունյան Ավ.**, նշվ. աշխ., էջ 186:

Մակայն իրավիճակից ելք որոնելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը ևս անարդյունավետ են լինում: 1915 թ. հուլիսի 14-ին Վարդան Մեհրաբյանի նախաձեռնությամբ Վանի Երամյան վարժարանում հրավիրվում է ժողով-խորհրդակցություն, որին մասնակցում էին Անդրանիկը, Դրոն, Քեռին, Համազասպը, Վանի նահանգապետ Արամ Մանուկյանը, Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաջյանը), բժ. Տեր-Թովմասյանը, Ա. Բաբայանը և Վանի ապրիլյան հերոսամարտի շուրջ 1000 մասնակիցներ: Ժողովականները ընդհանուր համաձայնության են գալիս՝ ստեղծել զինված խմբեր (ավելի քան 300 հոգի) և ռուսական զորքի նահանջի պայմաններում սատարել Վանի պաշտպանության համար կարևոր Մոկս-Շատախի բնակչությանը, սակայն այդ օգնությունը գործնականում անիրագործելի է դառնում, և զենքի զգալի պակասություն ունեցող զորաջոկատները ձեռնունայն վերադառնում են<sup>1</sup>: Հ. Սառիկյանը այդ կապակցությամբ անդրադառնում է Վարդանի հետ հանդիպման ժամանակ վերջինիս արտահայտած կարծիքին ձեռք բերված արդյունքների մասին, թե ինչ անել ռուսական զորքի նահանջի դեպքում. «Ժողովուրդն առանց յերկար սպասելու, պատասխանեց, թե ռուսաց զորքի հեռանալուց հետո իրենք վոչ մի կերպ մնալ իրենց տեղերում չեն կարող, միակ փրկությունը գաղթելն է»<sup>2</sup>: Անկազմակերպվածությունը և տարակարծությունները ևս իրենց դերն են խաղում:

Ավելին, կամավորական ջոկատները ներկայացնող որոշ պատասխանատու այրեր անհիմն կամ ոչ լուրջ պատճառաբանություններ են բերում այն մասին, թե Համազասպի և մյուս ջոկատները մասամբ քայքայված են, ինչը նպաստեց պարտվողական և հուսալքող, փախուստի տրամադրություններին, և արդյունքում՝ մի շարք պատասխանատու գործիչներ լքեցին գործողությունների թատերաբեմը և արագ հայտնվեցին Կովկասում՝ պատասպարվելով Թիֆլիսի տաքուկ անկյուններում (դեռ հուլիսի 14-ին Կովկաս մեկնեցին Մ. Արարայանը, Կ. Համբարձումյանը, որոնց հաջորդեցին ուրշները)<sup>3</sup>, չըմբռնելով կամ չցանկանա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 172: **Ա-Ղո**, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Եր., 1917, էջ 468-469:

<sup>2</sup> **Սառիկյան Հ.**, Հիշողություններ. 1878-1924, էջ 334:

<sup>3</sup> Տե՛ս **Հարությունյան Ավ.**, նշվ. աշխ., էջ 173-177:

լով գիտակցել, որ եթե ժողովուրդը բռներ գաղթի ճանապարհը և միանար ռուսական բանակին, ապա ամենայն հավանականությամբ այլևս հնարավորություն չէն ունենա վերադառնալու իր հայրենիքը՝ Վան-Շատախ, Մուշ, Մասուն և Արևմտահայաստանի մյուս բնակավայրերը, ինչի արդյունքում Հայաստանը կհայաթափվեր: Հենց այդ շարժման ակունքներում կանգնած Կ. Մասունին խոստովանում է. «Անպատրաստ գտնուեցան սեփական ուժերով, ժամանակ մը պահպանելու Վանի գլխաւոր դիրքերը: Ու նախընտրեցին զանգուածային գաղթը...»<sup>1</sup>: Այնուհետև Կ. Մասունին պնդում է, որ ռուսական բանակը նահանջեց՝ նահանջի հրաման տալով նաև կամավորական զորագնդերին, միաժամանակ բազմանշանակ ավելացնում է. «Մեր կամավորական զունդերը կազմուած էին գերազանցապէս ազատագրական նպատակով: *Անոնք կրնային չհնազանդիլ ռուսական հրամանին, ու ներխուժել Մշոյ դաշտը: Մեր չորս զունդերը բաւական ուժ կը ներկայացնէին:*

*Ինձ ծանոթ է, որ Դատվանի մէջ, վճռական այդ վայրկեանին, վեր-յիշուած խնդիրը քննութեան նիւթ դարձած է Դրոյի եւ Անդրանիկի կողմէ: Դրոն առաջարկած է երկու զունդերով չնահանջել, այլ ներխուժել եւ միանալ Մշոյ եւ Մասնոյ կողողներուն: Սակայն Անդրանիկ ընդդիմացած է, ըսելով որ ինքը ստիպուած է ենթարկուիլ զինուորական կարգապահութեան: Ո՛վ որ առաջարկած ըլլայ եւ ո՛վ ալ որ մերժած, միեւնոյն է. Գործը, - յեղափոխական գերագոյն պարտականութիւնը - չիրագործուեցաւ, եւ ատոր համար ե՛ւ Դրոն եւ Անդրանիկ եւ միւսները յանցաւոր կը մնան Տարոնի նահատակուած ժողովրդի առջեւ»<sup>2</sup>:*

Այդ մասին է փաստում նաև Վ. Ահարոնյանը. «Յուսախաբ եւ գազազած Անդրանիկը իր գնդի հրամանատարութիւնը յանձնել էր իր օգնական, հայդուկային կռիւների հինաւուրց զինակից մշեցի Սմբատին, իսկ ինքը, մի խումբ ձիաւորներով շտապել էր անցնել Կովկաս»<sup>3</sup>: Նմանօրինակ տեսակետի ենք հանդիպում նաև Գ. Լազյանի մոտ. «Հետագային Անդրանիկ կանցնի Պիթլիսի ճակատը, բայց չկարողանար օգնութեան հասնիլ և փրկել Տարօսի ժողովուրդը: Ռուսական անբացատրելի

<sup>1</sup> **Մասունի Կ.**, Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914-1918). էջ 89:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 96:

<sup>3</sup> **Ահարոնեան Վարդգէս**, Անդրանիկ. Մարդը եւ ռազմիկը, էջ 33:



նահանջի հետևանքով՝ այդ օգնությունը անկարելի կըլլայ: Պնդողներ կան թե՛ կամաւորներու յանդուգն արշաւանքով մը կարելի էր 20-30 քիւլմէթր հեռուն գտնուած Տարօնի ժողովուրդին կապուիլ և զայն ազատել դահիճներու ձեռքէն: Ասիկա չընելուն համար Անդրանիկ մեղադրուեցաւ հետագային»<sup>1</sup>: Վ. Փափագյանը ևս նմանօրինակ կարծիք է արտահայտնում. «Բայց նոյն օրը ռուսական հրամանատարութենէն նահանջի հրաման ստանալով՝ շատ պարագաներու մէջ ըմբոստ Անդրանիկը, հարկ համարած է եղեր ենթարկուիլ սպայակոյտի հրամանին և անմիջապէս նահանջած է: Մինչեւ այսօր ալ դառնութեամբ կը խորհիմ Անդրանիկի այդ «կարգապահութեան» վրայ:

Հարցուցի իրեն օր մը այդ մասին: Ռեզոմացիի հեղինակաւոր դիրքով մը՝ ինծի դիտողութիւն ըրաւ, թէ՛ ես չեմ հասկնար զինուորական շարժումներէ. Ինչպէ՛ս կրնար ինքը մինակը, մնալ այդքան ներսը՝ թշնամիի երկրին մէջ, երբ ամբողջ բանակը կը նահանջէր»<sup>2</sup>:

Վանի մեծ նահանջով սերմանված խուճապային վիճակի, այդ օրերին տիրող անկումային մթնոլորտի ու տրամադրությունների մասին պերճախոս վկայություն կա Ս. Վրացյանի մոտ. «Այս ժողովների միջոցին պարզեց մի չափից աւելի տխուր պատմութիւն, որ յետոյ հաստատուեց եւ պաշտոնական փաստերով: Երբ նահանջի հրամանը գալիս է Վանի լճի հարաւի զօրամասի պետ զօր. Տրուխինին, վերջինս, Դրօի եւ մօտը եղող միւս խմբապետների դիմումի վրա, արտօնում է հայ կամաւորական բոլոր գնդերին, ռուսական թնդանօթների եւ կազակ հարիւրակների օգնութեամբ արագօրէն շարժել դէպի Մուշ՝ մի կողմից այնտեղի հայութիւնը ազատելու եւ միւս կողմից թուրք բանակին թիկունքից զարնելու եւ խուճապի մատնելու դիտաւորութեամբ: Բայց այս ծրագրին հակառակում է Անդրանիկը, որ Մուշի ուղղութեամբ առաջաւոր դիրքերում էր, հազիւ 30 քիլոմետր Տարօնի դաշտից: Նա թուրք է գրում հեծելազօրի պետ զօր Շարպանտիլէին\*) յայտնելով, թէ ինքը հնարաւոր չի համարում զօր. Տրուխինի կարգադրութիւնը կատարել,

<sup>1</sup> **Լազեան Գ.**, Յեղափոխական դէմքեր, էջ 335:

<sup>2</sup> **Փափագեան Վ.**, Իմ յուշերը, հ. երկրորդ, էջ 381: Տե՛ս նաև **Փափագեան Վ.**, Համաշխարհային պատերազմը եւ Տարօնի աշխարհը: 1914-1915, էջ 117:

որովհետև կարող է կտրել ռուսական բանակից, եւ առանց պատասխանի սպասելու՝ թողնում է դիրքերը եւ բռնում նահանջի ճամբան...»<sup>1</sup>:

Եվ սա դեռ բոլորը չէ: Փախչելու-փրկվելու ձգտումը համակում է շատերին: Անդրանիկը եւ, հայտնվելով այդ իրավիճակում, նախընտրում է պարզապէս հեռանալ օրեցօր շիկացող իրադարձությունների թատերաբեմից, ինչը շատերի համար ուղղակի անըմբռնելի էր: Դարձյալ դիմենք Ս. Վրացյանին. «Ինչպէս ասում էին, Անդրանիկն այնքան ջղայնացած ու բարոյալքուած էր, որ ճանապարհին ոչ մի տեղ չի կանգնում և իր զինուորներն առած՝ աշխատում է օր առաջ հասնել Կովկաս: Նոյն իսկ Բերկրիում, ուր խոնւած էր Վասպուրականի գաղթականութիւնը, մերժում է տրամադրել իր ուժերը ժողովրդի պաշտպանութեան համար եւ անպաշտպան թողնելով բազմահազար բազմութիւնը՝ շտապում է հեռանալ: Բարեբախտաբար վրա է հասնում Դրօն իր զօրամասով եւ իր վրա է առնում Բերկրիի պաշտպանութեան գործը: Ականատեսները վկայում էին, որ եթէ Դրոն ժամանակին չհասներ, Վասպուրականի հայութեան մի ահագին մասը կը կոտորէր Բերկրիի ձորում:

Իգտիրում էլ, ժողովների ժամանակ, Անդրանիկը շատ տարօրինակ դիրք բռնեց: Գլխաւորապէս, Արմէն Գարօն եւ Դրոն, որքան յիշում եմ, եւ Ռոստոմն ու Արամը պնդում էին, որ կամաւորական գնդերից կազմւի մի յատուկ զօրամաս, որ անմիջապէս փութայ Տարօնօ օգնութեան: Առաջարկում էր, որ զօրամասի գլուխ կանգնէ ինքը Անդրանիկը, բայց սա բռն կերպով հակառակ արտայայտեց այդպիսի մի ձեռնարկի: Նրա կարծիքով, յիմարութիւն էր միայն հայկական ուժերով առաջ շարժելու միտքը: Ինչպէ՞ս կարելի է այդքան ուժերով կռիւ դուրս գալ թիւրքական բանակի դէմ: Ոչ ինքը կ'երթայ, ոչ էլ ուրիշին խորհուրդ կը տայ այդպիսի մի քայլ անելու, որ հաւսար է էջ նահատակութեան...

Անդրանիկի բռնած դիրքը ուղղակի շշմեցուցիչ էր բոլորի համար:... Բաւական ձգձգումներից յետոյ, կազմւեց կամաւորական յատուկ մի ջոկատ, որի գլուխն անցաւ Դրօն եւ շարժւեց Տարօնօ ուղղութեամբ: Դժբախտաբար, արդէն ուշ էր...յուլիսի –ին, երբ Իգտիրում սկսւել էին աղմկոտ խորհրդակցութիւնները, Տարօնի ժողովուրդը կոտորւել էր:

---

<sup>1</sup> Վրացեան Ս., Վ. Փափագյանի յուշերի առթիւ, «ՎԷՄ», Փարիզ, 1936, թիւ 1, էջ 84:

...Կռի ժամանակ վախ չճանաչող այս անվեհեր ու քաջ հայդուկը, այդ անպայման բարձրատաղանդ ու հայրենասէր զինուորականը, նահանջի օրերին զարմանալի արագութեամբ մատնուում էր յուսալքման, դառնում էր ջղագրգիռ ու անտանելի եւ իր հոգեկան քայքայած վիճակով բարոյալքող ազդեցութիւն էր անում եւ շրջապատի վրա»<sup>1</sup>:

Համանման տեսակետի էր նաև Կ. Սասունին, որն ավելի ծայրահեղական հետևողական է հանգում՝ որոշ առումով արտահայտելով այն զինվորական այրերի և հայդուկապետերի տրամադրությունները, որոնց համաձայն ռուսները կարող էին անձնատուր լինել, սակայն իրենք այդ մասին մտածել իսկ չէին կարող՝ հրաժարվելով պարպել ազատագրված շրջանները, շրջանցելով ռուսական զինվորական հրամանատարության որոշումը և շարժվելով դեպի Տարոն ու Սասուն<sup>2</sup>: Նման ձևով խնդրի լուծումը կարևորագույն նշանակություն կարող էր ունենալ բազմահազարանոց հայության համար և փրկել գոնե ողջ մնացածների մի մասին, ինչի իրագործման համար անհրաժեշտ էր միասնական վճիռ կայացնել կամավորական գորախմբերի գործողությունների ուղղորդիչ բնույթ տալու համար: Սակայն առաջացած տարաձայնությունները անհաղթահարելի եղան, ինչը հանգեցրեց այդ գորաջոկատների կողմից ռուսական հրամանատարության հրամանի շտապ ու հապճեպ կատարմանը և Մեծ նահանջին ու հայ գաղթականության վտանգալից գաղթին:

Մյուս կողմից էլ հասկանալի է, որ հայ կամավորական գորագնդերի հնարավորությունները միանգամայն սահմանափակ էին շուրջ 400 կմ սահմանագիծ վերահսկելու և թուրքական թեկուզև ոչ շատ գորեղ խմբավորման հարձակումը կասեցնելու և պաշտպանվելու, ինչպես նաև ազգաբնակչության անվտանգությունը ապահովելու համար: Անկախ նրանց մեջ առկա տարաձայնություններից և խմբապետական տրամադրություններից, անգամ ցանկության պարագայում հազիվ թե նրանք կարողանային լուրջ հակակշիռ ստեղծել գերազանցող թուրքական ուժերի գործողությունների դեմ, էլ չենք ասում՝ հաղթել: Ողջ ընդհանուր ռազմավարական հաշվարկը կատարվել էր ռուսական ռազմու-

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 85:

<sup>2</sup> **Սասունի Կ.**, Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 96:

Ժի ակնկալվող հաղթարշավի վրա: Այս հանգամանքը հենց ինքը, Դևոյանցին գլխավոր մեղադրական ներկայացողներից մեկը՝ Կ. Սասունին է փաստում. «Իսկ հայ ղեկավարությունը կը սպասէր ռուսական և հայ կամաւորական բանակներուն: Ռուսական բանակներու յառաջացման յոյսերով եղած սպասումը կրնանք գլխաւոր պատճառը նկատել հայութեան անվճռական կամքին»<sup>1</sup>:

Հարց է առաջանում. ինչպե՞ս, ի՞նչ հիմքերով մեղադրանքների առյուծի բաժինը վերագրել ընդամենը պրապորշչիկ Տիգրան Դևոյանցին, որը, Մ. Վրացյանի իսկ վկայությամբ, իր հետ միասին ստեղծված քառասային պայմաններում իրապէս մտահոգված էր հայ բնակչության արտագաղթի անկորուստ կազմակերպման հարցերով. «Նախ քան զօր. Օգանովսկուն ներկայանալը, Տ. Տէվոյեանի հետ խորհրդակցաբար կազմեցինք մի յուշագիր, որի մէջ դրած էին անմիջական գործադրութիւն պահանջող կէտերը: Որքան յիշում եմ, իմ միջոցով, Հայոց Ազգային խորհուրդը չորրորդ կորպուսի հրամանատարից խնդրում էր –

1) Հրաման տալ համապատասխան զօրամասերին, որ ապահովեն հայ ժողովրդի արտագաղթը դէպի Կովկաս:

2) Վասպուրականի եւ Ալաշկերտի ճանապարհի վրա, որոշ կէտերում, հաստատել զօրապահակներ, սնունդի եւ բժշկական կայաններ, գաղթականներին օգնելու համար:

3) Տրամադրել անհրաժեշտ քանակութեամբ սնունդ եւ բժշկական միջոցներ:

4) Տրամադրել փոխադրութեան միջոցներ՝ հիւանդ եւ քայլելու անկարող գաղթականների տեղափոխութեան համար:

5) Եւ հրամայել հայ կամաւորական գնդերին, տալով նրանց թնդանօթներ եւ օժանդակ ռուսական ուժեր, թիւրք բանակի թիկունքից, օգնութեան հասնել Մուշի հայութեան:

Այս վերջին կէտը դուրս էր Ազգ. Բիւրոյի կողմից տրւած հրահանգից, բայց Տիգրանի եւ Խէչոյի բերած տեղեկութիւնները այնքան ծանրակշիռ էին եւ օգնութեան պահանջը, այնքան անյետաձգելի, որ Դէվոյեանի հետ համախորհուրդ որոշեցինք այդ պահանջն եւս մտցնել յուշագրի մէջ եւ անձնական տեսակցութեան ժամանակ էլ պաշտպանել:

---

<sup>1</sup> Տե՛ս **Սասունի Կ.**, Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 781:

Զօր. Օգանովսկին...կարդաց յուշագիրը, լսեց... բացատրութիւնները, արտասուեց եւ խոստացաւ ամէն բան կատարել: Մանաւանդ, նրան դիր եկաւ յուշագրի վերջին կէտը, որ ռազմական տեսակէտից էլ արժէքատր հետեւանքներ կարող էր ունենալ: ...

Ճիշդ այդ պահուն ներս մտաւ իր սպայակոյտի պետը՝ գօր. Մդիվանին...կարդաց յուշագիրը, լսեց իր պետի բացատրութիւնները եւ պաղ ջուր լեցրեց բոլորիս գլխին. Նահանջող բանակը այնպիսի վիճակի մէջ է, որ մեր խնդրած կէտերից եւ ոչ մէկը հնարաւոր պիտի լինի գործադրել. Գաղթականներին օգնելը գօրքի գործը չէ:

Հայ կամաւորները հազիւ թէ կարողանան թշնամու բանակի թիկունքը անցնել. Այդ շատ վտանգաւոր ձեռնարկ է: ...Զօր. Օգանովսկին փորձեց Մդիվանիի ասածները մեղմացնել, յուսադրել ու քաջալերել, բայց պարզ էր, որ պիտի կատարուէր Մդիվանիի ասածը եւ ոչ իրենը, ինչ-որ հաստատուեց հետագայ դէպքերով»<sup>1</sup>:

Այստեղ ինքնին պարզ է դառնում Տ. Դեոյանցին ներկայացված մեղադրանքների ողջ սնանկությունը: Կարծում ենք՝ որոշ առումով իրավացի է պատմաբան Հ. Գևորգյանը, որը անդրադառնալով Դեոյանցի հնարավոր վրիպումներին և նահանջի հիմնախնդրին, կատարում է հետևյալ դիտարժան եզրահանգումը. «Վան-Վասպուրականի բնակչության գաղթի մանրամասների ուսումնասիրությունը պարզորոշ ցույց է տալիս, որ այն ռուսական հրամանատարության կողմից, կարծես ինչ-որ հատուկ դիտավորությամբ, միտումնավոր կերպով կազմակերպվել է չափազանց անփույթ ու անկազմակերպ: Իր հերթին, Արարատյան գործախմբի հրամանատարությունը գաղթականության անվտանգությունն ապահովելու գործում նույնպես չի գտնվել բարձրության վրա և զուտ մարտավարական առումով թույլ է տվել աններելի սխալներ»<sup>2</sup>, դրանով իսկ չկարողանալով ապահովել «120,000 [ավելի ստույգ տվյալներով, շուրջ 200 հազար] ժողովրդի նահանջի բոլոր ճանապարհները»<sup>3</sup>: Առավել ևս, որ Վանից ռուսական բանակի նահանջի ժամանակ հայ ազգա-

---

<sup>1</sup> Վրացեան Ս., Վ. Փափազյանի Յուշերի առթիւ, «ՎԷՄ», 1936, թիւ 1, էջ 83-84:

<sup>2</sup> Գևորգյան Հ., Դրո, էջ 175:

<sup>3</sup> Տէ'ս Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), էջ 89:

բնակչության գաղթի համար ստեղծվել էին անտանելի պայմաններ՝ Բերկրիի կիրճը անցնելու համար տալով ընդամենը երեք օր, այլապես Վան-Վասպուրականի շուրջ 200 հազար հայությունը մնում էր թուրք-քրդական ծուղակում: Դեռ ավելին, գորավար Օգանովսկին իր հազար հոգանոց գնդով փակել էր թրքական ուժերի ճանապարհը, որպեսզի Շատախի գավառի դեռ տատանվող ժողովուրդը հասցներ գաղթել<sup>1</sup>: Մա գեներալ Օգանովսկու ուշացած, սակայն կշռադատված ու հաջող քայլերից մեկն էր՝ ի տարբերություն իր նախորդ քայլերի, որոնցում անհիմն մեղադրանքներ էր շարտում Տ. Դևոյանցի վրա՝ փորձելով մեղքը իր վրայից գցել:

Միևնույն ժամանակ հեռու Թիֆլիսում նստած, ականջալուր լինելով Վանի և Մանազկերտի նահանջներին, որը «սարսափներով էր լցնում Հայաստանի սիրտը», քաղաքական-ռազմական առաջնորդները բացահայտ անգործության էին մատնված. «3-4 հոգի հավաքվում է լրիկ ու մոռյալ սենյակում, բազմաթիվ դատարկ աթոռների մեջ զեկուցումներ լսում: Իսկ իր Կիսլովոդսկներում, Կոջորներում, Աբասթումաններում հանգստացող հայ բուրժուազիան սովորականի պես էր՝ խուլ, անզգա...»<sup>2</sup>:

Այս փաստը ևս ակնհայտ է դարձնում նահանջի դրդապատճառների մեջ Տ. Դևոյանցին դատապարտելու անհիմն լինելը:

Ասենք, որ Տ. Դևոյանցը՝ ինքն էլ հետևողականորեն ու վճռականորեն տարբեր առիթներով հերքում էր դա<sup>3</sup>: Նա բազմաթիվ ապացույցներ է բերում, որ, անկախ որևէ հանգամանքից, ռուսական բանակը միշտ էլ ամենաճիշտ և ստուգված տեղեկություններ ուներ թշնամու ուժերի դասավորման, քանակի և այլնի մասին, մնում էր ընդամենը հետևել թիկունքում թշնամու ուժերի փոփոխություններին, ինչով և մանրակրկիտ զբաղվում էին հետախուզական գործի կազմակերպիչները: Ուստի Տ. Դևոյանցը հանգում է հետևյալ եզրակացության. «Անկարելի էր սխալվել թշնամու ուժերի տեղավորման, դասավորման մասին, իսկ կովի միջո-

---

<sup>1</sup> Տե՛ս **Դերիկյան Տ.**, Արևմտահայության ինքնապաշտպանությունը. 1915-1923, էջ 91-92:

<sup>2</sup> **Լեռ**, Անցյալից: Հուշագրություն, Եր., «Շեմ» հրատ., 2009, էջ 314:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական արխիվ (Բոստոն), թղթածրար, ՍՎ. 78/8:

ցին միշտ ունեինք գերի կամ փախստականներ, որոնց միջոցով ճշտում էինք թշնամու նոր դասավորությունը»<sup>1</sup>:

Տ. Դևոյանցի մի շարք փաստարկներ ժխտում են 1915 թ. հուլիսյան «Բյուրաց կամ Վանի Մեծ նահանջ» անվանված իրադարձություններում ռուսական զորքերի կանխամտածված նահանջի հանգամանքը: Պարզ էր, որ ոչ մի պետության ձեռնտու չէ հազարավոր զինվորներ զոհել՝ հանուն զանազան անմիտ նահանջների: Նահանջում են միայն մի դեպքում, երբ թշնամին այդ պահին ավելի զորեղ է և գերազանցում է իր ռազմուժով: Հենց դա է ձգտում ապացուցել Տիգրան Դևոյանցը. «...Տաճկական հետևակ և ձիավոր բազմաթիւ ուժերը Օխչիան գյուղի մոտ սկսեցին անցնիլ Եփրատ գետը, միաժամանակ ոմբակոծելով Մանազկերտ քաղաքը: Հակահարձակում էին սկսել այդ միջոցին նահանջած տաճիկ զորքերը՝ Մուշի և Բիթլիսի ճակատից:

Նահանջն անխուսափելի էր:

Հակառակ պարագային տաճիկները պիտի կտրեին Մանազկերտ-Ախլաթ գիծը և այն զորքերը, որոնք առաջ էին անցել Սշոյ և Բիթլիսի ուղղությամբ՝ պիտի գերի ընկնեին քաջն Անդրանիկի հետ տաճիկներին:

Եղավ անխուսափելին: Ռուսական զորքերը նահանջեցին Կաղվան, բայց մինևույն ժամանակ գեներալ Ն. Բարատովին<sup>2</sup> հրաման

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> **Բարատով Նիկոլայ Նիկոլայի** (01.02.1865-22.09.1932) – Իշխան, հեծելազորի գեներալ, գեներալ-լեյտենանտ: 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ Մանջուրական զորախմբավորման կազմում հանդիսացել է Մունջեն-Վլադիկավկայան 1-ին Տերսկյան կազակային զորքերի գնդի հրամանատարը: 1906 թ. մայիսի 18-ին ստացել է գեներալ-մայորի կոչում, իսկ այնուհետև՝ Կովկասյան 2-րդ բանակային կորպուսի հրամանատար, որից հետո՝ Կովկասյան 1-ին կազակային դիվիզիայի պետ: 1915-1917 թթ. եղել է Պարսկաստանում էքսպեդիցիոն կորպուսի հրամանատար: 1917 թ. հունիսի 7-ին նշանակվել է Կովկասյան հեծելազորային կորպուսի հրամանատար, 1918 թ.՝ ռուսական զորքերի հրամանատար Պարսկաստանում, այնուհետև՝ Կովկասյան 5-րդ բանակային կորպուսի հրամանատար: Գեներալ Ն. Ն. Բարատովը 1918 թ. մասնակցել է քաղաքացիական պատերազմին, և հանդիսացել է Ռուսաստանի հարավի զինված ուժերի՝ Դենիկինի Կամավորական բանակի ներկայացուցիչը Անդրկովկասում, իսկ փաստացի՝ Անդրկովկասում արտակարգ միսիայի ղեկավարը: Այնուհետև հայտնվել է տարագրության մեջ, ապրել Ֆրանսիայում: 1930 թ. մինչև իր վախճանը Ն. Բարատովը հանդիսացել է զինվորական հաշմանդամների արտասահմանյան միության նախագահը, և «Русский инвалид»

տրվեց Սարիղամիշի ճակատից Կլիչ Գիադուկի վրայով կտրել տաճկական գորքերի թիկունքը: Բարատովը այդ գծով շարժեց Մանազկերտ և տաճկական այդ յարձակող բանակը թողեց իր ձիուժը, 5000ից ավելի գերիներ, որոնց տասնեակ օրեր Ղարաբիլիսայի մէջ հարցաքննել եմ և նրանց հարցաքննութիւնները եկել են հաստատելու սպայակոյտի և իմ ունեցած լուրերը թշնամու ուժերու մասին:

Որտեղի՞ց Անդրանիկը վերցրեց 2 տաճկական դիվիզիա. իբր հաղորդել էր շտաբին, թէ իրենց դէմ էին գտնուում 2 հաստ տաճկական դիվիզիա»<sup>1</sup>:

Այս խնդրի պարզաբանումը համարելով իր պատվի խնդիր՝ Տ. Դեոյանցը դիմելով փաստերի օգնությանը, ձգտում է ապացուցել իր անմեղությունը ռուսական զորքի նահանջի հարցում: Ավելին, նա փորձում է նաև հիմնավորել այդ նահանջի անհրաժեշտությունը և անխուսափելիությունը. «1915 թ. ամառը, ռուսական 4-րդ կորպուսի մէկ մասը կը գրաւեր Ատիջեվագ-Մանազկերտ-Դուկնիսկ գիծը՝ ունենալով 18.000-ի չափ հետեւակ եւ ձիաւոր զորք: Ձիաւոր տիվիզիայի հրամանատարն էր Շարպանտիէ, իսկ սպայակոյտի պետը՝ մեր բոլորի կողմից յարգւած կարող զինուորական գնդ. Ղորղանեանը, հետագային Հայաստանի Հանրապետութեան Փարիզի Պատիրակութեան անդամը. Կը կարծեմ, թէ շատ օգտակար կը լինէր, եթէ յարգելի զօրավարը իր կարծիքը յայտնէր Վէմ»-ի մէջ, թէ ռուսական զօրքը Մանազկերտէն պէ՞տք էր նահանջէր, թէ՞ ոչ: Իմ կարծիքով, այո՛, պէտք է նահանջէր, հակառակ պարագային, ամբողջ այդ 18.000 զօրքը գերի կընկնէր: Բացատրեմ, թէ ինչո՞ւ պէտք է նահանջէր:

Տաճիկները ռուսերուն ցոյց տւին շատ ուժեղ դիմադրութիւն, բայց վերջը լքեցին Ախլաթի եւ Կոփի լեռները՝ տալով հարիւրաւոր փախստական եւ գերի զինուորներ, որոնց հարցաքննութիւնը միայն հաստա-

---

թերթի խմբագիրը: Տե՛ս Գանի Ա. Վ., նշվ. աշխ., էջ 161, 280, 422, 584: «Русский инвалид», Париж, 1930, № 1: Գոգիտիձե Մ., Грузинский генералитет (1699-1921 гг.). Биографический справочник НАН Украины. Инст. археографии и источниковедения им. М. Грушевского, Укр. Центр биографической некропологии. Сост. М. Гогитидзе, отв. ред. Иван Дивный, Киев, 2001, с. 61-62:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության կենտրոնական արխիվ (Բոստոն), թղթածրար, ՍՎ. 78/8, թ. VI:



տեց այս վերը բերուած թրքական ուժերու քանակը: Ռուսական բանակը կը յառաջանար Բիթլիսի եւ Մշոյ ուղղութեամբ եւ մօտեցած էր Մուշին եւ Բիթլիսին, առանց ունենալու ո եւ է պահեստի ուժ Մանազկերտի մէջ: Ի՞նչ խաղ խաղացին տաճիկները: Անոնց նահանջող բանակին մեծագոյն մասը անցաւ Կոփէն, վերջը Եփրատ գետը, եւ վերադառնալով՝ կեդրոնացաւ Մանազկերտի դիմացը Օխչիան գիւղի առջեւը, գետի միւս եզերքը, 2-3 մղոն Մանազկերտէն հեռու»<sup>1</sup>:

Տ. Դևոյանցը, իր հաղորդած տեղեկությունները անհիմք չհամարելով, միաժամանակ միանգամայն իրավացիորեն եզրահանգում է, որ միայն իր հաղորդած հետախուզական տեղեկությունները չէին կարող բավարար լինել ռուսական բանակի հրամանատարության համար արմատական նշանակություն ունեցող վճիռներ կայացնելու և առաջին հերթին հայության համար կորստաբեր նահանջի մասին, քանզի նա գործնականում տնօրինում էր հակառակորդի մասին բավարար տեղեկություններ ստանալու բազմաթիվ միջոցների՝ տիրապետելով հետախուզական հավաստի տեղեկատվություն ձեռք բերելու բազմաստիճան համակարգի՝ գնդային, բրիգադային, դիվիզիայի և կորպուսի մակարդակով և այլն: Ահա ինչ է գրում Տ. Դևոյանցը. «Ռուսական բանակը միշտ ուներ ամենաճիշտ տեղեկութիւնները թշնամու ուժերի դասաւորման, քանակի եւ այլնի մասին իրենց NN-ով, միայն մնում էր միշտ գտնիլ թշնամու ուժերի թիկունքում կատարուող փոփոխութիւններին, օրինակ պահեստի բատալիոնում ի՞նչ ժամանակ, որքա՞ն զօրք կայ, այդ ուժերով իբր եւ որ NN գնդերն էն ուժեղացում եւ Յետախուզական գործի ամենագլխաւոր էութիւնը կայանում էր աչալուրջ հետեւել գնդերի, դիվիզիաների NN-ին»<sup>2</sup>:

Դա բխում էր պատերազմի չգրված օրենքներից: Հետախուզության գործն առաջնային էր: Այդ մասին փաստում է Տ. Դևոյանցը. «Ռուսական սպայակոյտը միշտ տեղեակ էր նաեւ թշնամիի ուժերու քանակի մասին, թէ որքան զինուոր կար այսինչ գնդի, վաշտի կամ գումարտակի մէջ:

---

<sup>1</sup> **Դեյեանց Տ.**, Հետախուզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 3, յունիս-սեպտեմբեր, էջ 64-65:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական արխիվ (Բոստոն), թղթածրար, ՍՎ. 78/8, թ. III:

Եթե շրջանէ մը երկար ժամանակ լուր չէ ստացւեր, այն ժամանակ հետախուզութեան կողարկւի ամէն մէկ գունդին կից եղող ձիաւոր հետախույզներու խումբը, որուն կը հրամայի գիշերը կամ լուսաբացին յառաջանալ դէպի թշնամիի գիծը, շփման մէջ մտնել անոր հետ եւ ամէն գնով աշխատիլ գերի բերել: Իրարմէ անկախ հետախոյզներ կողարկէն թշնամիի թիկունքը՝ ճակատի, բանակի, կորպուսի, դիվիզիայի եւ բրիգադայի սպայակոյտներու հետախուզական բաժանմունքի պետերը: ...Ճակատի եւ բանակի հետախուզական բաժանմունքի պետը այսքանով չբաւականանալով, ամբողջ ճակատը կը բաժնէ շրջաններու եւ ամէն մէկ շրջանը կողարկէ կազմակերպող հետախոյզ մը, որուն կը յանձնարարէ իր շրջանի դիմացը՝ թրքական ուժերու թիկունքը: Այդ բազմաթիւ հետախոյզներէն մէկն ալ ես էի:

Ռուսական բանակը գիտէր իր դէմը գտնուող թշնամիի ուժերու մասին ամենամանրամասն տեղեկութիւններ...

Կը մնար ամբողջ ճակատի վրա ցրած բազմաթիւ հետախոյզներուն միշտ հետեւիլ այն փոփոխութիւններուն, որոնք տեղի կունենային ճակատի վրա: Ճակատի կետորոնական սպայակոյտը, որմէ կախած էր յարձակման դիմելը կամ նահանջելը, միշտ շատ լաւ իրազեկ էր կացութեան եւ իր զօրքերու դասաւորութիւնը փոփոխութեան կենթարկէր, երբ թշնամիի ուժերու մասին նորանոր ստուգուած լուրեր կը ստանար»<sup>1</sup>:

Այլ բան է ասել, որ կովկասյան ճակատին բավարար չափով ուշադրություն չդարձվեց, պահեստագործ գրեթէ դատարկ էր, սպայական կազմը կաղում էր և այլն:

Հետագայում Տ. Դետյանցը՝ կրկին հերքելով իր հաղորդած տեղեկությունների ոչ հավաստիությունը և փաստելով Վան-Մանազկերտի շրջանում գերագանցող թուրքական ուժերի կենտրոնացման մասին, ուղղակի գրում է. «Անկարելի էր սխալվիլ թշնամու ուժերի տեղադրման, դասաւորման մասին, իսկ կռիւ միջոցին ճշտում էինք թշնամու նոր դասաւորութիւնը»<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Դետյանց Տ., Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 2, յունար-մայիս, էջ 61-62:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության կենտրոնական արխիվ (Բոստոն), թղթածրար, ՍՎ. 78/8:

Առնվազն միամտություն է ռուսական գորքերի՝ 1915 թ. հուլիսյան (20-23) նահանջը միակողմանիորեն կապել Տ. Դևոյանցի հաղորդած տեղեկությունների և հենց նրա բուն հետախուզական գործունեության և նրա կողմից թուրքական գորքի թվաքանակի մասին հաղորդած տեղեկությունների հետ<sup>1</sup>: Կ. Սասունու անհիմն մեղադրանքների կապակցությամբ Գ. Լազյանը գրում է. «Կը կարծենք, թե այս մեղադրանքները չափազանցություն են. ռուս հրամանատարութիւնը այս կամ այն զինուորական կարեւոր շարժումը՝ նահանջ կամ յառաջխաղացում՝ չի կատարեր միայն մէկ տեղեկության վրա հիմնուելով:

Կը մեղադրուին նաեւ հայ կամաւորական գունդերուն պետերը, մասնաւորապէս Անդրանիկը, որ առանց ենթարկուելու ռուս հրամանատարութեան հրամանին, օգնութեան չգնաց Տարօնի:

Չուր է հայ պատասխանատուներ փնտռել հոն, ուր ամբողջ ռազմաճակատը եւ թիկունքը ռուս հրամանատարութեան ձեռքին մէջ էին. մանաւանդ արագ յարձակողական մը դէպի Տարօն՝ կարելի էր կատարել միայն ընդհանուր հրամանատարութեան աջակցութեամբ»<sup>2</sup>:

Անշուշտ, սխալ է նաև Վ. Փափազյանը, որը, մեղմ ասած, անլուրջ պատճառաբանությամբ Տ. Դևոյանցին մեղադրում է ռուսական գորքերի նահանջի մեջ՝ կարծելով, թե գեներալ Պ. Օգանովսկին և առհասարակ ռուսական բանակի հետախուզական ծառայությունը իրենց ողջ գործելակերպը կառուցել էին՝ հենվելով միմիայն Դևոյանցի կողմից ուղղորդվող գործակալական ցանցի միջոցով ձեռք բերած տեղեկությունների վրա, վերջինիս համարելով ռուսական բանակի նահանջի պատասխանատուն և հանցավորը, ինչն էլ ըստ այդ պնդումի, իբր պատճառ դարձավ Տարոնի ջարդերի<sup>3</sup>: Դրանք փաստում էին Տարոնում գտնվող թուրքական ուժերի մասին, և ինչը գորավար Օգանովսկին Իգդիրում Ռուբենի և Վ. Փափազյանի հետ հանդիպման ժամանակ փորձել է սովորաբար և անհեթեթ «արդարացումներով» հերքել: Վերջիններս փորձել են Պ. Օգանովսկուն հավաստիացնել, որ Դևոյանցի հաղորդած տեղեկությունները ստույգ չեն. «Ըսինք արդէն թէ կանոնաւոր զօրքը փոքրաթիւ է.

---

<sup>1</sup> Տե՛ս **Ներսիսյան Ա.**, Կարո Սասունի, էջ 80:

<sup>2</sup> **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ դատը, էջ 182:

<sup>3</sup> Տե՛ս **Փափազեան Վ.**, Իմ յուշերը, հ. երկրորդ, էջ 412- 415:

Միայն թե Կելիպոլուէն եկած թիւով 5000նոց զօրաբաժինն է, որ զորք կարելի է համարել: Նորակոչներու գունդերու մէջ, տիֆլիս տարափոխիկ հիւանդութիւնը հարիւրաւորներ կը հնձէ և անդամալուծած է շարքերը, որովհետեւ բժշկական խնամք և դեղորայք կը պակսին»<sup>1</sup>: Ըստ Վ. Փափագյանի, այդ հանդիպմանը ներկա Կովկասյան 4-րդ կորպուսի շտաբի նորանշանակ պետ, ազգությամբ վրացի գեներալ Ջ. Մոլիվանին<sup>2</sup>, հակառակվելով վերը ներկայացված հաղորդմանը, ևս հաստատել էր Մանագլերտի շրջանում գտնվող կորպուսի զորամասերի աղետալի վիճակի մասին փաստերը<sup>3</sup> և Տ. Դևոյանցի կողմից ներկայացված տեղեկատվության ստույգությունը. «Մոլիվանին հեզնական և արհամարհական թոնով մը, քիթին տակէն պատասխանեց թէ՛ ոչ զինուորականներու կողմէ ստացուող տեղեկութիւնները չեն կրնար ստոյգ լինել. Պարոնները (այսինքն՝ Ռուբենը և Վ. Փափագյանը –Վ. Վ.) թերզնահատած են թշնամիի ուժերը. Անոնք նոյն իսկ շատ աւելի են, ինչ որ կը կարծուէր»<sup>4</sup>:

Այս առումով առավել ընդունելի է Հր. Միմոնյանի եզրահանգումը. «Տևոյանցի խուճապային տեղեկագիրը, իհարկե, հնարավոր է, որ որոշ դեր խաղացած լինէր, բայց այն չէր կարող դեպքերի զարգացման վճռորոշ պատճառ դառնալ»<sup>5</sup>: Այստեղից ինքնին հասկանալի է դառնում, որ Տ. Դևոյանցը ի պաշտոնէ փոքր դիրք էր զբաղեցնում, որպէսզի նրա հաղորդած տեղեկությունները և տեսակետները խորապէս հաշվի առնվէին և ընկնէին ռուսական զորքի գլխավոր շտաբի ռազմավարության հիմքում և էապէս ազդէին կամ փոխէին ռուսական մեծ քաղաքականության ընթացքը, արմատապէս ազդէին ռուսական բարձրագույն

---

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 413:

<sup>2</sup> Մոլիվանին փոխարինեց Կովկասյան 4-րդ կորպուսի շտաբի պետ, գեներալ Ֆ. Օյարինսկուն, որը թերացել էր զորքերի ղեկավարման, հետախուզություն, կապի և թիկունքի անբավարար կազմակերպման հարցում, որի համար հեռացվեց իր զբաղեցրած պաշտոնից: Մոլիվանին հուլիսի 12-ին ժամանում է Ալաշկերտ, որտեղ հանդիպում է գեներալ Տոմիլովին, որի ներկայությամբ ծանր գրույց է տեղի ունենում Մանագլերտի շրջանում կորպուսի համար ստեղծված վիճակի մասին: Տե՛ս **Корсун Н. Г.**, *Алашкертская и Хамаданская операции...*, с. 97, 101-102:

<sup>3</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 97:

<sup>4</sup> **Փափագեան Վ.**, Իմ յուշերը, հ. երկրորդ, էջ 414:

<sup>5</sup> **Միմոնյան Հր.**, Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, էջ 464:

հրամանատարության կողմից մտահղացվող ռազմական տեղաշարժերի ու գործողությունների վրա:

Այս առումով բնութագրիչ է և դիտարժան, սակայն որոշակի առումով սուբյեկտիվ ժամանակակցի՝ Ս. Վրացյանի հանրագումարային նշանակության եզրահանգումը իրադարձությունների և ռուսական զորքի մանկրումների և «անհասկանալի» նահանջի վերաբերյալ. *«Թուրքահայկական խնդիրը լուծվում էր թուրքերի ձեռքով: Թուրքահայաստան առանց հայերի՝ այս համապատասխանում էր և ռուսների հաշիվներին: Մինչ թուրքերը կլանված էին հայկական տեղահանություններով ու ջարդերով, այստեղ ռուս զորավարները կադրիլ էին խաղում թուրքական ռազմաբեմում: Մեկ քայլ առաջ, երկու քայլ ետ՝ ռուս բանակը անվերջ առաջխաղացում և նահանջ էր անում, որոնց ընթացքում իսպառ քար ու քանդ եղան և իթթիհայթական դահիճներից ազատ մնացած Ալաշկերտն ու Վասպուրականը: Դիտում կա՞ր այդ նահանջների մեջ, թե՞ նրանք իսկապես ռազմագիտական անհրաժեշտություն էին՝ միննույնը չէ՞ր հայ ժողովրդի համար: Նա գաղթում, տնաքանդ էր լինում և ամեն գաղթի հետ կորցնում էր և՛ տնտեսական ու բարոյական կորուվը, և մարդկային հավաքական կերպարանքը»<sup>1</sup>:*

Չետևաբար, բոլորովին էլ չի կարելի համակարծիք լինել նաև այն տեսակետի հետ, որ զորավար Անդրանիկը, Կ. Սատունին և ուրիշներ ռուսական զորքերի այդ հայտնի նահանջի ու իրադարձությունների զարգացման վրա ազդող վճռորոշ պատճառ են համարել Կովկասյան բանակի շտաբին կից հետախուզության աշխատակից, գեներալ Պ. Ի. Օգանովսկու գլխավորած 4-րդ կորպուսի հետախուզական բաժնի վարիչ, պրապորշչիկ Տիգրան Դևոյանցին: Առավել ևս, երբ հենց ինքը՝ Անդրանիկը, հայտնելով, որ ռուսական զորքերի դեմ իբր թե կանգնած է եղել «թուրքական 11 դիվիզիա, և որ 7 գեներալներ, յենելով այդ լուրի վրայ՝ նահանջել են»<sup>2</sup>, միաժամանակ Տ. Դևոյանցին նաև իր կողմից ներկայացվող մեղադրանքների կապակցությամբ կարծում է, որ դա կարող է լինել ցարական կառավարության հերթական դավը հայ ժողովրդի

<sup>1</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան» հրատ., 1993, էջ 12:

<sup>2</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 17 հոկտեմբերի, 1917 թ., թիվ 246:

դեմ<sup>1</sup>: Առավել ևս, որ գորավար Անդրանիկը, իր խոր վրդովմունքը և գայ-  
րույթը արտահայտելով ռուսական բանակի հրամանատարությանը՝  
անձամբ Արճեշում այդ ժամանակ գտնվող գեներալ Տրուխինին, խստո-  
րեն դատապարտում է այդ դավադիր նահանջը՝ համարելով, որ ռուսա-  
կան բանակի նահանջի որևիցե լուրջ և հիմնավոր պատճառ չի եղել.  
«Այս նահանջը կատարյալ կեղծիք մըն է... դավադրություն մը և խաղ մը  
կա... դավաճանը դուք ձեր մեջ փնտրեցեք: Դուք գիտեք, թե ինչ կեղծիք-  
ներ կկատարվեն:

Դուք գիտեք, թե ո՞վ է այդ դավաճանը, որ այս կեղծ նահանջը կկա-  
տարե:

Դուք կուզեք, որ Հայաստան առանց Հայոյ մնայ»<sup>2</sup>:

Մինևույն ժամանակ, դատապարտելով ռուսական հրամանատա-  
րությանը, գորքերի աղետալի նահանջում Անդրանիկը պատասխանա-  
տուններ և մեղավորներ փնտրելիս առանց բավարար հիմքերի տալիս է  
նաև Տիգրան Դեղյանցի անունը, որի հետ նրա հարաբերությունները  
գրեթե թշնամական էին ու հետագայում ևս դառնում են անզիջում բախ-  
ման և լարվածության պատճառ. «Պրն. Տիգրան Տեռեանց, որ Կովկասե-  
ան բանակին մեջ թրքական ուժերը լրտեսելու պաշտօնը կը կատարէր,  
տեղեկացրած էր Ընդի. Հրամանատար Օկանետովին, թէ թուրքեր 11  
տիվիժիաներով մեր վրայ կուգան: Այս տեղեկագրին համաձայն Ռուս  
բանակները կը նահանջէին առանց իրենց ետեւ իսկ նայելու:

Ընդհանուր մեծ *նահանջն էր*, որ տեղի կունենար այս ատեն: Կով-  
կասեան ճակատին 4-րդ քորբուսը որ 64,000 զինուորներէ եւ եօթը կէնէ-  
րալներէ: Կէներալ Ապացիէվ, Կէներալ Վարպանով, Ստուեանով, Կէ-  
ներալ Նազարպէկով, Կէներալ Տուրուխինին, Կէներալ Շարփանթիէվ եւ  
Կէներալ (Վան մնացող) Նիկօլաէվ, կը բաղկանար, կը փախչէին դէպի  
ետ առանց իրարմէ լուր առնելու: Չորրորդ քորբուսի Ընդի. Հրամանա-  
տար Օկանետովին երեք օրէ ի վեր էր, որ կորսուած էր եւ ոչ մէկ վաշտ  
կամ տիվիժիա իրարմէ լուր չունէր:

---

<sup>1</sup> Տե՛ս **Մինևույն Հր.**, Անդրանիկի ժամանակը, գիրք Ա., էջ 464- 465:

<sup>2</sup> Զօրավար Ադրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը 1914-  
1917, էջ 36:

Այս էր Ռուս բանակին պատկերը եւ աւելի թշուառ էր Վանի Հայ ժողովուրդին նահանջի պատմութիւնը»<sup>1</sup>: Անդրանիկի այս արտահայտության մասին գիտեր նաև Տ. Դևոյանցը. «Անդրանիկը Բերգրիի կողմէ վեճի է բռնիվ մի գեներալի հետ եւ ասել ինչու՞ փախչինք իբր թէ մեր դէմ միմիայն քայքայված 3 թրքական դիվիզիաներ կան 2 իբր թէ մեծ 8000 դիվիզիան զինուորից էր բաղկացած. IV կորպուսը 64.000 զինուոր ուներ...

Ճշտելու հետ այդ լուրը իմ քրկոտ պնդումներից յետո կորպուսի հրամանատար Օզանովսկին ուղարկեց...դէպի Նուրբեդդին գյուղը հետախուզելու 27 ձիաւոր կազակներ, 2 սպայի հետ, որոնք անցան Եփրատը եւ նրանցից ոչ մէկը ետ չվերադարձավ:

Դա ապացուցում էր այդ շրջանում խոշոր ուժերի ներկայութիւնը»<sup>2</sup>: Դևոյանցը ասվածին հավելում է հետևյալը. «Օզանովսկին շատ մտահոգուեցաւ եւ ստիպւած ճակատէն առաւ կոզակներու ձիաւոր գունդ մը եւ ուղարկեց գետի միւս ափը «կենդանի վկայ» բերելու համար: Մանազկերտէն կը տեսնէինք մեր կոզակներու եւ տաճիկներու կատաղի կռիւր. Գունդը համարեա թէ կոտորուեցաւ. Շատ քիչերը վերադարձան, բայց հետները բերին 20-ի չափ գերիներ, որոնց հարցաքննութիւնը սպայակոյտի եւ իմ կողմէն, ճշտեց թշնամիի մասին իմ ...բերած տեղեկութիւնները:

...Եւ շատ աննշան քանակութեամբ զօրք կար Մանազկերտի մէջ:

...տաճիկները, տեսնելով, որ իրենց ուժերը երեսան են հանւած,... Օխչիան գիւղի մօտ շղթայով սկսեցին անցնել Եփրատ գետը (2-3 մղոն հեռու Մանազկերտէն), թնդանօթի և գնդացիքի կատաղի կրակի տակ պահելով Մանազկերտ քաղաքը:

Ռուսերու Օխչիանի մօտ գտնուող փոքրաթիւ ուժերուն հրամայւած էր ամէն զինով պաշտպանել: Կացութիւնը խիստ փափուկ էր: Ո եւ է էլք չկար...եթէ տաճիկները կտրէին Մանազկերտ-Ախլաթ-Ատելջիվա գիծը, Մշոյ եւ Բիթլիսի ուղղութեամբ գտնուող ամբողջ ռուսական զօրքը պետք է գերի ընկնէր, եթէ արագ կերպով չնահանջէր:

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 36:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության կենտրոնական արխիվ (Բոստոն), թղթածրար, ՍՎ. 78/8, թ. 1, 5:

...4-րդ կորպուսը նահանջեց մինչև ռուսական սահմանի մօտերը:

Տասը օր շարունակ, առուն է մինչև կես գիշեր, հարցաքննած եմ այդ զորքերու բոլոր սպաները եւ չաուշները Ղարաքիլիսէի մէջ: Այդ գերիներու հարցաքննութիւնը մաթեմաթիքական ճշտութեամբ հաստատեց թշնամիի մասին իմ .. բերած բոլոր տեղեկութիւնները»<sup>1</sup>:

Հարկ է ասել, որ զորավար Անդրանիկը 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսի առաջնորդարանի մեծ դահլիճում տեղի ունեցած Հայոց ազգային համախորհրդակցության (ՀԱՀ) նիստերի օրերին կրկին անդրադառնում է 1915 թ. հուլիսին Վան-Մանազկերտ ուղղությամբ ռուսական զորքերի նահանջի պատմությանը, երբ Աբդուլ Քերիմ փաշայի զորքերի հարվածների ներքո ռուսական 4-րդ կորպուսը խուճապահար նահանջում էր<sup>2</sup>, հուլիսի 11-ից սկսած Բիթլիսից և Մուշից երկու գծով էտ քաշվելով դեպի Ալաշկերտի հովիտը՝ մինչև Մորբ և Ախլաթ: Այդ հարցի հետ կապված նա հին և վիճարկելի մեղադրանքներ է նետում Տ. Դևոյանցի հասցեին. «Ես կեղծիքի եւ դաւաճանութեան մը մէկ խաղը կը տեսնեմ այդ նահանջին մէջ. Ես չեմ կրնար համոզել ինքնզինքս, թէ մեր դէմ թրքական 11 դիվիզիաներ կային (մէկ դիվիզիան կազմուած էր 16000 զինուորներով). Հարց արեք Պր. Տիգրան Տեւոյեանցին, թէ իրա՞ւ 11 թրքական դիվիզիաներ կային մեր դէմ: (Յոյց տալով Տեւոյեանցը): Հարցուցեք այդ պարոնին, թէ ո՞վ ստիպեց կամ ի՞նչ բանի համար այդ տեղեկագիրը տուաւ 4րդ զօրաբանակի ընդի. Հրամանատար Օկանովսկիին: Ինչո՞ւ պատճառ եղաւ հարիւր հազարաւոր հայերու կեանքին: Անոնք ինկան նահանջի ճամբաներուն վրայ եւ մեռան Էջմիածնի եւ Երեւանի փողոցներուն մէջ: Հարցուցեք անոր, քանզի էտ տեղեկագրին վրայ էր, որ նահանջեցին ռուս բանակները»<sup>3</sup>: Տ. Դևոյանցը չի երկնչում մեղադրանքների տարափից և գրավոր դիմումագիր է ներկայացնում Ազգային համախորհրդակցության նիստի նախագահին՝ մեղադրանքների առնչությամբ հիմնավոր բացատրություն տալու պահանջով. «Պ. Նախագահ. որովհետև Վանի ընդհանուր նահանջի մասին

<sup>1</sup> **Դեւոյանց Տ.**, Հետախույզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 3, յունիս-սեպտեմբեր, էջ 65-66:

<sup>2</sup> Տե՛ս **Սարգսյան Ե. Ղ.**, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում. 1914-1918, էջ 216:

<sup>3</sup> Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, էջ 360:



պ. Անդրանիկի կողմից հայտարարություն եղավ, իբր թե ես սխալ տեղեկություն եմ տվել թշնամու ուժերի մասին (2-րդ դիվիզիա) և հետևաբար նահանջի պատճառը ես եմ եղել, կլինդրեի կրկին բարեհաճեիք ժողովի համաձայնությամբ թույլ տայիք ինձ, որպես բացառություն, տայի իմ բացատրությունները այդ ընդհանուր նահանջի մասին»<sup>1</sup>:

Բայց քանի որ Տ. Դևոյանցը պատգամավոր չէր, ուստի այդ հարցի շուրջ պարզություն մտցնելու իրավունքը վերջինիս կողմից տրվում է, կամ ավելի ճիշտ՝ վերապահվում է նրա դասընկեր ու զինակից Դրաստամատ Կանայանին (Դրո), որը ձեռքի տակ ունենալով նրա տրամադրած փաստաթղթերը, ըստ ամենայնի հերքում է Անդրանիկի կողմից Տ. Դևոյանցին ներկայացված մեղադրանքները՝ պնդելով, որ նա նման կեղծ տեղեկություններ չի հաղորդել, որից հետո Հայոց Ազգային համախորհրդակցությունը հարցը համարում է փակված:

Այդ առնչությամբ Դևոյանցը գրում է. «Որովհետև ես պատգամավոր չեի, խորհրդաժողովը մերժեց ինձ ձայն տալ այդ մասին բացատրություններ ներկայացնելու համար, իսկ նախագահը խոստացավ ձայն տալ ինձ հաջորդ նիստի ժամանակ, կրկին խոսք չտրվեց ինձ: Ընկ. Դրոն, ստանալով ինձանից այդ հարցի նկատմամբ իմ ունեցած փաստաթղթերը՝ հերքեց պ. Անդրանիկի ասածը, և խորհրդաժողովը հարցը համարեց փակված»<sup>2</sup>:

Տ. Դևոյանցը ցավով գրում է. «Բայց հարց է ծագում, կարելի՞ էր, արդյոք, այդպես թեթև կերպով անցնել մի խնդրի վրայից, որ դարձավ այդքան մեծ դժբախտությանց պատճառ ամբողջ գրավված վայրերի ազատված հայերի համար: Կարծում եմ՝ ոչ, նամանավանդ, եթե նկատի ունենանք ժողովրդի մեջ մինչև օրս էլ շարունակվող շշուկները, որ իբր թե այդ նահանջը եղել է նախօրոք կազմակերպված և մտածված: Կարծում եմ, որ ամենալավ ելքերից մեկը այն կլիներ, որ Ազգային խորհրդաժո-

---

<sup>1</sup> Հայոց ազգային համախորհրդակցությունը, Թիֆլիս, 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր, փաստաթղթեր ու նյութեր, պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյանի խմբագր.: («Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, թիվ 1-2, էջ 150): Տե՛ս նաև Համահայկական խորհրդակցություններ (1918-1920 թթ.), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ. Ա. Վիրաբյան և ուրիշներ, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2004, էջ 275: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. Կ - 222, ց. 1, գ. 17, թ. 68:

<sup>2</sup> «Հորիզոն». Թիֆլիս, 17. XI. 1917, № 246:

ղովը կազմեր մեկ հանձնախումբ, որին հանձներ այս նահանջի պատճառները մանրամասն կերպով քննել գեթ ապագա պատմության համար»<sup>1</sup>:

Զբավարարվելով խնդրի այդպիսի հանգուցալուծումով և իրեն մեղավոր չզգալով՝ Ս. Դևոյանցը «Հորիզոն» թերթի 1917 թ. նոյեմբերի 16-ի համարում հանդես է գալիս ծավալուն հողվածով և առաջ քաշում այն տեսակետը, որ եթե գեներալ Պ. Օգանովսկին ժամանակին ուշադրություն դարձներ հայ հետախույզների տեղեկություններին և հարկ եղած միջոցները ձեռնարկեր, ապա չէին լինի ինչպես ողբերգական նահանջը, այնպես էլ այդ օրերի հայ բնակչության կոտորածները: «Մանազկերտից առաջ շարժվելիս,- գրում է Ս. Դևոյանցը,- ամենակարևորը՝ պետք է ապահովվեր մեր գորքերի աջ թևը Մանազկերտ-Խնուս գծի վրա, որպեսզի թույլ չտրվեր թշնամուն Քյոփրիքյոյի ուղղությունից դուրս գալ մեր թիկունքը: Գեներալ Օգանովսկին և իր շտաբի նաչալնիկ, կաթվածահար, բայց Յուդենիչի<sup>2</sup> բարեկամ գեներալ Ռյաբինսկին այդ չարեցին: Նրանք մինչև անգամ Եփրատ գետի միւս ափում Կարաչաբանի ուղղությամբ չթողեցին փոքրիկ ձիավոր խուզարկու խմբեր, այլ մեկ բատալիոն հետևակ դնելով Մանազկերտի մեջ, որպես պահեստ, շարժեցին Սշոյ վրայ՝ առանց կազմակերպելու մատակարարման գործը և առաջ անցան Մանազկերտից մօտ 200 վերստ»<sup>3</sup>: Դրանից օգտվեցին թուրքերը և հակահարձակման անցնելով՝ կրակի տակ առան հարկադիր նահանջի ճանապարհը բռնած ռուսական զորքերին և գաղթականների սովալյուկ խմբերին: Հետևանքն այն է լինում, որ ռուսական բանակի գլխավոր հրամանատարությունը պաշտոնանկ է անում գեներալ Պ. Օգանովս-

---

<sup>1</sup> Նույն տեղում: Նշենք, որ, ըստ Ա. Հարությունյանի, գեներալ Պ. Օգանովսկուն Վան-Մանազկերտ նահանջի համար մեղադրական ներկայացնելը անհիմն է, չպատճառաբանված, իրականությանը չհամապատասխանող: **Հարությունյան Ա.**, Սարիղամիշի ճակատամարտի դերը Կովկասը թուրքական ներխուժման վտանգից փրկելու գործում (1914 թ. դեկտեմբեր): «Բանբեր Նայաստանի արխիվներին», 1967, № 2, էջ 102:

<sup>2</sup> **Յուդենիչ Նիկոլայ Նիկոլայի** (18 հուլիսի, 1862 - 5 հոկտեմբերի 1933) - Ցարական բանակի գեներալ: Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասյան ռազմաճակատի հրամանատար և բոլշևիզմի դեմ պայքարի ակտիվ մասնակից: Մահացել է տարագրության մեջ:

<sup>3</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 17. XI. 1917, № 246 (ճշտում. «Հորիզոնի» 17. 11. 1917 թ. համարը պետք է լինի № 246-ը, իսկ № 247-ը վերաբերում է 18. XI. 1917-ի համարին):

կուն, որը այդ օրերին ռազմաճակատ եկած Կ. Սասունու և Ռուբեն Տեր-Մինասյանի հետ հանդիպման ժամանակ, որին ներկա է եղել նաև Դևոյանցը, ինչ-ինչ նկատառումներից ելնելով, «ռուսական բանակի նահանջի» խնդրում մատնացույց է անում վերջինիս:

Այդուհանդերձ, Տիգրան Դևոյանցը պարզևատրվում է Մբ. Աննայի անվան «Քաջության համար» շքանշանով և Էրզրումը գրավելուց հետո նույն պաշտոնով տեղափոխվում է բանակի շտաբ: Այդ մասին «Հորիզոնի» 1917 թ. նոյեմբերի 17-ի համարում Դևոյանցը գրում է հետևյալը. «Այստեղ պետք է նկատի առնել մի այլ պարագայ: Ես՝ գտնելով խուզարկու գործի վարիչ պաշտօնով Մանազկերտում, ոչ մեկ կապ չունեի Վանի շրջանի ռազմեղկայի հետ, միայն թե պարտք էի համարում իմ ստացած լուրերի պատճենները յայտնել Արարատեան գնդին (Վարդանին) ի գիտություն: Իսկ ինչ վերաբերում էր իմ պաշտօնին, ես ապրելով Մանազկերտում, անկախ էի իմ պաշտօնի մեջ և ստացած լուրերը, եթե կասկածելի էին, վերապահությամբ հաղորդում էի կորպուսի շտաբին, որն ուներ իրեն խուզարկու գործերի վարիչները, որոնք ստուգում էին իմ լուրերը այլ աղբիւրներից, ապա հաղորդում գորամասերին»<sup>1</sup>:

Այնպես որ, դիմելով Համազգային խորհրդաժողովին՝ Դևոյանցը խորապես համոզված էր իր իրավացիության մեջ և վստահաբար կրկին մերժում էր ինչպես Կ. Սասունու, այնպես էլ այլոց կողմից ներկայացված մեղադրականները և առաջին հայացքից «անհերքելի ու անխոցելի ապացույցները» Վան-Մանազկերտի 1915 թ. հուլիսյան իրողությունների ժամանակահատվածում թույլ տրված շահարկումների հարցում, այդ թվում իբր թե 20.000 հազար փութ ցորենի վատնման, դրամաշորթության, կողոպուտների և սպանությունների խնդրում՝ վկայակոչելով տարբեր փաստեր և ազգային գործիչների:

Տիգրան Դևոյանցը իր թողած վկայակոչումներում, որոնք պահվում են նաև Հայաստանի ազգային արխիվի համապատասխան պահոցներում՝ ձեռագիր վիճակում, հերքում է իրեն ներկայացված մեղադրանքը իբր թե թուրքական զորքերի մասին ուռճացված տվյալներ (70 հազար զինվոր) ներկայացնելու խնդրում, ինչը ինքը երբեք ձեռքի տակ չի ունեցել, այլ ընդհակառակը, Ս. Վրացյանին, Ռ. Տեր-Մինասյանին և Վ. Փա-

---

<sup>1</sup> Նույն տեղում:

փազյանին ներկայացվել են ընդամենը 25-35 հազարի չափով տվյալներ: Ինչ վերաբերում է հայտնի նահանջի պատճառներին, Տ. Դևոյանցը այդ չարաբաստիկ նահանջի պատճառներից ամենագլխավորը համարում է հենց այն, որ գեներալ Օգանովսկին առանց ապահովելու իր կորպուսի աջ թևը, առանց պատնեշ դնելու Եփրատի մյուս ափին Մանագլեքտի մոտ (Նուրբեդդին գիղի ուղղությամբ), թողնելով Մանագլեքտի մեջ միայն մեկ գումարտակ զինվոր (600 հոգի)՝ տեղաշարժվել է դեպի Մուշ և Բիթլիս<sup>1</sup>:

Այն, որ ռուսական բանակի 1915 թ. հուլիսյան չարաբաստիկ նահանջի մեջ մեղավոր էր ոչ թե Տիգրան Դևոյանցը, այլ ռուսական բանակի ողջ բարձրագույն ղեկավարությունը, որը որոշակի ռազմավարական նպատակներով դիմել էր այս կամ այն քայլին, որոնք «դևոյանցները» չէին կարող կանխել, փաստ էր և ակնհայտ ռազմական-քաղաքական իրողություն: Պարզից էլ պարզ էր, որ ռուսական զորքը չէր կարող հենց այնպես նահանջել՝ հենվելով ընդամենը Դևոյանցի հաղորդած տեղեկությունների վրա:

Վիճելի խնդրի կապակցությամբ Տիգրան Դևոյանցի գործունեությունը քննելու համար ՀՅԴ Բյուրոն կազմում է համապատասխան հանձնախումբ, որը հետազայում արդյունքները ներկայացնում է 1919 թ. նոյեմբերին Երևանի մեջ բացված ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովի Յ. Տեր-Դավթյանի գլխավորությամբ գործող դատական ատյանին<sup>2</sup>: Մակայն 1920 թ. փետրվարի 3-ի (N° 38) նիստում արձանագրելով, որ վերջինս չի հրաժարվել ներկայանալուց, որոշվում է գտնել նրան և հրավիրել դատական ատյանի նիստին<sup>3</sup>:

Դևոյանցի գործի կապակցությամբ դատաքննության հետագա ընթացքն ավելի բուռն է լինում: ՀՅԴ IX ժողովի դատաքննական ատյանի փետրվարի 10-ի նիստում (41) մի շարք ՀՅԴ անդամներ՝ մասնավորապես Տիգրան Գավալայանը, Տիգրան Ավետիսյանը, Կարո Սասունին, Մովսես Պետրոսյանը հանդես են գալիս տարաբնույթ ամբաստանու-

---

<sup>1</sup> Տե՛ս ՆԱՍ, ֆ. Կ - 1457, ց. 2, գ. 28, թթ. 12-17 հակ.,:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 22, թթ. 1 -2, 4- 9 հակ., գ. 28, թթ. 12 -17 հակ.,:

<sup>3</sup> Տե՛ս **Հարությունյան Ավագ Ա.**, ՀՅ Դաշնակցության 1918-1920 թթ. պատմության վավերագրերը, «ՎԷՆ», 2014, Զ (ԺԲ) տարի, թիվ 1 (45), հունվար-մարտ, էջ 236:

թյուններով Դևոյանցի դեմ: Գավասյանը Տ. Դևոյանցի հասցեին նշում էր, որ «1915 թ. յունիս 23-ին, երբ ռուսական բանակի ռազմեղկան կը հասնի Մշոյ Թիլ գիւղը, նա իր ժամանակին չի տեղեկացներ Դուրան Բարձրավանդակի Կ.Լենտրոնական կօմիտեին, որպեսզի հնարաւոր լինէր միանալ ռուսական բանակին, ճիշտ այդ ատեններն էր, որ տաճկական բանակը կեդրոնացուցած էր իր ոյժերը Մշոյ քաղաքի վրայ և սկսած էր կոտորածը]: Այնուհետև Տ. Ավետիսյանը ժողովի դատական աստանին տեղեկացնելով այն մասին, որ դեռ 1915 թ. հունիս ամսին Ռոստոմի և Արամի կարգադրությամբ Մանազկերտի շրջան են ուղարկվում Կ. Սասունին, Ա. Բաբայանը և ուրիշներ՝ Դևոյանցի գործունեությունը քննելու համար, պնդում է, որ «ռազմեղկան լաւ հիմքերու վրայ չէ դրուած, որ անոր հաղորդած տեղեկութիւնները երկրի մասին թերի են», հավելելով, որ այդ մասին զեկույց է ներկայացվել Ռոստոմին և Ս. Վրացյանին<sup>1</sup>: Ավելի հեռուն է գնում Կ. Սասունին՝ կրկնելով իր հին «պնդումները» Տ. Դևոյանցի «զեղծարարությունների» մասին, որ իբր 1915 թ. հայտնի Վան-Մանազկերտի նահանջը 1) «տեղի է ունեցած Դեօյեանի սխալ կամ սուտ տուեալներուն վրայ», 2) որ կասկածներ կային, որ Դևոյանցը «այդ նահանջը սարքած է՝ ծածկելու համար այդ ժամանակի իր ըրած զեղծումները»:

Մակայն գործի ընթացքի վերլուծությունը ցույց է տալիս, որ, Դևոյանցին ամբաստանողներից ոչ մեկը չի բերում հիմնավոր ապացույցներ, որոնք բավարար լինեին IX ժողովի դատաստանական աստանի տվյալ նիստում անվերապահ վճիռ կայացնելու համար: Հատկանշական է, որ դատաքննական աստանին ներկայացած Տ. Դևոյանցը անառարկելի մանրամասն բացատրություններ է տալիս իրեն ներկայացված ամբաստանությունների կապակցությամբ, որից հետո, ըստ երևույթին անբավարար գտնելով ներկայացված փաստերը, Դևոյանցից պահանջվում է գրավոր ներկայացնել իր հիմնավորումները և այն դեպքում դատաքննական աստանի տրամադրության տակ՝ մինչև հարցի վերջնական հանգուցալուծումը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Վեմ», 2014, Զ (ԺԲ) տարի, թիվ 1 (45), հունվար-մարտ, էջ 238-239:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 238-239:

Մակայն ՀՅԴ IX ընդհանուր ժողովի 1920 թ. փետրվարի 12-ի (№ 43) նիստում ևս հնարավոր չի լինում հստակություն մտցնել Տ. Դևոյանցի գործում, և որոշվում է ցուցմունքներ ստանալ նաև ոչ միայն Կ. Մասունուց, այլև Ն. Աղբալյանից, Գ. Ղազարյանից, Վ. Փափազյանից, Ա. Շարաֆյանից, Ռուբենից, կապիտան Հակոբյանից, պորուչիկ Դավթյանից: ՀՅԴ IX ընդհանուր ժողովի ստեղծած դատական աստյանի 1920 թ. փետրվարի 15-ի (№ 46) նիստում Դևոյանցի գործի կապակցությամբ լսվում են Ա. Շարաֆյանի և Ռուբեն Տեր-Մինասյանի ցուցմունքները: Ա. Շարաֆյանը<sup>1</sup>, Դևոյանցին համարելով չափազանց «փառասեր», պնդում է, որ վերջինս «իրողութիւնները չափազանցնել սիրող մի մարդ է...որ երբեք գաղտնապահ չէ», որ Դևոյանցի հայտնած տեղեկությունների հետևանքով, թե թուրքական մեծ զորքեր կգան, խուճապ սկսվեց, որին հետևեց ռուսական ուժերի նահանջը. «Ռուսներ առանց դիմադրելու սկսան նահանջել: Մեր ամբողջ ջանքը եղաւ Մանազկերտի մէջ գտնուած հայութիւնը փոխադրել դէպի Բզղիբ: Դևոեան զորքէն շատ առաջ փախած էր արդեն: Զօրքին հետ միասին սկսանք փոխադրել Մանազկերտի ժողովուրդը: Այդ ատեն Ղարաքիլիսէէն մի հեռագիր ստացանք Օկանովցկիէն, թէ խորհրդակցելով Դևոեանին հետ՝ կը հրահանգենք ժողովուրդը փոխադրել Ապարան»<sup>2</sup>: Դատական Աստյանի այդ նույն նիստին Դևոյանցի հասցեին նմանատիպ մեղադրանքներով է հանդես գալիս Ռուբեն Տեր-Մինասյանը. «Յայտնեցի Օկանոսկիին, թէ այն տարաձայնութիւնը կա, որ դուք նահանջեցիք, որպէսզի հայերը կոտորուեն: Մեր այն հարցումին, թէ ինչու՞ Դևոեան թրքական ուժերը (40000 հազար) պիտի չափազանցներ, Ռուբէն հետևեալ կերպով պատասխանեց. նախ ռուսներ կուզէին ունէ առիթ գտնել հայերը կոտորելու համար. երկրորդ, եթէ թուրքական քիչ ոյժեր ցոյց տրուէին՝ ռուսներ ատոնց վրայ յարձակելով պատիւի բարձրացում չէին ունենար, այդ պատճառով Դևոեան կրնար աւելի ցոյց տուած ըլլալ, որ ռուսներ յարձակման դիմէին, միւս կողմէն՝ ռուսներ կը մտածէին եղեր, որ հայերը կրնան միշտ յարձակուող զօրքի

---

<sup>1</sup> Ալեքսանդր Շարաֆյան – 1919 թ. Ալեքսանդրապոլի պարենավորման կոմիտեի նախագահ և քաղաքային վարչության անդամ:

<sup>2</sup> «ՎԷՄ», 2014, Զ (ԺԲ} տարի, թիվ 2 (46), ապրիլ-յունիս, էջ 239:

թիւը պակաս ցոյց տալ, որ ռուսներ առաջանան»<sup>1</sup>: Ռուբենի պնդումը, կարծում ենք, չի փայլում խորամտությամբ, դրանում ակնհայտ երևում են Դեոյանցին ներկայացված մեղադրանքի թույլ հիմքերը: Այն միակողմանի է և զգացմունքային:

Իսկ ՀՅԴ IX ընդհանուր ժողովի 1920 թ. փետրվարի 16-ի (№ 47) նիստում կուսակցական դատական ատյանը Դեոյանցի գործի կապակցությամբ լսում է Վ. Փափազյանի ցուցմունքները, ըստ որի՝ Դեոյանցը «չափազանցուած լուրեր է տուեր»՝ վկայակոչելով գեներալ Պ. Օգանովսկուն, որն իբր «այդ ըսաւ», որի մասին լսելով՝ ինքը խիստ բարկացել է Դեոյանցի վրա, որը Օգանովսկուն տեղեկացրել էր, թե «այսքան թուրքական զօրաբաժին կար, առանց նկատի ունենալու, որ այդ զօրաբաժինները անուանական էին և սովորական զօրաբաժիններու թիւէն շատ պակաս զօրք ունէին, որ Դևօեան թեթևամտութեամբ գործած է»<sup>2</sup>:

Սակայն ընդհանուր ժողովի դատաստանական ատյանի 1920 թ. փետրվարի 20-ի (№ 51) նիստում Դեոյանցի գործի առթիվ ցուցմունքներ է տալիս Դեոյանցի անմիջական զինակից Խեչո Մուրադյանը, որը փաստում է, որ Վան-Մանազկերտի հայտնի իրադարձությունների ժամանակ ինքը Սասունում եղել է Դեոյանցի զինակիցը և հանձնակատարը, ինչպես նաև նամակատարը, և բաբշենցի Ղազարի ու բուլանըզցի Գրիգորի հետ կատարել են Դեոյանցի հանձնարարությունները: Դրա հետ մեկտեղ՝ Խեչոն հայտնում է, որ Դեոյանցը իրեն և իր ընկերներին հանձնարարել էր հավաքել թուրքերի և հայերի լքած գյուղերում մնացած ցորենը՝ կազմում հարյուրավոր սայլեր՝ ամեն մի փութի համար սայլապաններին վճարելով 1-2 մանեթ, հերքելով նաև այն լուրերը, թե Դեոյանցը թուրք և քուրդ ուղեկցողներ է ունեցել, ինչի հակառակն էր պնդել նախորդ նիստերին Դեոյանցի անմիջական գործողությունների ժամանակ այդ պահին հեռու գտնվող Կ. Սասունին՝ մեղադրելով ալան-թալանի, կաշառքի, փողահավաքի և այլնի մեջ, անգամ Դեոյանցին մեղադրելով թուրքերից փող հավաքելու մեջ<sup>3</sup>, ինչն անհասկանալի է:

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 232:

<sup>2</sup> Նույն տեղում, 2014, Զ (ԺԲ) տարի, թիվ 2 (46), ապրիլ-հունիս, էջ 233-234:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 239-240:

Հետաքրքրություն է ներկայացնում ՀՅԴ դատաքննչական ատյանի 1920 թ. մարտի 22-ի (№ 63) նիստը, որում արդեն Տ. Դևոյանցը, ըստ երևույթին որոշակի վստահություն ունենալով իր իրավացիության մեջ, դատական ատյանին խնդրագիր է ներկայացնում, որպեսզի իր հարցի մասին շուտափույթ եզրակացություն կայացվի, ուստի առաջարկվում է հաջորդ նիստին հրավիրել Կարո Մասունուն, որպեսզի նա Դևոյանցի մասին արած ամբաստանությունների առթիվ բացատրություններ տա<sup>1</sup>:

ՀՅԴ IX ընդհանուր ժողովի դատաքննչական ատյանի 1920 թ. մարտի 24-ի (№ 64) նիստում դարձյալ լսվում է Դևոյանցի գործը, որի կապակցությամբ ցուցմունքներ է տալիս Միմոն Վրացյանը, որի տեսակետը էապես տարբերվում էր Կ. Մասունու և այլոց կարծիքներից, և ավելի հավասարակշռված էր: Ս. Վրացյանը դատական ատյանին հայտնում է, որ իրեն «անձնապես միայն հայտնի է, որ Դևոեան տեղեկություններ կուտար նաև կամավորական բանակին [ինչը կատարվում էր նաև ՀՀ կառավարության մակարդակով, քանզի Հայաստանը այդ վերջինից զենք ու զինամթերքի, զինվորական հանդերձանքի և այլնի աջակցություն էր ստանում, որի կարիքն այդքան ուներ – Վ. Վ.], անձնապես հայտնի էր նաև, որ նա [Տ. Դևոյանցը – Վ. Վ.] կամավորական բանակի մասին կուտար տեղեկություններ մեզ: Ես զիտեի, որ նա հետախուզական բաժնի վարիչն էր և իր գործը յառաջ կը տաներ այդ ուղղությամբ: Ես հիմք չունեմ մտածելու, որ նա դիտաւորեալ կերպով նահանջ սարքած է իր զեղծումները ծածկելու համար»<sup>2</sup>:

Ի վերջո, ՀՅԴ IX ընդհանուր ժողովի ՀՅԴ դատական ատյանի 1920 թ. ապրիլի 24-ի (№ 68) նիստում Դևոյանցի մասին ցուցմունքով հանդես է գալիս Առաջին հանրապետության օրոք Դևոյանցի հետախուզական ծառայության գծով անմիջական զինակից և գաղափարակիր, ՀՀ զորահավաքի գլխավոր կազմակերպիչներից մեկը, այնուհետև ՀՀ բանակի գլխավոր շտաբին առընթեր հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետ Վահագն Գալուստի Մուրադյանը՝ նշելով Կ. Պուսում Տ. Դևոյանցի հետախուզական հենակետի և ծավալած գործունեության մասին, նաև այն, որ իրենք այդ ժամանակ տեղեկություններ էին

<sup>1</sup> Նույն տեղում, Զ (ԺԲ) տարի, 2014, թիվ 3 (47), հուլիս-սեպտեմբեր, էջ 210:

<sup>2</sup> Նույն տեղում, թիվ 4 (48), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 240-241:



ստանում ոչ միայն Կ. Պոլսից, որտեղ գործում էր Տ. Դևոյանցը, այլև Ադրբեջանի և Թիֆլիսի գործակալական ցանցից: Նա փաստում էր հետևյալը. «Ատկե զատ ես կուզեի, որ Տիգրանը որպես բազմեղկայի գործէն լավ հասկացող մը, այստեղ» [Կ. Պոլսում, որտեղ Տ. Դևոյանցի կողմից հետախուզական գործը դրված էր բարվոք հիմքերի վրա, և Հայաստան էր առաքվում կարևոր տեղեկատվություն, որը ոչ հետախույզների մեղքով անտեսվեց կամ անուշադրության մատնվեց, որտեղ մեծ դեր խաղաց Հայաստանի արևմտյան կամ այսպես կոչված սերյան մտասնեռումը<sup>1</sup>] մնար շարունակ<sup>2</sup>: Կապիտան Վ. Մուրադյանը ցուցմունքներով հանդես է գալիս նաև 1920 թ. ապրիլի 4-ի (№ 69) նիստում անդրադարձնալով Հայաստանում հետախուզական գործի կազմակերպման դրվածքին, այդ թվում թերություններին, ոչ մի էական հավելում չի կատարում ասվածին<sup>3</sup>:

ՀՅԴ IX ընդհանուր ժողովի դատական ատյանի 1920 թ. ապրիլի 8-ի (№ 72) նիստում կրկին, արդեն որերորդ անգամ, ցուցմունքներով հանդես է գալիս Կ. Սասունին, չնայած նախորդ և շատ այլ նիստերում էլ քննվել էր նրա գործը՝ Մուշ-Խնուսի շրջանում ծավալած գործունեության և հնարավոր ֆինանսական-դրամային զեղծումների մասին: Դատական ատյանի այս նիստում Կ. Սասունին կրկին մեղադրանքներ է ներկայացնում Տ. Դևոյանցի հասցեին՝ Վան-Մանազկերտի շրջանում ցորենի զնման և հավաքման գործում թույլ տված զեղծումների հետ կապված, թուրքերի և քրդերի հետ ունեցած հարաբերությունների և այլնի մասին: Սակայն ամենամեծ և անընդունելի, իսկ գործնականում նաև անապացուցելի մեղադրանքը Կ. Սասունին ներկայացնում էր Վան-Մանազկերտի հանրահայտ և չարաբաստիկ նահանջի առիթով. «Թե նահանջը Դեռեանի սխալ ցուցմունքներում վրա տեղի ունեցած էր՝ այդ մասին կը վկայեն Բիրոսն, Ռուբէնը, Փափագեանը: Նահանջէն առաջ, երբ մենք շարունակ կըսեինք, թէ թուրքերու թիւը պակաս պէտք է ցոյց

---

<sup>1</sup> Տե՛ս **Վիքարյան Վ.**, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 226-238 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս մանրամասն «Վէմ», 2014, Զ (ԺԲ} տարի, թիվ 4 (48), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 249:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 249-250:

տալ ռուսներուն՝ Դևոեան մեզ չէր լսեր [կարծես թե ռուսական բանակի հրամանատարությունը և հետախուզական մարմինները իրենց հաշվարկները և մեծ գորքերի տեղաշարժերի ապահովությունը պետք է կառուցեին Տ. Դևոյանցի կողմից ներկայացված հետախուզական տվյալների վրա, առանց պարզելու, կեղծ են դրանք, թե՞ ոչ, և բազմաթիվ այլ հարցականներ կային, որոնց մասին արդեն մասամբ ասել ենք – Վ. Վ.]»։ Եվ վերջում ինքն իրեն հակասելով՝ հետևյալն է պնդում. «Նա ոչ մի տեղեկություն չէ տուած իր կողմէ, չէ ըսած և թէ նահանջի ժամանակ ինչ պետք է ընեն, միայն անոնց դրութեան, զինուորական վիճակի մասին հարցումներ ըրած է իր բազմեղկայի գործը աւելի լաւ կազմակերպելու համար»<sup>1</sup>։ Դատելով հաջորդ՝ դատական ատյանի 1920 թ. ապրիլի 17-ի (№ 73) նիստի արձանագրության, Տ. Դևոյանցի խնդրում արդեն կատարյալ խանաչփոթ էր իշխում, ներկայացված փաստերն էլ տառապում էին հակասականությամբ ու անորոշությամբ, և ըստ երևույթին հենց այդ պատճառով էլ, նիստը ըստ էության ոչ մի եզրակացության չհանգեց<sup>2</sup>։

Այսպես, ՀՅԴ կուսակցական դատական ատյանը քննարկում է տվյալ գործը, սակայն այն անավարտ է մնում, ըստ երևույթին նաև ներկայացված փաստարկների կիսատ-պռատության, անորոշության և ոչ ապացուցելի հիմքերի պատճառով<sup>3</sup>։

Հատկանշական է, որ ժամանակակիցներից ոչ բոլորն են համամիտ Տ. Դևոյանցին ներկայացված մեղադրանքներին։ Այդ խնդրի կապակցությամբ իր բացատրություններն է տալիս Ս. Վրացյանը. «Հետագային Տ. Դեվոյեանի անունը շատ է քաշքշւել, մանաւանդ Անդրանիկը եւ Տարօնիի գործիչները նրա հասցէին խիստ ծանր ամբաստանութիւններ էին արել։ Նրան մեղադրում էին, որ, իբր թէ, բարեխղճութեամբ չի կատարել իր պաշտօնը, որ թշնամիի ուժերի քանակի մասին չափազանցած տեղեկութիւններ է տւել ռուս հրամանատարութեան եւ դրանով նահանջի պատճառ դարձել։ Դժար է ասել՝ որքան հիմնաւոր են

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 251-252։

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 253։

<sup>3</sup> Տե՛ս **Դեյվեանց Տ.**, Հետախուզիչի մը յուշերը, «ՎԷՍ», 1938, յունւար-մայիս, թիւ 2, էջ 48-55, թիվ 3, յունիս-սեպտեմբեր, էջ 58-73։

այդ մեղադրանքները»<sup>1</sup>: Մեկ այլ առումով Ս. Վրացյանը պարզապես գրում է. «Դեռյեանցը մեր Երևանի ընկերներից էր: Իբրև տարագիր, ապրել էր Թուրքիայում, ուր լայն ծանոթություններ ուներ: Այժմ սպայ էր, 4-րդ կորպուսի հետախուզական մասի վարիչ: Ճարպիկ եւ բանգետ երիտասարդ էր: Արագ լուրեր էր հայթայթում թշնամու ուժերի, ծրագիրների եւ գործողությունների մասին, որոնց շուրջ երբեմն կասկածներ ու վեճեր էին ծագում: Հակառակ որ ինքը վճռական հերքումներ է հրատարակել, մինչեւ այժմ էլ նրան մեղադրում են, որ անճիշդ տեղեկություններով թրքական ուժերի եւ գործողությունների մասին՝ պատճառ է եղել Տարօնի շրջանի հայութեան բնաջնջման: Ես անձնապես փաստ չունեմ նրան մեղադրելու այդ ուղղութեամբ»<sup>2</sup>: Դրա հետ մեկտեղ՝ Վրացյանը վկայում էր ռուսական գորքերի անսպասելի և անհիմն նահանջի հետ կապված ռուս զինվորության արտահայտած դժգոհությունների մասին. «Թե՛ ճանապարհին, և թե՛ ամեն տեղ, ուր առիթ էի ունենում շփուել ռուս զինուորականների հետ, բոլորից լսում էի միևնույն գանգատը... հրամանատարությունը ապիկար է: Վերին իշխանությունը ապիկար է: ...Այս ձեռով պատերազմը կարելի չէ վարել»<sup>3</sup>:

Հարցի առնչությամբ սպառիչ պարզաբանումներ է տալիս Ս. Դևոյանցը՝ բերելով հիմնավոր և համոզիչ հակափաստարկներ. «Ես... ուղարկված էի բանակի հետախուզական բաժանմունքի պետ Դրացենկոյի, Ազգ. եւ Հ.Յ.Դ. Բիւրօներու կողմէն Մանազկերտ՝ կապելու Մշոյ եւ Սասնոյ ուժերուն հետ, զիտակ պահելու գանոնք կատարած շարժումներուն եւ անոնցմէ ստացած տեղեկությունները հաղորդելու յիշեալ մարմիններուն եւ Դրացենկոյին: Այդ չէր նշանակեր «լռելեայն կը հասկցեր, որ Ս. Դ. ամէն ջանք պիտ թափէր, որ ռուսական բանակը տրամադրուէր յառաջ խաղալու»: Ո՞վ էի ես, ի՞նչ իրաւունքներ ունէի ձեռքս, որո՞ւ հետ կը տեսնէի Մանազկերտի մէջ – յառաջապահ բանակի սպաներու հետ միայն: Եթէ ես զօրք ունենայի, կամ իրաւունք, վստահ եղէք, ձեռքէս եղածը կընէի բանակը յառաջ շարժելու համար, բայց ձեռքիս ոչ մէկ իրաւունք չկար: Մի մոռացէք, որ նոր էի սպայ եղած եւ նոր եկած

<sup>1</sup> Վրացեան Ս., Վ. Փափագեանի յուշերի առթիւ, «ՎԷՄ», Բոստոն, 1936, թիւ 1, էջ 82:

<sup>2</sup> Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ. հ. Գ., էջ 96-97:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 94:

Մանազկերտ, ուր մնացի ընդամենը երկու եւ կէս ամիս: Բանակը «առաջ խաղցնելու» պարտականութիւնը Կ. Մասունիներուն էր վերապահւած, թիկունքի գործիչներուն, ես միայն մէկ պարտականութիւն ունէի՝ ստացած լուրերս տեղեկագրել ուր հարկն է, մնացեալը կը մնար Ազգային եւ Ն. Յ. Դ. Բիւրօներուն, որոնք շատ աւելի լաւ կապեր ունէին կեդրոնի սպայակոյտի հետ, քան թէ ես: Անոնք է, որ պետք է ստացուած լուրերը ոչ թէ կարդային, որպէս լրագրական լուրեր, այլ կեդրոնի սպայակոյտի միջոցով օգտագործէին, որ «բանակը տրամադրուէր առաջ խաղալու»<sup>1</sup>:

Իսկ ահա թէ ինչ է գրում Հովհ. Քաջագունին. «Ռուսների ընթացքը (նահանջը - Վ. Վ.) բացատրելու համար բնաւ անհրաժեշտ չէր ենթադրել, թէ նրանք ծրագիր ու դիտավորութիւն են ունեցել մեզ կոտորելու, այլ բաւական էր միայն ենթադրել, թէ նրանք չեն ունեցել նպատակ փրկել թուրքահայութիւնը ինչ գնով էլ լինի: Իսկ այդպիսի նպատակ նրանք, իհարկէ, չեն ունեցել, մենք ենք եղել, որ վերագրել ենք նրանց մեր ցանկութիւնները, եւ երբ իրականացրած չենք տեսել այն՝ դաւադրութիւն ենք որոնել»<sup>2</sup>: Կարծում ենք՝ սրանով ամեն ինչ ասված է, քանզի ակնհայտ է, որ եթէ ռուսները կարողանային իրադարձությունների զարգացման այլ ռազմավարություն զարգացնել, նրանք դա, անկասկած, կանէին, և դրանում հայ բնակչությունը խոչընդոտի կամ ավելորդ «բալաստի» դերում չէր լինի, առավել ևս, երբ նրանք լիովին համոզված էին հայերի հավատարմության խնդրում՝ գտնելով նաև, որ հայ բնակչության պահպանումը տվյալ տարածքում անհետաձգելի և էապէս անհրաժեշտ խնդիր է:

Տ. Դևոյանցի եզրակացությունները ևս հիմնավոր են. «Մանազկերտի նահանջէն յետոյ ես այլեւս ո եւ է յանձնարարութիւն չունէի Ազգ. եւ Դաշն. Բիւրօներէն եւ անցայ 4-րդ կորպուսի սպայակոյտի մէջ: Եթէ այդպիսի սխալ արած լինէի, վստահ եղէք, որ ոչ թէ միայն զիս չէին պահեր որպէս հետախոյզ, այլ դատի կուտային կամ կը վճռուէին հետախուզական բաժանմունքէն: Ընդհակառակը, վերջը՝ Էրզրումը գրաւել է երեք

---

<sup>1</sup> **Ղեյդեանց Տ.**, Հետախոյզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 3, յունիս-սեպտեմբեր, էջ 69-70:

<sup>2</sup> **Քաջագունի Յովհ.**, Ն. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, էջ 9:

ամիս առաջ, ինձ յանձնեցին միաժամանակ Էրզրումի հետախուզութիւնը եւ աստիճանաբար եւ բարձրացայ մինչև Կովկասի ճակատի հակահետախուզական բաժանմունքի պետի պաշտօնը»<sup>1</sup>: Տ. Դևոյանցը, որը միակ հայ սպան էր ռուսական հետախուզական ծառայության մեջ, և պատերազմի առաջին իսկ օրից մինչև վերջին օրը գտնվում էր այդ համակարգում, պնդում էր, որ ռուսական բանակի նահանջը պայմանավորված է եղել զուտ ռազմավարական նպատակով՝ անհրաժեշտաբար, իսկ ինքը դրա հետ որևիցե առնչություն չուներ. «Ռուսական բանակի բոլոր նահանջները Կովկասեան ճակատի վրայ տեղի են ունեցել ռազմագիտական նպատակով եւ եղած են ռազմագիտական անհրաժեշտութեան»<sup>2</sup>:

Ամեն դեպքում տեղին է նաև նշել, որ ինքը՝ Դևոյանցը շատ հասկանալի պատճառներով կարող էր ամենևին էլ լիակատար տեղեկացված չլինել ռուսական զորքի ողջ անց ու դարձից, ինչը իրադարձությունների հետևանքների գնահատման տեսանկյունից ամենևին էլ նրան չի կարող դարձնել գլխավոր պատասխանատուն, առավել ևս՝ մեղադրյալը:

Դատելով մի շարք փաստերի համադրված վերլուծությունից՝ Դևոյանցը ամենևին էլ նպատակ չի հետապնդում արդարացնել ցարական կառավարության բոլոր գործողությունները, չնկատել ստվերոտ կողմերը: Դևոյանցը ցարական կառավարության մեղակցությունը տեսնում էր իր այն գաղտնի հրահանգի մեջ, համաձայն որի՝ հեղափոխությունից հետո Եփրատի ափերի վրա պետք է հիմնվեին ռուս կազակների գաղութներ: Դևոյանցը իր հուշերում պնդում է, որ ինքը այդ հրահանգի պատճենը հանձնել է Պետական դումայի անդամ Պապաջանյանին, որ նա այդ մասին հարցապնդում է արել Դումայի ամբիոնից: Նա դատապարտում էր միապետական կառավարության հայակեր քաղաքականությունը և մեղադրականներ հնչեցնում զորավարներ Աբաղիևի, Լաս-

---

<sup>1</sup> Դեյեանց Տ., Հետախուզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, թիւ 3, յունիս-սեպտեմբեր, էջ 72:

<sup>2</sup> Դեյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1944, թիւ 5 (244), սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 86-87:

տոչկինի, Կալեդինի, գնդապետ Յալիկովի, հյուպատոս Գադժեմուկովի հասցեին, որոնք իրենց վարվելակերպով նպաստում էին թշնամուն<sup>1</sup>:

Մակայն Դևոյանցը ռուսական բանակի գործողությունների գնահատման խնդրում չափավոր է՝ փորձելով տալ իրերի օբյեկտիվ պատկերը:

Դևոյանցը ռուսական բանակի նահանջի պատճառներից մեկն էլ համարում էր Կովկասյան ճակատի ստորադասումը Եվրոպական-արևմտյան ճակատին, գորուծի անհամաչափ բաշխումը ճակատներում, ինչպես նաև պարենավորման, փոխադրական միջոցների պակասությունը, բարվոք ճանապարհների բացակայությունը և ավելի շատ՝ պահեստային ուժի հանգամանքը: Այս առումով ուշադրության է արժանի Դևոյանցի ևս մեկ դիտարկում. «Ռազմագիտական նահանջները Կովկասեան ճակատի վրայ այն ժամանակ պետք է բացատրել պարզապես պահեստի ուժի պակասով: Օրինակ, Մանազկերտի ճակատից ամբողջ IV կորպուսը յառաջանում էր Բիթլիսի եւ Մշոյ ուղղութեամբ եւ անցել էր ամէն մէկ թեւի վրայ 100 մղոնից աւելի, առանց ունենալու որեւէ պահեստի ուժ՝ թեւերը պաշտպանելու համար: Եւ երբ Քեօփրի-Քէօյի ճակատից IX տաճկական կօլօրդուն սկսեց իր յարձակումները Դուգնուզի գծից Օխչեան գիւղի վրայով Մանազկերտի վրայ, IV կորպուսը, որ Մանազկերտի մէջ ունէր 4-6 թնդանօթ միայն, ստիպուած եղաւ նահանջել: Եթէ IV կորպուսը Մանազկերտի մէջ ունենար պահեստի ուժ, չէր նահանջի եւ կը դիմադրէր: Վերականգնեցնելու համար IV կորպուսի նախկին դիրքը ռուսական ընդհանուր սպայակոյտը ստիպուած եղաւ Սարիղամիշի ճակատից վերցնել Քեօփրի-Քէօյի դիմաց գտնուող զօրքերը, Կլիճ Գեսաուկի վրայով կտրել յառաջացած թուրք զօրքերի թիկունքը ու վերագրաւել Մանազկերտը»<sup>2</sup>:

Գործնականում փաստ է, որ գեներալ Օգանովսկու գլխավորած Կովկասյան 4-րդ կորպուսը նահանջի դիմեց Աբդուլ Քերիմ փաշայի խմբավորման գերազանցող ռազմուծի ճնշման տակ, որին էապես նպաստեցին ռուս գեներալների ապաշնորհությունը, գորաշարժերի վատ կազմակերպումն ու ղեկավարումը և այլն: Անգամ Օգանովսկուն մի առի-

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 85:

<sup>2</sup> Նույն տեղում:

թով Դեոյանցը խնայում է՝ փորձելով նրա գլխավորած IV կորպուսի նահանջի ավելի հիմնավոր գործոններ և պատճառներ գտնել. «Մեր 4-6 թնդանօթները անդադար կրակում էին Մանազկերտից՝ խանգարելու համար այդ գորքերին անցնել Եփրատը: Տաճիկների ծրագիրն էր կտրել Մանազկերտ-Ադիջելվազ-Ախլատ գիծը եւ գերի վերցնել յառաջացած ռուսական ամբողջ Չորրորդ կորպուսը»<sup>1</sup>:

Ուղղակի փաստ է, որ ռուսական զորքերի նահանջը պահի անխուսափելի իրողությունը դարձավ, և հայությունն ընկավ դրա անկասելի և ծանր հարվածների տակ: Այլ բան է ասել, որ մենք կուզենայինք ցանկալին իրողություն ընդունել. ենթադրենք, որ ռուսական պետությունը իր ռազմավարական շահերը և մանևրումները համապատասխանեցներ հայկական ձգտումների, իդձերի և զգացումների հետ, ինչն անհրապականի ոլորտից է: Հենց այս առումով կարելի է համաձայնվել գեներալ Թ. Նազարբեկյանի հետ, որ ռուսական զորքերի այդ կասկածելի և դատապարտելի, Տարոնի համար հայաջինջ նահանջը «ռազմական մի խաղի»<sup>2</sup> էր նման, որը բխում էր ռուսական պետության քողարկված և հեռահար աշխարհաքաղաքական շահերից: Անհամեմատ ավելի սառը և չոր դատողության ենք հանդիպում գեներալ Գաբրիել Ղորղանյանի մոտ, որը, արձանագրելով ռուսական բանակի հանրահայտ նահանջի փաստը, գրում է հետևյալը. «Բայց արդեն հուլիսի 17-ին իրադրությունը փոխվեց:

Զգալի համալրումներ ստանալով, թուրքերը հուլիսի 15-ին հակահարձակման անցան 4-րդ կորպուսի ճակատում:

Ռուսական կորպուսը, հարկադրված էր անցնել պաշտպանության այն ժամանակ, երբ գեներալ Տրուխինի խումբը հուլիսի 17-ին հրաման ստացավ նահանջել Սորբից դեպի հարավ-արևմուտք ընկած նոր դիրքեր:

Հակառակորդի կողմից Մանազկերտի գրավումը նրա համար ամենակարճ ճանապարհն էր բացում դեպի Ալաշկերտի հովիտը, տարանջատելով 4-րդ կորպուսի զորամասերը և սպառնալով Անդրկովկասին: Բանակային հրամանատարությունը հարկադրված էր հրաման տալ Վանը թողնելու և դեպի լճի հյուսիսային ափով նահանջող 4-րդ կոր-

<sup>1</sup> Նույն տեղում, 1943, թիւ 5 (238), սեպտեմբեր- հոկտեմբեր, էջ 59:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ. – 45, ց. 1, գ. 5, թ. 25:

պուսի գորամասերին՝ Բերկրի-Կալայով և Թափարեզի լեռնանցքով կենտրոնանալու Ալաշկերտի հովտում»<sup>1</sup>: Այսինքն, ասվածից ակնհայտ է դառնում, որ զուր էր սայթաքումների և անհաջողությունների պատճառները որոնել ռուսական բանակի հետախուզական համակարգում համեստ պաշտոն ունեցող, այն էլ պրապորշչիկ Ս. Դևոյանցի գործողություններում, այլ ուղղակի ռուսական բարձրագույն հրամանատարության և առհասարակ ռուսական պետության ռազմավարական գործողությունների խորքային և մթին ծայքերում էր հարկավոր տեսնել այդ ամենի պատճառները: Համանման տեսակետի ենք հանդիպում Հ. Միմոնյանի մոտ. «Ձորքերին տրված նահանջի հրամանը ռուսական բանակի հրամանատարությունը հետագայում պատճառաբանում էր նրանով, որ իբր թուրքերը զինվորական մեծ ուժերով բռնուցք էին ստեղծել և պատրաստվում էին վճռական հակահարձակման»<sup>2</sup>: Այս բոլորը առ այսօր հարցականներին վերջ չի դրել, շատ բան ավելի խճճված է և դեռ պատմաբաններին հարկ է պարզաբանել բոլոր անհայտները և հստակություն մտցնել հետազոտվող հիմնախնդրում, սակայն ամեն դեպքում մի բան ակնհայտ է. այդ հարցում Դևոյանցի մեղավորությունը չի հիմնավորվում որևիցե լուրջ և հավաստի փաստով:

Ռ. Սահակյանի Առաջին աշխարհամարտի իրադարձություններին և հայերի մասնակցությանը նվիրված արժեքավոր մենագրության էջերում կան վերն ասվածը հաստատող կարևոր և աներկբա փաստեր և եզրահանգումներ: Այսպես, հենվելով որոշակի փաստական բազայի վրա, նա ևս հաստատագրում է Ս. Դևոյանցի անմեղությունը 1915 թ. Վան-Մանազկերտի ռուսական զորքերի նահանջի հարցում. «Ս. Դևոյանի ամբաստանության «հեղինակը» Պ. Օգանովսկին էր: Նա Վ. Փափազյանի և Ռ. Տեր-Մինասյանի հետ հանդիպման ժամանակ իբր կատակով «մեղադրել» է Դևոյանին, որից հետո նշված փաստը տարածվել էր, որ Դևոյանն է եղել այդ նահանջի պատճառը: **Հետագայում, այդ տեղեկությունը չհաստատվեց և բազմիցս հերքվեց:** Առավել հիմնավոր

---

<sup>1</sup> Корганов Г., Участие армян в мировой войне на Кавказском фронте (1914-1918), стр. 14-15:

<sup>2</sup> Միմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, էջ 464:



հերքումը կատարվում է Դրոյի կողմից»<sup>1</sup>: Ռ. Մահակյանը այնուհետև հոգուտ Տ. Դևոյանցի վկայակոչում է Հ. Քահանա Մառիկյանին և գալիս ամփոփիչ եզրահանգման. «Ինքնին հասկանալի է, որ հետախուզական բաժանմունքի ոչ պատասխանատու աշխատակցի նույնիսկ նման գեկուցագիրը չէր կարող հիմք հանդիսանալ մի ամբողջ կորպուսի նահանջի համար: Այդ ինչպե՞ս պատահեց, որ նույն կորպուսի հրամանատար Պ. Օգանովսկին Մարիդամիշի ճակատամարտի նման ճակատագրական և բեկումնային նշանակություն ունեցող օպերացիայի ժամանակ չենթարկվեց տվյալ պահին Կովկասյան բանակի փաստական հրամանատար գեներալ Ա. Գ. Միշլանսկու հրամանին և չնահանջեց, իսկ 1915 թ. հուլիսին հետախուզական բաժանմունքի աշխատակցի գեկույցը «բավական» եղավ, որպեսզի նա նահանջի հրաման տա: Հարկ ենք համարում նշել, որ նման հրաման, առանց բանակի գլխավոր հրամանատարության հետ համաձայնեցնելու, չէր տրվում: Բացի այդ, նման կարգի հետախուզական գեկույցը պարտադիր ճշտվում էր Կովկասյան բանակի դաշտային շտաբի համապատասխան ծառայության կողմից»<sup>2</sup>:

Այդ տեսակետին է նաև պատմաբան Ավ. Հարությունյանը, որը գործնականում փաստում է Տ. Դևոյանցի կողմից ռուսական գորքերի անսպասելի և անբացատրելի նահանջի հետ կապված թուրքական ուժերի և գործողությունների մասին իր կողմից իբր թե ոչ ճիշտ տեղեկությունների հաղորդման պատճառով Տարոնի շրջանի հայության բնաջնջման հերքումների վերաբերյալ<sup>3</sup>:

Այդուհանդերձ, այս ամենից հետո Տիգրան Դևոյանցը ամենևին էլ չի վիստվում և հետազայում էլ համառորեն և նպատակասլաց շարունակում է իր հետախուզական գործունեությունը՝ անցնելով նոր և դժվարին փորձությունների ճանապարհով:

---

<sup>1</sup> Մահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 86-87:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 87:

<sup>3</sup> Տե՛ս Հարությունյան Ավ., նշվ. աշխ., էջ 187:



Տիգրան Դեվոյանց



Գեներալ Անդրանիկ Օզանյան




Գեներալ Պյոտր Օզանովսկի



Վլադիմիր Օզոլ



Կարո Սառուճի



Վահան Փափազյան



Ռուբեն Տեր-Մինասյան



Դրո (Դրաստամատ Կանայան)

### 3. Տիգրան Դևոյանցը Առաջին Հանրապետության հռչակման նախօրյակին

Երևանի ռուսական գիմնազիայի նախկին սան, «Բորեաս» մարտական խմբի նախկին անդամ Տ. Դևոյանցը 1916-1917 թթ. ծառայության էր անցել Երզնկայի ճակատում տեղաբաշխված գեներալ Կալիտինի գլխավորած 2-րդ կորպուսի հետախուզական բաժնում դառնալով նրա աշխատակիցներից<sup>1</sup>: Հարկ է ասել, որ ռուսական զորքերի կողմից Կարինի, Երզնկայի ու Բաղեշի գրավումից հետո գեներալ Թ. Նազարբեկյանը Հայոց ազգային բյուրոյի հրահանգով այդ ժամանակ Թիֆլիս գործուղված Սեբաստացի Մուրադին<sup>2</sup> և Մեպուհին ավելի պատասխանատու և վտանգավից առաջադրանք տալիս՝ մեկնել Երզնկա և Բաբերդ, որտեղ գործի բերումով գտնվում էր նաև ռազմաճակատում տեղի ունեցող իրադարձություններին և ռուսական բանակի շտաբի անցուղարձին

---

<sup>1</sup> Տե՛ս **Գևորգյան Հ.**, Սեբաստացի Մուրադ, էջ 224:

<sup>2</sup> **Սեբաստացի Մուրադ (Խրիմյան Մուրադ Գևորգի, Հակոբյան Մուրադ** - 1874 – 4.08.1918 թ. օգոստոսի 4) - 1903 թ. Թորգոմի «Մրրիկ» հեծելախմբի կազմում ղեկավար, մասնակցություն է ունեցել Սասունի 1904-ի ինքնապաշտպանությանը: Օգոստոսին Սասունի կռիվող ուժերի հետ նահանջել է Վան և անցել Կովկաս: 1905–1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ Ջանգեզուրում կազմակերպել է հայերի ինքնապաշտպանությունը: Երիտթուրքական հեղաշրջումից (1908 թ.) հետո անցել է Տարոն, ապա մեկնել Սեբաստիա՝ մինչև 1915 թվականը, Սամսունով անցել Բաթումի: 1916 թվականին Երզնկայում Մեպուհի հետ ձեռնարկել է «Մեկ հայ, մեկ ոսկի» հիմնադրամը: 1918 թվականին՝ Կովկասյան ռուսական ռազմաճակատի քայքայումից հետո, գլխավորել է Երզնկայի մարտերը, կազմակերպել տեղի հայության գաղթ-նահանջը: 1918 թ. կեսերին վերադարձել է Բաքու, որտեղ Ռոստոմի և Ստ. Շահումյանի ղեկավարությամբ կռվել է թուրք-թաթարների դեմ և զոհվել: Տե՛ս Հայկական համառոտ հանրագիտարան. հատոր 3, Եր., Հայկ. Հանր. գլխ. խմբագր., 1999, էջ 805: <http://www.haymard.am/index.php/persons/p1389207196# sthash.0xo6dmyX.dpuf>:

քաջատեղյակ Տիգրան Դևոյանցը, ինչի մասին վկայում է նաև Սեպուհը<sup>1</sup> (Արշակ Ներսեյան)<sup>2</sup>: Դևոյանցի վկայությամբ, ինքը Սեբաստացի Մուրադի հետ ծանոթացել էր Երզնկայում. «Երկու տարիի չափ Երզնկայի մէջ միշտ տեսնում էի Մուրադի հետ: Յեղափոխութիւնից յետոյ, երբ ռուսական զօրքերը հեռացան ճակատից, Մուրադը մի խումբ քաջերի հետ մնաց Երզնկայի մէջ՝ մինչև վերջին բռպէն կռուելով տաճիկ աւելի գերազանց բանակի դէմ, ապա կռուվ յետ նահանջեց»<sup>3</sup>:

Տ. Դևոյանցի, Սեբաստացի Մուրադի, Սեպուհի Երզնկայում և Բաբերդում գտնված ժամանակ թուրքական զորքերի հրամանատարությունը ծավալել էր ակտիվ գործունեություն՝ հարյուրավոր լրտեսներով հեղեղելով տարածքը: Թուրքերը նրանց գլխին որպէս ղեկավար դրել էին գնդապետ Հայրի բեյին, որին ռուսական զորքերի թաթարական ծագում ունեցող հրամանատար Կալիտինը նշանակում է Երզնկայի քաղաքագլուխ: Վերջինիս աջակցությամբ Հայրի բեյը Երզնկայի գավառի բնակավայրերում տեղաբաշխում է թուրք սպաների, որոնք անպատիժ և առանց լուրջ խոչընդոտների թուրքական բանակի հրամանատարությանը անընդմեջ տեղեկացնում էին Երզնկայից մինչև Էրզրում ընկած տարածքում կատարվող ռազմաքաղաքական իրադարձությունների մասին. «Թուրքական լրտեսության կեդրոնը դաձավ, Էրզրումէն վերջ՝ Երզնկան: Եվ ամբողջ գավառին մէջ, իւրաքանչիւր գիւղամասում, նստած էին մեկ-մեկ թուրք սպաներ ու անարգել կը դրկէին իրենց սուրհանդակներից թուրք բանակի հրամանատարութեանը»<sup>4</sup>: Ե՛վ Դևոյանցը, և՛ Սեբաստացի Մուրադը տեղյակ էին Հայրի բեյի լրտեսական քայքայիչ

---

<sup>1</sup> **Սեպուհ (Արշակ Ներսեյի Ներսեյան, 20.04.1872–31.07.1940)** – ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ, հայդուկապետ, ՀՅԴ անդամ: Մասնակցել է 1904 թ. Մասունի ապստամբությանը: Առաջին աշխարհամարտի տարիներին եղել է Անդրանիկի գլխավորած Կամավորական 1-ին զորագնդի 2-րդ վաշտի հրամանատարը: Մասնակցել է Խոյի և Դիլմանի, ինչպես նաև 1918 թ. մայիսի Սարդարապատի ճակատամարտերին: Գործուն մասնակցություն է ունեցել 1920 թ. մայիսյան բոլշևիկյան ապստամբության ճնշմանը: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո հայտնվել է տարազորության մեջ:

<sup>2</sup> Տե՛ս **Սեպուհ**, Էջեր իմ յուշերէն. Հատոր Ա, Պոսթըն, տպ. «Հայրենիք», 1925, էջ 422-423:

<sup>3</sup> **Ղեյլեանց Տ.**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1943, № 3, մայիս-յունիս, էջ 99:

<sup>4</sup> Տե՛ս **Գևորգյան Հ.**, Սեբաստացի Մուրադ, էջ 225:

գործունեության, ռուսական բարձրաստիճան սպաներին կաշառելու մասին, որի վերջնանպատակը ռազմաճակատում տիրող իրավիճակի ապակայունացումն էր: Տ. Դևոյանցի վկայությամբ, այդ հանգամանքը խիստ զայրացրել էր Սեբաստացի Մուրադին. «Մուրատ այդ ժամանակ Երզնկա էր: Նա իր մագերը կը փետտեր կատաղութեամբ, տեսնելով ռուս «ազատարար» բանակի պետին վերաբերմունքը հանդէպ հայ բեկորներուն, իր զգուանքը կը յայտնէր Կալիտինի ու Խայրի պէլին մասին եւ միջոց կը փնտտեր վերջ տալու այդ խայտառակութեանց»<sup>1</sup>:

Այս ձեռնարկումները կարող էին ավելի շոշափելի լինել, եթէ չլինէին Կալիտինի և նրա նմանների կողմից հայերի առաջ հարուցվող խոչընդոտները: Տ. Դևոյանցի հաղորդած տեղեկություններից ակնհայտ է դառնում, որ գեներալ Կալիտինը չհամակրելով հայերին, չէր պաշտպանում Սեբաստացի Մուրադի և այլ հայ հայրուկապետների ձեռնարկած գործողությունները, այդ թվում Երզնկայի շրջանում կուտակված անպաշտպան և սովալլուկ գաղթականությանը, այլ միտումնավոր արգելքներ էր հարուցում. «Զօր. Կալիտին,- վկայում է Տիգրան Դևոյանցը,- չէր բավականանար միայն Խայրի պէլով: Նա նշանակեց ռուս գնդապետ Կուլիկովին, ծագումով մահմեդական չերքեզ, որպէս Տերսիմի գավառապետ: Իսկ իշխան Պարժեմոկովին, նախկին ռուսական փոխհյուպատոս, կրոնքով մահմեդական, դարձեալ Կալիտինի կողմէ նշանակուեցավ Քորփուսի շտապի անուամբ դիւանագիտական յարաբերութիւններ վարելու քիւրտ ցեղապետներուն հետ: Այդ երկուսին յանձնուեցան միաժամանակ վարելու հետախուզական գործը Քորփուսի Շտապի կողմից»<sup>2</sup>: Տ. Դևոյանցը նաև փաստում է, որ այդ նույն գեներալ Կալիտինի և նրա սպայակույտի պետ Լաստոչկինի կողմից Երզնկայի ոստիկանապետ է նշանակվում «լրտես-մահմեդական Լորդկեպանիձեն»<sup>3</sup>: Այդ ամենի նպատակն էր կանխել նաև քրդերի միջոցով տեղեկատվություն ձեռք բերելու և քրդերի հետ եզրեր գտնելու հայ հետախույզների փորձերը, որի ուղղությամբ Սեբաստացի Մուրադը բավականին ջան-

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 226:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 228:

<sup>3</sup> Տե՛ս **Դեյեանց Տիգրան**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1943, № 3, մայիս-յունիս, էջ 100:

քեր գործադրեց: Այդ մասին է կրկին փաստում Տիգրան Դևոյանցը. «Քանի-քանի անգամ գեներալ Կալիտին հրահանգ է տուել սահմանապահ զինվորներին՝ պարզելու հայերի անցքը դեպի ռուսական սահմանը, բայց մենք միշտ հաջող էր ենք հրամանը անմիջապես փոխել տալու, յենուելով հետախուզության անհրաժեշտության վրայ»<sup>1</sup>:

Տ. Դևոյանցի հաղորդած վկայությունների համաձայն՝ Երզնկայում և նրա շրջակայքում վխտում էր թուրք գործակալների ցանց, որոնց հայտնաբերումը և նրանց կողմից ձեռնարկվող քայլերի կանխարգելումը, ինչպես նաև վնասազերծումը դարձավ օրակարգային խնդիր Մեքաստացի Մուրադի և նրա համախոհների համար. «...այդ լրտեսական ցանցի աշխատանքներուն լուսաբանութեան մեջ շատ խոշոր դեր կատարեց Մուրատ...»<sup>2</sup>:

Երզնկայում հետախուզության ծավալման ուղղությամբ ջանքերն ավելի արդյունավետ են դառնում, երբ հենց ինքը՝ Տիգրան Դևոյանցը ստանձնում է Կովկասյան բանակի շտաբի հակահետախուզական բաժանմունքի պետի պաշտոնը: «Այդ միջոցին էր, - իր հուշերում ներկայացնում է Տ. Դևոյանցը, - որ պարզուեցան Երզնկայի շրջանի թուրք լրտեսական գործունեության բոլոր մանրամասները:

Խորհրդակցութեամբ եւ օժանդակութեամբ Մուրատի ու իր ընկերներու, ձերբակալուեցան Էրզրումի եւ Երզնկայի մօտ 800 հոգի (ականավոր թուրքեր), որոնք կը մեղադրուէին փաստաթուղթերով, որպէս թրքական լրտեսներ եւ բոլորը տարուեցան Թիֆլիսի Մետեխի բանտը, ուր Արտակարգ դատարանի կողմէ տասնեակ քննիչներ յատկապէս զբաղված էին այդ գործի քննութեամբ»: Դևոյանցի այդ հուշագրությունից նաև պարզվում է, որ Վրաստանի անկախության հռչակումից հետո վրաց կառավարության որոշմամբ Մետեխի բանտում բանտարկված բոլոր թուրք և վրացի լրտեսները ազատ արձակվեցին<sup>3</sup>:

Էրզրումում Դևոյանցը օգտաշատ գործունեություն է ծավալում՝ տարածաշրջանի մասին հավաքելով մեծ արժեք ներկայացնող տեղեկություններ: Էրզրումում ստեղծվում է Հայ զինվորական խորհուրդ, որը

---

<sup>1</sup> Տե՛ս **Գևորգյան Հ.**, Մեքաստացի Մուրադ, էջ 229:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 228:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 230:

պետք է կառավարեր ամբողջ Կովկասյան ճակատը սեփական՝ հայկական ուժերով: Իր հուշագրության մեջ Տ. Դևոյանցը գրում է, որ ինքը կարգադրում է ձերբակալել Էրզրումցի 6 հայտնի տաճիկ պարագլուխների (Գեռնուզ Օղլու Ալի Էֆենդի, Պուլչի, Մազար Արշալի Մեվլուդ, Գանդո Ջադե և ուրիշներ), որոնք մեղադրվում էին հայկական կոտորածների կազմակերպման մեջ, և նրանց հանձնում է զինվորական դաշտային դատարանին, որի վճռով էլ նրանք կախաղան են բարձրացվում: Այնուհետև Դևոյանցը նշում է ևս մեկ գործողության մասին. «Էրզրումը գրաւելուց երեք օր յետոյ, ձերբակալեցի քաղաքի մէջ Էրզրումի ամրութեանց հրամանատարին, իր աստրացի կնոջ (ռուսական օրենքով, պատերազմի միջոցին, առաջնակարգ բերդաքաղաքի մէջ թշնամի պետութեանց հպատակները չեն կարող ապրել) և ուղարկեցի գերի, հակառակ այն բանին, որ մի օր առաջ բանակի հրամանատար գոր. Իդենիչը, Էրզրում այցելելիս, նրան վկայական էր տուել, որպէսզի ոչ ոք չհամարձակէր դիպչել այդ ընտանիքին»<sup>1</sup>:

Ինչպէս պարզվում է իր իսկ Տ. Դևոյանցի թողած գրառումներից, փաստերի մեկ այլ համադրությամբ, նրա կողմից Էրզրումում հրապարակավ կախաղան են բարձրացվել 11 բարձրաստիճան թուրքեր, ինչպէս նաև հազարավոր տաճիկներ արտորվել են: Միաժամանակ, ինչպէս փաստում է ինքը՝ Տ. Դևոյանցը, հետախուզական մարմնի մի շարք աշխատակիցներ օգտագործելով կեղծված վկայականներ, իր անունից ձերբակալություններ են կատարել և կաշառքի դիմաց նրանց բաց թողել: Հենց այս հանգամանքը նկատի ունենալով, Դևոյանցը նաև վկայում է, որ նմանատիպ վարկաբեկիչ գործողությունները կանխելու նպատակով իր կողմից առգրավվել են կեղծ վկայականները և դրանց տերերը վտարվել են Էրզրումից<sup>2</sup>:

Այն բանից հետո, երբ Դևոյանցը դառնում է Կովկասյան բանակի սպայակույտի հակահետախուզական բաժանմունքի պետ, համապատասխան միջոցառումներ է ձեռնարկում՝ ձերբակալելով Երզնկայի շրջանի՝ հակառակորդի գրեթե բոլոր լրտեսներին, որոնց գործի քննու-

---

<sup>1</sup> **Դեյեանց Տիգրան**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1943, № 3, մայիս-յունիս, էջ 100:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱՍ, Ֆ.Պ – 1457, ց. 2, գ. 22, թ. 18:



թյամբ Թիֆլիսում զբաղվում են 65 քննիչներ, սակայն հետագայում այդ գործակալները կասկածելի հանգամանքներում ազատ են արձակվում<sup>1</sup>: Ըստ երևույթին՝ դա պայմանավորված էր վրացական կողմի ցանկությամբ՝ չվտանգել վրաց-թուրքական բավականին շահավետ բարեկամական կապերը:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Բաբերդ-Երզնկայի շրջանում և առհասարակ Արևմտյան Հայաստանի՝ Ռուսաստանի կողմից գրավյալ տարածքներում նոր իրավիճակ է ստեղծվում, որ նոր խնդիրների առաջ է կանգնեցնում թե՛ Դևոյանցին և թե՛ հայության ճակատագրով շահագրգիռ կուսակցական-քաղաքական, ռազմական այրերին: Գեներալ Կալիտինին փոխարինած գեներալ Լիախովը (Լյախով)<sup>2</sup>, որը Թեհրանում գտնվող ռուսական զորքերի հրամանատարն էր, զինաթափում և անձնատուր է անում Իրանի մայրաքաղաքը գրաված հանրահայտ Եփրեմ խանին: Այդ մասին է փաստում Ս. Դևոյանցը. «Այդպիսով, Լիախովը հիմք ուներ հայատեաց լինելու եւ այդպես ալ կը ճանչցուր»: Սակայն հետո նրա մասին կարծիքը փոխվում է, երբ նրա գործունեության դաշտը տեղափոխվում է Երզնկայի շրջան, որտեղ նրա հետ առիթ են ունենում գործի բերումով հանդիպել թե՛ Դևոյանցը, և թե՛ Սեբաստացի Մուրադը, որոնց գնահատմամբ Լյախովը ռուսական զորքին նվիրված փորձառու զինվորական էր, որը, արագ կողմնորոշվելով օրեցօր բարդացող իրադրությունում, ջանքեր գործադրեց կանխելու հոկտեմբերյան հեղափոխությամբ կամ շրջադարձով պայմանավորված ռուսական զորքերի քայքայումը: Նա վստահություն ներշնչեց նաև Ս. Դևոյանցին ու Սեբաստացի Մուրադին, ինչի մասին Ս. Դևոյանցը վկայում է. «ու երբ տեսաւ ռուս զորքերի բարոյալքումը, քանի մը անգամ կանչեց ինձ ու Մուրատին եւ արտասուքն աչքերին, միջոցներ կը խորհեր ռազ-

---

<sup>1</sup> **Դևոյանց Ս.**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1944, № 3, մայիսյունինս, էջ 96:

<sup>2</sup> **Լյախով (Լիախով) Կալիտինի Պրատոնի** [20.06.1869 -30.04.1920] – ռուսական բանակի գեներալ: 1917 թ. մարտի 12-ից I Կովկասյան բանակի հրամանատար, 1918 թ. մինչև 1919 թ. ամառը ծառայել է Ռուսաստանի հարավի զինված ուժերում՝ գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակում: Սպանվել է Բաթումիում: Տե՛ս **Գանի Ա. Բ.**, նշվ. աշխ., էջ 241, 427: **Залесский А. К.**, Кто был кто в Первой мировой войне. Биографический энциклопедический словарь, М., изд-во «Астрель», 2003, с. 379-380:

մաճակատը պահպանելու սոսկ հայկական ուժերով»<sup>1</sup>: Արդյունքում, գեներալ Լյախովը, իրատեսորեն գնահատելով Կովկասյան ռազմաճակատում ստեղծված շատ բարդ և խճճված իրավիճակը, համագործակցության լավ եզրեր ստեղծեց հայկական զորաջոկատների հրամանատարների, ինչպես նաև հետախուզության գործով բանխմաց սպաների, այդ թվում Տիգրան Դևոյանցի հետ:

Դա բարդ ժամանակաշրջան էր, երբ թուրքական կողմը, օգտվելով Ռուսաստանում օրեցօր խորացող քաղաքական քառսից և անկայունությունից, ռուսական զորքերի թիկունքում իր գործակալական ցանցի և մահմեդական բնակչության և մասնավորապես քրդերի ու նրանց ցեղապետերի սադրիչ աջակցությամբ քայքայիչ հետախուզական գործունեություն էր ծավալել Արևմտյան Հայաստանում՝ Երզնկայում, Բաբերդում, Էրզրումում և այլուր, ինչպես նաև քրդական հեծելախմբերի միջոցով ելուզակային հարձակումներ էր կատարում հայ ազգաբնակչության վրա, որին նպաստում էին նաև ռուսական կազմալուծվող բանակի հրամանատարության անկամ գործողությունները և իրադրությամբ պայմանավորված զանգվածային չափեր ընդունող դասալքությունը, հեղափոխական խմորումները: Թուրքական գործակալները, սողոսկելով Երզնկա, Բաբերդ և Արևմտահայաստանի մյուս քաղաքները, ակտիվ քարոզչություն էին ծավալում քուրդ ցեղապետերի և առհասարակ մահմեդական բնակչության շրջանում՝ աշխատելով առաջ բերել ակտիվ հակահայկական տրամադրություններ, նպաստելով բանակային զորամասերում բուն դրած չարորակ դասալքության խորացմանը, քրդերին դրդում թալանչիական և կողոպտիչ հարձակումների հայ ազգաբնակչության վրա: Այդ իրավիճակում, անշուշտ, Սեբաստացի Մուրադի և այլոց կողմից ջանքեր ձեռնարկվեցին՝ կարգավորելու հարաբերությունները քուրդ ցեղապետերի հետ, և եթե հնարավոր լիներ՝ նրանց հետ հաստատել բարիդրացիական հարաբերություններ, ինչի մասին վկայում է Տ. Դևոյանցը. «Տերսիմի ցեղապետներուն հետ լավ յարաբերութիւններ ունէինք եւ նրանց միջոցով Մուրատին յաջողուեց բերել տալ Երզնկա, Տերսիմի վրայով, բազմաթիվ հայեր: Մուրատ հին կապեր ու ծանոթութիւններ ունէր քիւրտ ցեղապետներուն հետ, բան մը, որ

---

<sup>1</sup> Գևորգյան Հ., Սեբաստացի Մուրադ, էջ 230-231:

շատ նպաստեց հայ գերիներու ազատագրութեան գործին»<sup>1</sup>: Տ. Դևոյանցի հուշերից երևում է, որ նա ևս նման ռազմավարության կողմնակից էր և շատ ծանոթություններ ուներ քրդերի շրջանում, որոնք հաճախ օգտակար էին լինում, այդ թվում հետախուզական նպատակներով, չնայած դա միշտ չէ, որ հաջողվում էր: Հետախուզական գործը ըստ ամենայնի կարևորվում էր թե՛ Սեբաստացի Մուրադի և թե՛ առավելապես Տ. Դևոյանցի կողմից, որն այդ գործի նվիրյալն էր և պատրաստակամ օգտագործելու ցանկացած հնարավորություն, այդ թվում քրդերի հետ կապերը հետախուզիչ նպատակներով: Այդ մասին Դևոյանցը փաստում է. «Յարաբերութիւններ կը մշակէինք Տերսիմի քիւրտ ցեղապետներուն հետ, տալով նրանց նուերնէր, օգտագործելով զանոնք հետախուզութեան համար: Բացի Քրդի շրջանի ցեղապետ Մեմեդ աղայից, որ տաճիկների կողմն էր»<sup>2</sup>:

Սակայն մեծ արդյունքի չի հաջողվում հասնել, և քրդերի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու և նրանց հետ համագործակցության հասնելու ճիգերը ձախողվում են, որին էապես նպաստում են նաև թուրքական գործակալների պառակտիչ և սադրիչ գործողությունները, ինչպես նաև թե՛ քրդերի և թե՛ հայերի շրջանում բուն դրած կաշառված մատնիչները, որոնք օգտագործվում էին հետախուզական նպատակներով՝ նրանց միջոցով տեղեկանալով դիրքերում իշխող վիճակի, գորաջոկատների քանակի և թույլ կետերի մասին: Ցավոք սրտի, չի հաջողվում դրանց դեմ արդյունավետ հակաքայլեր ձեռնարկել, սանձահարել քրդական հրոսակախմբերին և նրանց միացած թուրք ավազակախմբերին, որոնց դեմ համապատասխան հակաքայլեր ձեռնարկելու անհրաժեշտության մասին վկայում է Երզնկայի գորախմբի հրամանատար, գնդապետ Ն. Մ. Մորելը<sup>3</sup>. «Մեր ազենտների տե-

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 261:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 262:

<sup>3</sup> **Մորել Նիկոլայ Միխայիլի** [03.11.1869- 08.12.1920] – ռուսական բանակի՝ ծագումով ֆրանսիացի սպա, 1917-1918 թթ. եղել է Անդրկովկասում և Արևմտյան Հայաստանում: 1917 թ. փետրվարի 13-ից Կովկասյան 27-րդ հրաձգային հայկական գնդի հրամանատարն էր: Այնուհետև նա ծառայել է Ռուսաստանի Հարավի զինված ուժերում՝ գեներալ Ա. Դենիկինի Կամավորական բանակում [28.04. 1919 թ. -1920 թ.]: 1920 թ. նոյեմբերի վերջերին Նովո-Դնիստրովկա գյուղի մոտ գերի է ընկել և այնուհետև հանիրավի գնդակահարվել

ղեկությունների համաձայն թուրքերը յարձակում են կազմակերպում Երզնկայի վրայ, քրտերի եւ տեղական թուրք բնակչության օգնությամբ: Յարձակմանը մասնակցող քիւրտերի թիվը հաշւում են 3000, իսկ ասկերանների թիւը 23 հազար հոգի: Նոյն տեղեկությունների համաձայն, Երզնկայի եւ Մամախաթունի միջեւ էտապային ճանապարհներին կից գտնուած գիւղերում հաւաքւում են զինուած քիւրտեր: Վաղուանից սկսում ենք աստիճանաբար Եփրատի այն կողմը տեղահանել քիւրտերին յիշեալ ճանապարհին կից գտնուած բոլոր գիւղերից, սկսած Երզնկայի մօտիկ վայրերից»<sup>1</sup>: Նմանատիպ փաստի ենք հանդիպում Մեպուհի հիշողություններում, որը Տ. Դևոյանցի հետ ունեցած 1917 թ. կեսերի մի հեռագրակապում անդրադարձել էր Երզնկայի շրջանում թուրքական նոր ակտիվացմանը և այդ խնդրում ավելի լիարժեք տեղեկատվություն ձեռք բերել. «...նուս զինուորներու մեկնումով մեր գործերը կը սկսէին դժուարանալ:

Կը սպասենք նոր ուժերու, բայց ոչ ոք եկած է դեռ: Գալով Երզնկայի, տեղեկութիւն ստացանք, որուն համաձայն Գնդ. Մորէլ եւ Մուրատ մի քանի փոքրիկ ընդհարումներ ունեցեր են թուրք առաջապահ զինուորներու հետ: Տեղեկագիրը կըսէ թէ խուզարկուներու բերած լուրերու համեմատ, թուրքերը կը կազմակերպուին մեծ ուժերով յառաջանալու եւ կ'արհամարհեն Պրեսո-Լիթովսքի դաշնագիրը: Ահա այս է վերջին լուրը Երզնկայէն: Անշուշտ լսած կը լինիս դէպի Երզնկա օգնական ուժերու առաքման անյաջող պարագան»<sup>2</sup>: Մեպուհը նաև վկայում է այն դժվարին կացության մասին, որում հայտնվել էր հայկական փոքրաքանակ զորուժը ի դեմս Բրեստ-Լիտովսկի պայմանագրով ակտիվացած և մոլեգնած թուրքական մեծաքանակ զորքի, որը դուրս էր եկել թաքստոցներից և իրական սպառնալիք դարձել արդեն Արևելյան Հայաս-

---

կարմիրբանակայինների կողմից: Հարկ է ավելացնել, Երզնկայում հենց գնդապետ Ն. Մորէլը և Մեքաստացի Մուրադը կարողացել էին հաստատել մի յուրահատուկ «Հայկական իշխանություն»: Գնդապետ Ն. Մորէլը Մեքաստացի Մուրադի այսպես կոչված «աջ բազուկն» էր: Տե՛ս **Գանյա Ա. Բ.**, նշվ. աշխ., էջ 285, 449: **Չելեպյան Անդրանիկ**, Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը. Կենսագրական ակնարկ, Եր., «Արևիկ» հրատ., 1990, էջ 416:

<sup>1</sup> «Հորիզոն», Թիֆլիս, թիվ 15, 1927:

<sup>2</sup> **Մեպուհ**, էջեր իմ յուշերէն, Հատոր Ա, էջ 423:

տանի փոքրիկ հողակտորի վրա ծվարած և եղեռնից մազապուրծ հայության բեկորների վրա. «...թէ Մուրատ կը շարունակէ փոքրիկ ընդհարումներ ունենալ եւ կը խնդրէ, որ Բաբերդէն օգնական ուժ դրկւի իրեն: Մուրատ յատկապէս խնդրած էր..., որ կացութիւնը հաղորդէ Մեպուհին եւ ըսէ, որ իրերը հետզհետէ կը վատթարանան, քանի որ ոչ մի տեղէ օգնական ուժեր չեն դրկուիր Երզնկա»<sup>1</sup>:

Տիգրան Դեոյանցի գործունէության այդ փուլը լի է հիշարժան փաստերով և իրադարձություններով: Երբ 1918 թ. ապրիլի 25-ին Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի հիման վրա դատարկվում է Կարսի մարզը, ռազմաքաղաքական իրադրությունը դասավորվում է ոչ ի նպաստ հայերի: Վրացիները այդ շրջանում սկսում են կատարել «տրոյական ձիու» դեր, որի մասին հիշատակում է Տ. Դեոյանցը. «Այստեղ շատ տխուր դեր էին կատարել Չխենկելին եւ զօր. Օդէլելիդչեն (Օդիշելիձէ Իլյա Ջ.<sup>2</sup> - Վ. Վ.): Վերջինս մեղադրում էր արդէն լրտեսութեան մէջ ի նպաստ Գերմանիոյ արեւմտեան ճակատում: Իսկ երբ նա տեղափոխուեց որպէս հրամանատար Կովկասեան ճակատը, ես բռնեցի նրա գաղտնի նամակները, ուղղուած Վէհիբ փաշային, եւ յայտնեցի

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 427:

<sup>2</sup> Գեներալ Ի. Օդիշելիձէն հայտնի է անդրկովկասյան Սեյմի ժամանակից իր պարտվողական ռազմաքաղաքական գործունէությամբ, որի արդյունքը եղավ ռազմավարական կարևորության մի շարք հենակետերի՝ Կարսի և այլ կարևոր քաղաքների ու ամրությունների հանձնումը թուրքերին, որի համար արժանացավ ՀՅԴ խիստ քննադատությանը: Այնուհետև նա դարձավ անկախ մենջևիկյան Վրաստանի ռազմական նախարար, որի առաջին գործերից մեկը եղավ բանտից ազատել 600-700 տաճիկ լրտեսների, բացի մեկ-երկու հոգուց, որոնց հետ Դեոյանցը հանդիպում է 1919 թ.՝ Մետեխի բանտում եղած ժամանակ: **Դեոյանց Տ.**, Գեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1944, թիւ 5 (244), սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 85-86, 1945, թիւ 1 (246), յունուար-փետրվար, էջ 54, «Մշակ», Թիֆլիս, 29. XII. 1918, թիւ 269, 7. I. 1919 թ., թիւ 5, 31. I. 1919, «Кавказское слово», Тифлис, 30. I. 1919, թիւ 10: Ըստ Ե. Ֆ. Լուղշովելյտի, Ն. Ջ. Օդիշելիձէն իր քաղաքական հայացքներով մոտ էր կանգնած վրացական «նացիոնալ դեմոկրատներին», որոնք, գերմանական հետախուզական ծառայությունն էին ներկայացնում: Օդիշելիձէի քույրը Սարդարապատի տխրահռչակ «հերոս» Մեհմեդ Վէհիբ փաշայի կինն էր, որը չի հաստատվում Դեոյանցի վկայությամբ: Ըստ նրա՝ գեներալ Օդիշելիձէն Վէհիբ փաշային ուղարկված նամակում հայտնել էր այն մասին, որ իր քույրը ամուսնացած է Թուրքիայի մեջ մի բժշկի հետ: **Лудмушев Е. Ф.**, Турция в годы Первой мировой войны. Военно-политический очерк, М., 1966, с. 161: **Դեոյանց Տ.**, Գեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1944, թիւ 5 (244), սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 86:

նրա սպայակոյտի պետ զօր. Վիշինսկուն»<sup>1</sup>: Դեռյանցը հայտնում էր, որ Վեհիբ փաշային ուղարկված նամակներից մեկում գեներալ Օդիշելիձեն «յայտնում էր իր բարեկամական կապերի մասին թուրքերի հետ և տեղեկացնում, որ շուտով ռուսները պետք է հեռանան Թուրքիայի սահմաններից»<sup>2</sup>: Դեռյանցը վկայակոչելով նաև Սեպուհին, գրում էր, որ գեներալ Օդիշելիձեն, բացի իր թուրքերի հետ բարեկամություն հաստատելուց, գործնականում նպաստել է, որ, օրինակ, Բայբուրդի սննդամթերքի պաշարները բաժանվեն տեղի թուրքերին, այդ թվում թույլ տվեց, որ սննդի մեծաքանակ պաշարներ, այդ թվում այլուր, միս, նույնիսկ գենք ու ռազամաթերք ընկնեն թուրքերի ձեռքը<sup>3</sup>, ինչը ակնհայտորեն վկայում էր նրա թրքամետության մասին: Դեռյանցը նաև վկայում էր Օդիշելիձեի կողմից ոչ միայն թուրքերին, այլև կովկասյան թաթարներին ցուցաբերվող բացահայտ աջակցության և հովանավորության մասին. «Ձօր. Օդիշելիձեն ոչ միայն թիկունք էր կանգնած բոլոր տաճիկներին, այլ իր բռնած դիրքով, քաղաքականութամբ եւ վարուելակերպով նպաստում էր տաճիկների եւ թուրքերի լրտեսութեան ամբողջ ճակատի վրայ: Նրա բացարձակ հովանաւորութեան տակ էր գտնուում Բագուից եկած եւ Էրզրումի մէջ հաստատուած թաթար բարեգործական միութիւնը զլիսաւորութեամբ Մուսավաթական Մէիդովի: Այդ միութիւնը թրքական հետախուզական մէկ մասնաճիւղն էր Էրզրումի մէջ...

Քանի քանի անգամներ պատրաստուեցի խուզարկել այդ միութեան գրասենեակը եւ ամբողջ կազմով ձերբակալել նրա անդամները: Բայց Օդիշելիձեն միշտ էլ իր արգելքն էր դնում ու խանգարում, հակառակ այն բանին, որ նրա սպայակոյտի պետ զօր. Վիշինսկին համակարծիք էր ինձ հետ...»<sup>4</sup>:

Քանի որ այդ գործերին անմիջական մասնակցություն ունեին նաև վրացիներին հովանավորող գերմանացիները, որոնք կասկածվում էին ռազմական լրտեսության մեջ, ապա նրանց դեմ էլ ձեռնարկվեցին կան-

---

<sup>1</sup> **Ղեիդեանց Տ.**, Դրաստամատ Կանայեան (Դրօ), «Հայրենիք», 1957, թիւ 9, սեպտեմբեր, էջ 15:

<sup>2</sup> **Ղեիդեանց Տ.**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1944, թիւ 5 (244), սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 85-86:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 86:

խարգելիչ քայլեր, որում իր բաժին լուման ներդրեց նաև Դևոյանցը. «Ռուսական բանակի մեջ կային բազմաթիւ ռուսահպատակ գերմանացի զինուորիկներ եւ սպաներ, որոնցից շատերը պատերազմի ընթացքին ձերբակալուեցին եւ կրեցին իրենց արժանի պատիժը: Օրինակ, Երզնկայի մեջ մատակարարութեան բաժնի մեջ պաշտօնավարող մի զինուորական, ծագումով գերմանացի, գաղտնի մելանով գրած էր նամակներ, որոնք երեւան բերուեցին մեր կողմից: Դրանց հիման վրայ ձերբակալուեցին հարիւրաւոր գերմանացի լրտեսներ թե՛ գերմանական, եւ թե՛ կովկասեան ճակատների վրայ»<sup>1</sup>:

Անդրկովկասյան հանրապետությունների անկախության շրջանում Տ. Դևոյանցին նոր փորձություններ էին սպասում: Թիֆլիսում նա այցելում է Հայաստանի Հանրապետության զինվորական ներկայացուցիչ գեներալ Հովսեփ Արտեմի Քիշմիշյանին, որը հայտնում է, թե շուտով պատերազմ են սկսելու վրացիների հետ, ուստի անհրաժեշտ է տեղեկություններ ձեռք բերել վրացական գործերի դասավորության և գորահավաքի, ինչպես նաև վրացական ժողովրդական զվարդիայի քանակի և գործողությունների պլանի մասին: Դևոյանցը արագ գործի է անցնում և օգտագործելով իր բոլոր կապերը Վրաստանի մայրաքաղաքում՝ շտապ ձեռք է բերում անհրաժեշտ տեղեկատվություն, որն էլ Քիշմիշյանը հույժ գաղտնի ծածկագրով ուղարկում է Երևան՝ ակնկալելով, որ այն օգտակար կլինի վրաց-հայկական բախումների ժամանակ<sup>2</sup>:

Այնուհետև Տիգրան Դևոյանցը հայտնվում է Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման գործընթացներում և արդեն որպես փորձառու հետախույզ մասնակցում է հայկական նորաստեղծ պետության հետախուզական ծառայության ձևավորման բարդ, հակասական և չափազանց դժվարին գործառույթներին՝ դառնալով նորաստեղծ ՀՀ Ջինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետերից մեկը, և ծավալում օգտաշատ գործունեություն ի փառս հայրենիքի, հանուն սեփական երկրի բարօրության:

---

<sup>1</sup> Դևոյանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1943, № 3, մայիս-յունիս, էջ 100:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, 1944, № 6 (245), նոյեմբեր- դեկտեմբեր, էջ 80-81:

Հետաքրքիր է նշել, որ մինչև իր հայտնի ուղևորությունը Արևմտահայաստանի քաղաքները և Կ. Պոլիս, Տիգրան Դևոյանցը շատ ծանր փորձության առաջ էր կանգնել Վրաստանում: Տ. Դևոյանցը հետախուզական ծառայության հայտնի դեմքերից էր, կադրային սպա, որը եղել էր Կովկասյան բանակի սպայակոյտի հակահետախուզական բաժնի կարևոր սպաներից, և բնականաբար վրացիները, այդ հանգամանքը օգտագործելով, ինչպես նաև որոշ հին գործեր առիթ դարձնելով, էլ ավելի են շիկացնում իրավիճակը վերջինիս շուրջը: 1918 թ. մայիսյան անկախական գործընթացների օրերին Վրաստանի Հանրապետության տարածքով գնացքով անցնելու ժամանակ Սամտրեդիա կայարանում անակնկալ ձերբակալվում է վրաց միլիցիայի և հատուկ ծառայությունների կողմից՝ վրացական բանակի մատակարարման ճյուղի պետի մատնությամբ, որը ժամանակին Տ. Դևոյանցը հատուկ հրամանով որպես տաճկական լրտես մի շարք այլ անձանց հետ ձերբակալվել էր Երզնկայում: Բանտ փոխադրվելու ճանապարհին Տ. Դևոյանցը հասցնում է ոչնչացնել մի շարք կարևոր գաղտնի փաստաթղթեր, որոնք կարող էին դիվանագիտական բարդությունների առաջ կանգնեցնել ՀՀ ռազմաքաղաքական դեկավար շրջաններին: Տ. Դևոյանցի ձերբակալության օրը «վրաց հեռագրական գործակալությունը բաց էր թողել մի հեռագիր, որով հաղորդում էր թե կապիտան Տիգրան Դևոյեանցը, կովկասեան բանակի սպայակոյտի հակահետախուզական բաժանմունքի նախկին պետը ձերբակալուել է Սամտրեդի կայարանի մէջ, մեղադրուում է լրտեսութեան մէջ եւ պետք է յանձնուի զինուորական դատարանի»<sup>1</sup>:

Նրան տանում են Մետեխի բանտ, որը լեփ-լեցուն էր հայերով: Այնտեղ էին գտնվում նաև մահվան դատապարտված հետախույզ գնդապետ Շմազայրովը և Միխոն (Միխայիլ Քուչարյանց, որն իբր թե «Հայ Յեղափոխական Դաշնակցության անդամ էր, հետևաբար և ըստ վրացիների՝ ահաբեկիչ»)<sup>2</sup>: Նրանք անգլիացիների հրահանգով պայթեցրել էին

---

<sup>1</sup> Նույն տեղում, 1945, № 1 (246), յունուար-փետրուար, էջ 54:

<sup>2</sup> Տե՛ս «Մշակ», 29. XII. 1918, № 269, 7. I. 1919, № 5, 31. I. 1919, № 23, «Աշխատավոր», Թիֆլիս, 3. V. 1919, № 85, «Кавказское слово», Тифлис, 30. I. 1919, № 10, Տե՛ս **Ментешавили**



Մցխեթի բանտի մերձակա Ձեզվիի կամուրջը՝ խոչընդոտելու համար գերմանացիների ակնկալվող մուտքը Թիֆլիս, որի համար ձերբակալվել էին վրաց իշխանությունների կողմից, և 1918 թ. դեկտեմբերին Վրաստանի գերագույն դատարանի կողմից դատապարտվել 12 տարվա տաժանակիր աշխատանքի: Սակայն շուտով վերջիններս Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարությունների և հատուկ ծառայությունների ջանքերով ազատվում են բանտից, իսկ Տիգրան Դեյանցի հարցն ավելի է լրջանում: Նրա մասին շուտով տեղեկացվում է Թիֆլիսում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատար Լևոն Եվանգուլյանին, որը Ս. Դեյանցին Օրթաճալայի բանտը տեղափոխելուց հետո որոշ ջանքեր է գործադրում, որ բանտում բժավոր տիֆով վարակված հիվանդին այցելեն հայ բժիշկներ, այդ մասին տեղեկացնում է Հայաստանի իշխանություններին, զինվորական ու արտաքին գործերի նախարարներին, ինչպես նաև Ս. Դեյանցի հարազատներին ու մտերիմներին, որոնք տեղազգին քայլերի են դիմում՝ բանտից անհապաղ ազատելու նրան և տեղափոխելու Հայաստան<sup>1</sup>: Այսպես, ՀՀ զինվորական նախարարին հասցեագրված հայկական դիվիզիայի պետ, գեներալ-մայոր Մ. Սիլիկյանի 1919 թ. մարտի 1-ի զեկուցագրից (№ 26/19) տեղեկանում ենք, որ Թիֆլիսում վրացական հակահետախուզության կողմից ձերբակալվել է հայկական զորամասերում ծառայող և տվյալ պահին Կամավորական բանակում ծառայության մեջ գտնվող Ս. Դեյանցը՝ կարևոր փաստաթղթերով հանդերձ, հանձնվել է դատի և դատապարտվել գնդակահարության: Մ. Սիլիկյանը հայտնում էր, որ անզլիացիները բողոքել են դատարանի այդ որոշման դեմ, քանզի հայկական իշխանությունները Դեյանցի գործի կապակցությամբ դիմել էին վերջիններիս՝ կարծելով, որ նրանք կարող են ազդել վրացիների վրա՝ Ս. Դեյանցի գործին տալով դրական հանգուցալուծում՝ ազատել բանտից: Դատարանի որոշումը չի կիրառվել Ս. Դեյանցի հիվանդության պատճառով, քանի որ բանտում գտնվելու ժամանակ Ս. Դեյանցը

---

**А. И.**, Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии, 1917-1921, Тбилиси, Изд-во «Ганатлеба», 1987, с. 150:

<sup>1</sup> Տե՛ս **Դեյանց Ս.**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), 1945, № 1 (246), լուսուար-փետրուար, էջ 54:

հիվանդացել է բժավոր տիֆով, ինչի մասին ինքը՝ Ս. Դևոյանցը, վկայում է իր «Կեանքիս դրուագներից» հուշագրությունում՝ նշելով նաև վրացական իշխանությունների բիրտ վերաբերմունքի մասին բանտախցում եղած ժամանակ: Միլիկյանը ցանկանում էր անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Դևոյանցի վիճակը թեթևացնելու համար<sup>1</sup>: Նշված զեկուցագրի վրա մարտի 5-ին զինվորական նախարար գեներալ-մայոր Հ. Հախվերդյանի և շտաբի պետ Մ. Զինկևիչի ստորագրությամբ գրություն է ուղարկվում Արտաքին գործերի նախարարին՝ խնդրելով հարաբերություններ հաստատել անգլիացիների հետ<sup>2</sup> տվյալ հարցի հանգուցալուծումը գտնելու նպատակով: Այդ ընթացքում՝ 1919 թ. մարտի 7-ին, Հայաստանի Արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը Վրաստանի արտգործնախարար Եվգենի Գեգեչկորիին ուղղված հեռագրում խնդրում է կասեցնել դատավճիռը<sup>3</sup>: Սակայն վրացիները մտադիր չէին այդքան հեշտ ընդառաջելու հայկական կողմին: Այսպես, ՀՀ արտգործնախարարին հասցեագրած 1919 թ. մարտի 25-ի հեռագրում (N° 1661), ի պատասխան N° 485 դիմումագրի Վրաստանի Արտաքին գործերի նախարարի օգնական Կ. Բ. Սաբախտարաշվիլին հայտնում էր, որ Դևոյանցը մեղադրվում է ռազմական լրտեսության մեջ, հետաքննությունը չի ավարտվել, և գործը պետք է լավի դատարանի նիստում<sup>4</sup>: Վերջ ի վերջո, ինչպես պարզվում է հենց Տիգրան Դևոյանցի հուշերից, նա փախչում է Թիֆլիսի Մետեխի բանտից<sup>5</sup>: Մինչ այդ նա մի ընդարձակ նամակով դիմում է ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանին՝ տեղյակ պահելով պատերազմական ատյանի զինվորական քննիչ Կեկելիձեի հարցաքննությունների մասին և խնդրելով, որ նա օգնի իր փախուստը կազմակերպելուն՝ այդ նպատակի համար խնդրելով 700 ռուբլի, ինչը վերջինս մերժում է՝ Դևոյանցին համարելով խելագար, երևի թե վախենալով հայ հետախույզի այդ հանդուգն նպատակադրումից և թե-

---

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ - 200, ց. 1, գ. 1, թ. 64: Տե՛ս նաև **Դեյեանց Ս.**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1945, N° 1 (246), յունուար- փետրուար, էջ 54-56:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ - 200, ց. 1, գ. 1, թ. 64 :

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 1, թ. 64, գ. 211, թ. 40:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 1, թ. 111:

<sup>5</sup> Տե՛ս **Դեյեանց Ս.**, Հետախույզի մը յուշերը, «ՎԷՄ», 1938, յունուար - մայիս, թիւ 2, էջ 71:

րևս չհավատալով նման ծրագրերի հաջողությանը: Սակայն վերջ ի վերջո նա էլ է աջակցում Տ. Դևոյանցին նրա փախուստի իրագործման ժամանակ: Վրացական իշխանությունները, անշուշտ, հենվելով իրենց հայտնի որոշ փաստերի վրա, չէին հավատում Տ. Դևոյանցի հավաստիացումներին, որ ինքն անմեղ է և Վրաստանի նկատմամբ վտանգավոր ձեռնարկումներ չունի, ինչն ավելի էր բարդացնում հետախույզի վիճակը և դրդում տենդագին որոնումներ կատարել փախուստի ուղղությամբ: Ի վերջո նրա փախուստի կազմակերպիչներից է դառնում Տ. Դևոյանցի սիրեցյալներից մեկը՝ Ասյան: Օգտագործելով կեղծ փաստաթղթեր, ինչպես նաև կաշառելով բանտի պաշտոնյաներին ու վերակացուներին և վերջիններիս զգոնությունը բթացնելու համար նրանց հավաստիացնելով ինչ-ինչ հարցերում վրացական իշխանություններին օգնելու իր պատրաստակամության մասին, Տ. Դևոյանցը ժամանակ է շահում, շտապ իրականացնում է փախուստը և Ասիայի հետ հայտնվում է Երևան ուղևորվող գնացքում: Այդ մասին նա շատ տպավորիչ գրում է իր հուշերում. «Ինձ տուին քրքրուած բանուորի զգեստ եւ կէս ժամ վերջը այնպէս կերպարանափոխեցին, որ ինձ ճանաչել անկարելի էր: Անունս էր Արամ Ստեփանեան, Երեւանցի, արհեստով հիւսն, բոլոր վիզաները պատրաստ էին Երեւան մեկնելու համար:

Պատռտուած զգեստով, կէպին գլուխս անցկացրած, գոյնգոյն մեծ թաշկինակին մէջ կապոց շինած, դուրսը ցցուած հացով, թելերս անցկացրած եւ միւս ձեռքիս մէջ մի սղոց առած՝ Հաւլաբարից լուսաբացին շարժուեցինք Նավթլուղ: Թիֆլիս հասանք ճիշդ Երեւան մեկնող գնացքի գնալու ժամանակ:...Մէր դիւանագիտական ներկայացուցիչը Վրաստանում՝ Եւանգուլեանը, իրազեկ էր անցուդարձին: Առաջին կայարանից նրան ուղարկուեց պայմանաւորուած հեռագիրը: Ինձ ուղեկցողները, բացի Ասիայից, վերադարձան Թիֆլիս...:

Եւանգուլեանը ծածկագիր հեռագրել էր Երեւան, եւ Հայաստանի հեռագրական գործակալութիւնը իմ Երեւան հասնելուս միջոցին, արդէն բաց էր թողել հետեւեալ հեռագիրը. «Կովկասեան բանակի սպայակոյտի հակահետախուզական բաժանմունքի նախկին պետ՝ կապիտան Տիգրան Դևոյեանցը, որը ձերբակալված էր վրացիների կողմից և մեղադրում էր լրտեսութեան մէջ, յաջող կերպով փախչելով Մեդեխի բան-

տից, հասաւ Երեւան եւ նշանակուեց Հայաստանի բանակի հետախուզական եւ հակահետախուզական բաժնի պետի պաշտօնին»:

Այս հեռագիրը, երբ ստացուել էր Վրաստանում, սկսուել էր քննութիւն: Քննիչը, դատախազը, պատերազմական նախարարութեան ներկայացուցիչները իսկոյն եւ եթ գնացել էին բանտ եւ քննել էին բոլոր թղթերը: Հետեւանքը եղած էր այն, որ հեռացրել էին պաշտօնից բանտապետին, քննիչին ու դատախազին:

Այդ առթիւ Վրաստանի պաշտօնական թերթի՝ «Գրուզիա»-ի մեջ լոյս էր տեսել առաջնորդող մի յօդուած «Կեցցէ Դեւոյեանց» վերնագրով: Յօդուածագիրը յարձակում էր գործադրում բարձր իշխանութեանց վրայ, որ նրանք չէին կարողացել պահել մի կարելոր բանտարկեալ: Այնքան խիստ էր գրուած այդ առաջնորդողը, որ լոյս տեսնելուց յետոյ, ներքին գործոց նախարարութիւնը հրամայել էր հաւաքել թերթի թիւերը կիսակներից:

Երեւան հասնելուն պէս, ինձ կանչեց իր մօտ մեր պատերազմական նախարար գօր. Արարատեանը, որին ներկայացայ ալիւրի տոպրակից կարած բլուզով: Այնտեղ էր նաեւ գօր. Կ., Հայաստանի զինուորական կցորդը Վրաստանում: Նա հանեց իր վրայի սուրը, համբուրեց ինձ եւ յանձնեց իբր նուէր»<sup>1</sup>: Հիրավի, ռազմահայրենասիրական, դաստիարակչական լիցք պարունակող մի ուշագրավ իրադարձություն, որ կարող է զարդարել ցանկացած ժողովրդի պատմությունը<sup>2</sup>:

Առաջին Հանրապետության կայացման ոչ միանշանակ և բարդ ռազմաքաղաքական գործընթացների պայմաններում և մասնավորա-

---

<sup>1</sup> **Ղեյզանց Տ.**, Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», 1945, № 1 (246), յունուար-փետրուար, էջ 59-60:

<sup>2</sup> Հարկ է ավելացնել, որ տաղանդաշատ այս հայ հետախույզի հետագա գործունեության էջերը դեռևս լիովին պարզաբանված չեն, սակայն որոշ կցկտուր փաստեր երբեմն-երբեմն հաջողվում է գտնել, որոնք էլ ավելի ամբողջական են դարձնում նրա ոչ միանշանակ և տեղ-տեղ հակասական դիմանկարի և փոթորկուն հետախուզական կենսագրության ծալքերը: Դատելով որոշ փաստերից ակնհայտ է դառնում, որ Առաջին Հանրապետության անկումից և խորհրդայնացումից հետո Տիգրան Դեյուջանցի անունը (ինչպես նաև հետախույզներ Նազարբեկովի, Դվերնիցկու, Գրիգորի Խաչատուրյանի անունները) հայտնվել է ազատված և ծառայության վայրերում թողնված այն սպաների ցուցակում, որոնք ենթակա էին ուղարկվելու Բաքու՝ հանձնվելով XI Կարմիր բանակի շտաբի տնօրինությանը և հետագա հրահանգներին, ինչից կախված էր նրանց հետագա ճակատագիրը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ - 113, ց. 3, գ. 3, թթ. 40-47, 53, 68-70 և այլն:

պես անցումային 1919 թ. երկրորդ կեսին - 1920 թ. սկզբին, Տիգրան Դեռյանց հետախույզի կողմից իրականացվում են ակտիվ հետախույզական աշխատանքներ Վան-Մուշ-Բիթլիս շրջանում, և որից հետո նա 1919 թ. վերջում-1920 թ. սկզբին ի վերջո հանգրվանում է Կ. Պոլսում<sup>1</sup>, որտեղ կազմակերպում է հետախույզական խումբ, որի ջանքերով էլ հայթայթում է Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից արժեքավոր տեղեկություններ թուրքական գործի թվաքանակի և նախապատրաստությունների, ինչպես նաև հայկական սահմանի ողջ երկայնքով թուրքական գործերի տեղաբաշխման մասին: Տաղանդաշատ և իր սիրած գործին մինչև ուղևոր ծուծը նվիրված հետախույզի գործունեությունը ընդհատվում է Առաջին Հանրապետության մայրամուտով, և ի թիվս այլոց՝ անցնելով ծանր փորձությունների միջով՝ Տ. Դեռյանցը ի վերջո հանգրվանում է հեռավոր Ամերիկայի Միացյալ Նահանգների Բոստոն քաղաքում, սակայն մեզ համար դեռ չպարզված հանգամանքներում նա իր կյանքի վերջնահանգրվանը գտնում է Բելգիայում և այստեղ հրապարակում բարձրարժեք հուշագրություն իր հետախույզական կենսագրության ողիսականի մասին:

ՃՅԴ անդամ Տ. Դեռյանցի կյանքի և գործունեության անհայտ էջերի լուսաբանումը գալիս է լրացնելու այն մոռացված հերոսների դիմապատկերների շարքը, որոնք ունեն գիտաճանաչողական զգալի արժեք: Կարելի է հանգել հետևության, որ Տիգրան Դեռյանցի՝ որպես հայ հետախույզի նկարագրի բացահայտումը լրացնում է այն բացը, որ կա Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական բանակի հետախույզական ծառայության համակարգում գործած և հոգուտ հայերի որոշակի գործունեություն ծավալած անձի վերաբերյալ, ինչն իր բոլոր ելևէ-

---

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Վիրաթյան Վ.**, Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 83-101, 226-238, 591-661 և այլն: **Նույնի**, Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, Եր., 2006, էջ 119-130, 181-182: **Նույնի**, Հայաստանի Հանրապետության հետախույզությունը և բանակը 1918-1920 թթ., Եր., 2009, էջ 34-63: **Նույնի**, Հայկական հետախույզական խմբի գործունեությունը Կ. Պոլսում Տիգրան Դեռյանցի ղլխավորությամբ 1919 թ. Երկրորդ կեսին - 1920 թ. սկզբին: Տե՛ս Տարեգիրք. Բ. (պատմագիտական հանդես), Եր., 2010, էջ 134 -150 և այլն:

ջումներով հանդերձ, այդ թվում և նրա նկատմամբ անապացույց դատաքննական գործընթացով պատմագիտական արժեք է ներկայացնում և ըստ այդմ կարևորվում համաշխարհային պատերազմին հայերի մասնակցության տեսանկյունից:

Տ. Դևոյանցի գործունեության՝ մեր կատարած հետազոտությունը ակնհայտորեն վկայում է, որ թե՛ 1915-1916 թթ. և թե՛ 1918-1920 թթ. վերաբերող արխիվային փաստաթղթերը և վավերագրերը անխոս վկայում են, որ եթե վերջինիս հայթայթած տեղեկությունները իրատեսորեն հաշվառվեին և գնահատվեին, ապա հնարավոր կլիներ խուսափել շատ սխալներից, և կարիք չէր լինի զուր տեղը փորձել մեղքի առյուծի բաժինը բարդել ռուսական բանակի հետախուզական համակարգում անհամեմատ ավելի համեստ աստիճանակարգ զբաղեցրած հետախույզի վրա, ինչպես դա փորձեցին անել գեներալ Պ. Օգանովսկին, Կ. Սասունին և ուրիշներ: Դա ըստ էության ապացուցվեց նաև Առաջին հանրապետության տարիներին, որի ժամանակ Տ. Դևոյանցի և նրա զինակիցների կողմից, մասնավորապես Կ. Պոլսում նրա խմբի ծավալած հետախուզական գործունեության շնորհիվ հայթայթվեցին արժեքավոր տեղեկություններ, որոնք պատշաճ ուշադրության և գնահատման պարագայում կարող էին էապես զգաստացնել սերյան-արևմտյան մտասնեռում որդեգրած ՀՀ քաղաքական-պետական այրերին և նրանց նպատակամղելու ձեռնարկել հարկ եղած ռազմաքաղաքական նախապատրաստություններն ընդդեմ հայկական սահմանի ողջ երկայնքով տեղաբաշխվող և Հայաստանի դեմ պատերազմի նախապատրաստվող թուրքական բանակի: Այդ ամենի մասին մեր հրատարակած մենագրության մեջ<sup>1</sup> ներկայացվել են հետախուզական բնույթի մի շարք արժեքավոր տեղեկություններ և պաշտոնական զեկուցագրեր, այդ թվում՝ Տ. Դևոյանցի կողմից գեներալ Գաբրիել Ղորղանյանին ուղարկված մի շարք շատ արժեքավոր գաղտնի զեկույցներ հայկական պետության սահմանագծի ողջ երկայնքով թուրքական զորքերի հայտնի տեղաշարժերի, թվաքանակի, Թուրքիայում և նրա շուրջ տեղի ունեցող ռազմաքաղա-

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս **Վիրաբյան Վ. Հ.**, Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ. (Հետախուզություն, բանակ և ՆԳՆ), Եր., ԵՊՀ հրատ., 2015:

քական իրադարձությունների և Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված հակահայկական գործողությունների մասին, դրանց մի զգալի մասի հայթայթողը եղել է հենց ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի հանիրավի պախարակվող պետերից մեկը՝ *Տիգրան Թադևոսի Ղևոյանը*:

## ՎԵՐՋԱԲԱՆ

### ՏԻԳՐԱՆ ԴԵՎՈՅԱՆՑԻ ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Վանիկ Վ. Վիրաբյան

Հայկական հետախուզության պատմության մեջ իր անուրանալի վաստակն ունի Տիգրան Թադևոսի Դևոյանցը, որն այդ համակարգի կարկառուն դեմքերից է, նրա ոչ միօրինակ կերպարներից և իրական դեկավարներից մեկը:

Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասյան ռազմաճակատում, ռուսական բանակի 4-րդ կորպուսի հետախուզական բաժանմունքի կազմում ծառայել է հայտնի հետախույզ, ՀՅԴ անդամ Տիգրան Դևոյանցը, սակայն որի նկատմամբ 1920 թ. նոյեմբերին սկսված ՀՅ Դաշնակցության 9-րդ Ընդհանուր ժողովի դատաստանական ատյանի կողմից հարուցվեց դատական գործընթաց: Սակայն Դաշնակցության Ընդհանուր ժողովի դատաքննական ատյանում հոգուտ Տիգրան Դևոյանցի պաշտպանության հանդես եկավ Դրոն (Դրաստամատ Կանայան), հայտարարելով, որ նա մեղավոր չէ 1915 թ. ռուսական բանակի հուլիսյան նահանջի խնդրում, որը կործանարար հետևանքներ ունեցավ հայերի համար: Ըստ այդմ պարզաբանված է նրա դերակատարումը Վան-Մանազկերտ նահանջի ժամանակ, վերհանված են իրարամերժ գնահատականները:

Իսկ արդեն Առաջին Հանրապետության օրոք հայկական հետախուզական ծառայության աշխատակից և նրա ղեկավարներից մեկը, Տիգրան Դևոյանցը գլխավորեց Զինվորական նախարարության Գլխավոր շտաբին առընթեր Հետախուզական և հակահետախուզական բա-



Ժամանակը: Նա 1919 թ. գարնանը գործուղվում է Վան, Մուշ, Բիթլիս, այնուհետև որպես վերջնական նպատակադրում՝ հաստատվում Կ. Պոլսում, որտեղ նրա կողմից կազմակերպվում է հետախուզական խումբ, որը հայթայթում էր Հայաստանի Հանրապետության համար այնքան կենսականորեն անհրաժեշտ տեղեկատվություն հայկական սահմանի ողջ երկայնքով թուրքական զորքերի տեղաբաշխման, նրանց ռազմաքաղաքական նախապատրաստությունների, թվաքանակի և Հայաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված Թուրքիայի պլանների, ռազմական կարողության, տարածաշրջանային կարևոր իրողությունների մասին և այլն:

**Վանիկ Հ. Վիրաբյան** - Պատմական գիտությունների դոկտոր, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի ավագ գիտաշխատող:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը.

1.«ՀՀ պետական անվտանգության համակարգի ստեղծման և զարգացման պատմությունը: Պետական անվտանգության համակարգի պատմաքաղաքական զարգացումները նորագույն ժամանակաշրջանում: Հայկական հետախուզությունը և բանակը 20-րդ դարում - 21-րդ դարի սկզբին»:

2.«Հայ-վրացական միջպետական և ազգամիջյան փոխհարաբերությունները 1917-1923 թթ.: Հայաստան-Վրաստան պատմաքաղաքական փոխառնչությունները և բխումնային սահմանային- տարածքային և այլ իրավիճակները 20-րդ դարում»:

